

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝
Գագիկ Հարությունյան
Վահե Ստեփանյան
Վոլոդյա Հովհաննիսյան
Վալերի Պողոսյան
Առուշան Հակոբյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

5-6)
2016

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- * ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳԱՆԳԱՏՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
Արարատ ԴԱՆԻԵԼՅԱՆ7

• ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1268-1294)

- * ԼԱԼԱ ԱՍԼԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 132-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 136-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1268 - 26 ապրիլի 2016 թվականի)25
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԱՆԱՄԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1269 - 29 ապրիլի 2016 թվականի)38
- * ՔՆԱՐԻԿ ԵՎ ԴԱՎԻԹ ԹԱՀՄԱԶՅԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 601-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1270 - 3 մայիսի 2016 թվականի)52
- * ԼՈՒՍԻԼԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍԱՔԵՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1271 - 10 մայիսի 2016 թվականի)62
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԳՐՈԴՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1272 - 17 մայիսի 2016 թվականի)	75
* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-ԻՆ ԼՅՈՒՔՄԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ6 ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1273 - 31 մայիսի 2016 թվականի)	79
* 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐՅԵՐՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1274 - 31 մայիսի 2016 թվականի)	90
* ԼԻԼԻԹ ՍՈՒՍԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ «Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒՅ ՀԵՏՈ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1275 - 31 մայիսի 2016 թվականի)	94
* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶՐԱԳԱՅՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1276- 3 հունիսի 2016 թվականի)	102
* 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՅ, ԵՎ ՎԻԵՆԱՄԻ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՅ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1277 - 3 հունիսի 2016 թվականի)	106
* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶՐԱԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1278 - 3 հունիսի 2016 թվականի)	112

- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-ԻՆ ԺՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ
 ՄԻՋԵՎ ՎԻՋԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՄԴՈ 1279 - 3 հունիսի 2016 թվականի).....117

- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
 ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ
 ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՑՈՒԹՅԱՆ
 ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՄԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1280 - 3 հունիսի 2016 թվականի)121

- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ԹԵՀՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ
 ԱՌԱՅ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
 ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՄԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
 ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ
 (ՄԴՈ 1281 - 14 հունիսի 2016 թվականի).....126

- * ԼԻԼԻԹ ՄՈՒՍԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ
 ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 32-ՐԴ
 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՄԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1282 - 21 հունիսի 2016 թվականի)129

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ
 ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՄԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1283 - 21 հունիսի 2016 թվականի)140

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
 ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ
 ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ
 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՄԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1284 - 21 հունիսի 2016 թվականի)146

- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1285 - 19 հունիսի 2016 թվականի)152
- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ՄԱԿԱՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՈՅԻ ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՄԻՋԵՎ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՈՒ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1286 - 21 հունիսի 2016 թվականի)155
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ, ԲԱՎՐԱՅԻ ԵՎ ԳՈԳԱՎԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄ)» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԹԻՎ 3 ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1287 - 21 հունիսի 2016 թվականի)160
- * 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ ԲԵՆԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅԱՆ, ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԳԻ ԿԱՄ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1288 - 21 հունիսի 2016 թվականի)164
- * ԳԵՎՈՐԳ ՍԱՅԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 87-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1289 - 23 հունիսի 2016 թվականի).....168
- * ՎԱՐՏԳԵՋ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 207-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 140-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 213-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1290 - 28 հունիսի 2016 թվականի).....179

* ԿԻՄ ՄԻՆԱՍՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 182-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1291 - 8 հուլիսի 2016 թվականի)	191
* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԽԱՂԱՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1292 - 8 հուլիսի 2016 թվականի)	202
* «ԵՐՖՐԵԶ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1293 - 12 հուլիսի 2016 թվականի)	208
* ՄԱՐԵՏԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 249-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1294 - 19 հուլիսի 2016 թվականի)	221

• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ	235
* ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ ՀՀ ՄԴՈՒՄ	235
* ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՅՈՒՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	236
* ՖԻԼԻՊ ԲՈՒԱՅԻԱՆ ՀՀ ՄԴՈՒՄ	237
* ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ	237
* ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ	242
* ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ - ԵՐԿՐՈՐԴ ՕՐ	243
* ՀՅՈՒՐԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	247
* ՀԱՄԱԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	248

Արարատ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԼՂՀ արդարադատության
նախարար, Ի. Գ. Թ.

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳԱՆԳԱՏՈՎ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ**

Սահմանադրական արդարադատության զարգացման ժամանակակից հիմնախնդիրները կապված են սահմանադրական դատարանի որոշումների իրավական նշանակության ու դրանց կատարումն ապահովելու հետ:

Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը սահմանադրական արդարադատության տեսության և պրակտիկայի կարևոր հիմնախնդիրներից մեկն է: Եթե Սահմանադրական դատարանի որոշումները չեն կատարվում կամ կատարվում են ոչ պատշաճ ձևով, ապա ուղղակի խաթարվում են այն նպատակները, որոնց ծառայում է սահմանադրական արդարադատությունը իրականացնող մարմինը: ԼՂՀ-ում այդ նպատակները ամրագրված են Սահմանադրության 113-րդ հոդվածի 3-րդ կետով և «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, այն է՝ ապահովել ԼՂՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Այսինքն՝ սահմանադրական արդարադատության իմաստը Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է:

«Տարբեր երկրներում այս խնդրի հրատապության աստիճանն զգալի չափով պայմանավորված է սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակով, անհատական դիմումների ինստիտուտի բնույթով, դատավարական մի շարք առանձնահատկություններով, նշում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը: Այն երկրներում, որտեղ սահմանադրական բոլոր ինստիտուտների ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ են, առկա է լիարժեք անհատական դիմումների համակարգ, սահմանադրական դատարանը լուծում է նաև իշխանության սահմանադրական

լիազորությունների հարցով առաջացած վեճերը և ունի սահմանադրական վերացական մեկնաբանության լիազորություն, առավել հստակ ու որոշակի են սահմանադրական դատարանի տեղն ու դերը ներպետական իրավական ակտերի համակարգում»:¹

Սահմանադրական դատարանի որոշումների կատարման միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է նրա բազմազանության և հակասական լինելու մասին: Կարող ենք օրինակ բերել ինչպես սեփական, այնպես էլ այլ երկրների փորձը: Օրինակ՝ ԼՂՀ Գերագույն դատարանի 2009թ. հունիսի 30-ի որոշմամբ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները ԼՂՀ Սահմանադրության 33-րդ, 34-րդ /2-րդ մաս/, 39-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների իրականացման արգելափակման առումով ճանաչվել է Սահմանադրության 2-րդ, 5-րդ, 7-րդ /1-ին, 2-րդ մասեր/, 20-րդ, 52-րդ և 60-րդ /կետ 1,2,16/ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր, որը 2009թ. նոյեմբերի 25-ին Ազգային ժողովի կողմից ՀՕ-60-Ն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել: ՀՀ Սահմանադրական դատարանը 2012թ. մարտի 6-ի ՍԴՌ-1010 որոշմամբ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետը, 12-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ճանաչել է ՀՀ Սահմանադրության 27-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր: Որոշումն ընդունելուց հետո ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից օրենսդրական փոփոխություն կատարելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնություն է ներկայացվել, ինչն ընդգրկվել է ԱԺ նիստի օրակարգում: Ներկայացված օրինակներից երևում է, որ սահմանադրական դատարանների որոշումները և այդ որոշումներում արտահայտված դիրքորոշումները իրենց արտացոլումն են գտնում օրենսդրությունում, կիրառվում են գործադիր իշխանության մարմինների և դատարանների կողմից:

Դրա հետ մեկտեղ արձանագրվում են նաև հակառակ բնույթի փաստեր, մասնավորապես՝ սահմանադրական դատարանի որոշումների ար-

1 Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես նախադեպային իրավունքի աղբյուր. Գ.Հարությունյան, զեկույց Երևանյան 16-րդ միջազգային խորհրդածողովում, 6 հոկտեմբերի, 2011թ.:

համարիումը և դրանց կատարման հետ կապված չարդարացված ձգձգումները: Փորձեր են արվում, նոր իրավական նորմեր ընդունելով, հաղթահարել սահմանադրական դատարանի որոշումների իրավական ուժը. շարունակվում են կիրառվել հակասահմանադրական ճանաչված իրավական ակտերի դրույթները իրավակիրառողի կողմից:²

Վերջին տարիներին միջազգային մի շարք սեմինարներ և խորհրդածո-դովներ են հրավիրվել՝ նվիրված սահմանադրական դատարանների որոշումների կատարումը երաշխավորելու հիմնախնդիրներին:

Արդյունավետ սահմանադրական վերահսկողությունը կարևոր տեղ է զբաղեցնում իրավունքի գերակայության ապահովման գործում ԵԱՀԿ տարածաշրջանում: Կազմակերպության կողմից իրականացվող տարբեր սեմինարներում՝ նվիրված սահմանադրական արդարադատությանը, հատուկ ընդգծվում է սահմանադրական դատարանների որոշումներին իշխանական թևերի կողմից հարգալից վերաբերմունքի դրսևորման կարևորությունը նույնիսկ այն դեպքում, երբ այդ որոշումները հանրույթ-յան համար անհանդուրժելի են: Այսպես՝ 2008թ. քննարկումների արդյունքում մասնակից պետություններին երաշխավորվել է.

- սահմանադրական դատարանները որոշումները ընդունելիս պետք է հենվեն սահմանադրական դրույթների և բոլոր անձանց վերաբերող շահերի հավասարակշռված գնահատականի վրա,

- սահմանադրական դատարանի որոշումները պետք է հարգվեն գործադիր իշխանության և այլ մարմինների կողմից,

- սահմանադրական դատարանի որոշումները պետք է լինեն վերջնական և պարտադիր կատարման համար:³

Այսինքն՝ սահմանադրական դատարանի որոշումների կատարումից է կախված այն, թե ինչքանով են կյանքի կոչվում սահմանադրական սկզբունքները ու կատարելագործվում գործող օրենսդրությունը:

Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների որոշումների կատարմանն էր նվիրված նաև 2012թ. Երևանյան միջազգային խորհրդածողովը: Ինչպես նշել է խորհրդածողովի մասնակից Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Ե. Տանչևը, «դատարանների որոշումների կատարումը հանդիսա-

² Հաղորդում 2012թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, հունվար, 2013թ. Երևան, էջ 3-59:

³ Семинар ОБСЕ по человеческому измерению. Конституционное правосудие, краткий сводный отчет, Варшава 14-16 мая. С.15, www.osce.ru/odihr/33162.

նում է օրենքի գերակայության հիմնաքարերից մեկը, որը Եվրախորհրդի գործունեության հիմնասյուններից մեկն է: Պետությունը, որը ստանձնել է պարտավորություն առաջնորդվելու օրենքի գերակայությամբ, պետք է ունակ լինի ապահովելու բոլոր դատական որոշումների կատարումը, առավել ևս սահմանադրական դատարանի որոշումները»:⁴

Սահմանադրական դատարանի որոշումների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառները տարաբնույթ են՝ սկսած հասարակության և իշխանական կառույցներում իրավագիտակցության ցածր մակարդակից, օրենքի նկատմամբ անհարգալից վերաբերմունքից, իշխանությունների իրական տարանջատման բացակայությունից և նրա թևերի միջև հակասական երևույթներից, դատավարական համակարգի անկատարությունից՝ ուղղված այդ որոշումների կատարմանը և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական դատարանների որոշումները կրում են մեծ քաղաքական, հասարակական և սոցիալական նշանակություն: «Շատ կարևոր է, նշում է դոկտոր Ռ. Ուիտցը, որ ճանաչելով այս կամ այն օրենքը կամ գործադիր իշխանության ակտը հակասահմանադրական՝ դատարանը չպետք է պատժի կառավարությանը, այլ իշխանության քաղաքական թևերին ցույց տա, թե ինչ գործողություններ կամ որոշումներ են անհամատեղելի սահմանադրության հետ: Երբ դատարանը արտահայտի իր կարծիքը, իշխանության քաղաքական թևերը պետք է շարունակեն գործել դատարանի ցուցմունքի լույսի ներքո՝ անխտիր պահպանելով նրա որոշումը»:⁵

Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս դատարանները չեն կարողանում խուսափել քաղաքական ճնշումներից և հակասություններից, որովհետև այն վեճերը, որ առաջանում են իշխանության քաղաքական թևերի միջև, կարող են պարունակել այնպիսի հարցեր, ինչպիսիք են երկրի խորհրդարանը արձակելու Նախագահի լիազորությունը, երկրի ղեկավարի նկատմամբ խորհրդարանի կողմից անվստահության հարցի հարուցումը, գործադիր իշխանության կայացրած ակտերի սահմանադրականության հարցերի որոշումը, համապետական ընտրական գործընթացներին վերաբերող վեճերի լուծումը և այլն: Այսպիսի հարցերով որոշումներ ընդունելիս դատարանները պետք է լինեն անկախ,

4 Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, 2012г., «НЖАР»-2012. С. 9.

5 Семинар ОБСЕ по человеческому измерению, Конституционное правосудие, краткий сводный отчет, Варшава 14-16 мая 2008г. С.16.

օրենսդրությունը և սահմանադրությունը մեկնաբանելիս առաջնորդվեն Հիմնական օրենքի գերակայությունը ապահովելու սկզբունքով, ու «ոչ մի հանգամանքներում սահմանադրական դատարանները չպետք է առաջնորդվեն քաղաքական շարժառիթներով»:⁶

Այդքանով հանդերձ՝ սահմանադրական դատարանները, գիտակցելով մարդու իրավունքների պաշտպանության իրենց պատասխանատվության աստիճանը, իրավունքի գերակայության ապահովման, ժողովրդավարության զարգացման ու պահպանման գործում որոշում կայացնելիս պետք է հաշվի առնեն ընդունվող որոշումների հետևանքները, լինեն դրանք քաղաքական, թե սոցիալ-տնտեսական:⁷

Նշենք, որ Երևանյան 17-րդ խորհրդաժողովում ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գ.Հարությունյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրել է մի շարք կարևոր հիմնախնդիրների վրա, որոնք կրում են հասկացության բնույթ և ունեն ելակետային նշանակություն: Խոսքը վերաբերում է այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են.

- սահմանադրական դատարանի որոշում,
- սահմանադրական դատարանի որոշման կատարում,
- սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշում ու այդ որոշման իրավական բնույթն ու հետևանքները,
- սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի ինստիտուտը,
- սահմանադրական դատարանի որոշման կատարումը ապահովող մարմին և պաշտոնատար անձինք:⁸

Սահմանադրական դատարանների որոշումների ուսումնասիրությամբ

6 Там же. С. 17.

7 1999թ. հունիսի 20-ի N 12 որոշմամբ ՌԴ Սահմանադրական դատարանը վերանայել է նաև 1998թ. ապրիլի 15-ի N 64 որոշումը, այն է՝ «ՌԴ տարածքում գտնվող Երկրորդ համաշխարհային պատերազմում ԽՍՀՄ տեղահանված մշակութային արժեքների» մասին դաշնային օրենքի սահմանադրականության հարցը: Սահմանադրական դատարանը ձեռնպահ է մնացել նշված օրենքը Սահմանադրությանը անհամապատասխան ճանաչելուց՝ չնայած տեղ գտած խախտումներին: Սահմանադրական դատարանը մատնանշել է, որ այդպիսի ճանաչումը «հնարավորություն կտա կասկածանքի տակ դնել նախկինում ընդունված այլ դաշնային օրենքների սահմանադրականությունը: Այդպիսի արդյունքը կհակասեր սահմանադրական վարույթների այն նպատակներին, ինչպիսիք են սահմանադրական կարգի հիմքերի պաշտպանությունը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, ՌԴ Սահմանադրության գերակայության և ուղղակի գործողության ապահովումը»:

8 Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, 2012г..С. 27.

յունը վկայում է, որ նրանք իրենց կառուցվածքով և ծավալով տարբեր են:⁹ Մակայն բոլոր դեպքերում այդ որոշումները պարունակում են իրենց մեջ ինչպես բովանդակային, այնպես էլ իրավաբանական նշանակության տեսակետից տարբեր տեղեկություններ (որոշումներին ներկայացվող պահանջները, որը հնարավորություն է տալիս նույնականացնել դրանք որպես դատական ակտ, գործի հանգամանքների նկարագրական մաս, սահմանադրա-իրավական վերլուծություն, իրավաստեղծ մարմիններին ուղղված առաջարկություններ, որոշման եզրափակիչ մաս): «Դրանցից յուրաքանչյուրն ունի իր իրավական դերն ու նշանակությունը, նշում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը, իսկ բոլորը միասին դատարանի որոշման լեգիտիմության երաշխավորման կարևորագույն նախապայմանն են: Խնդիրն այն է, թե որքանով է այդ ամենն անհրաժեշտ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը ձևակերպելու համար, և դրանցից յուրաքանչյուրը, հատկապես դատարանի իրավական դիրքորոշումը՝ առանձին վերցրած, ինչ ինքնուրույն իրավական դեր ու նշանակություն ունեն, ինչ իրավական հետևանքների են հանգեցնում»:¹⁰

Պետք է նշել, որ դատարանի որոշումների վերաբերյալ բովանդակային առումով պահանջները ամրագրված են «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 52-րդ հոդվածում, որին ծանոթանալով՝ կարող ենք եզրահանգել, որ ի տարբերություն Օրենքի դրույթների, որտեղ Գերագույն դատարանի որոշումների բովանդակությունը կարգավորվում է միայն որոշմամբ ընդգրկված տվյալների թվարկմամբ՝ կախված նրանից, թե դատարանը ինչ հարց է քննում, ԼՂՀ –ում գործող քաղաքացիական (հ.123), քրեական (հ.382), վարչական (հ.112) դատավարական օրենսգրքերը նախատեսում են դատական ակտերի կառուցվածքում ոչ միայն օրենսգրքերով ներկայացվող պարտադիր պահանջների ընդգրկում, այլև նրանց միավորումը առանձին մասերում (նկարագրական, պատճառաբանական, եզրափակիչ): Գերագույն դատարանի որոշումների բովանդակության վերաբերյալ Օրենքը հարցերը

9 St' u В. Маклаков. Конституционный контроль в зарубежных странах.М., 2010г. Решения Конституционного совета Франции «О неоспоримости референдарных законов», «О неподконтрольности конституционных законов», с.241-249, Постановление Конституционного трибунала Польши от 17 декабря 2003г, с.435-457, Постановление Конституционного суда России от 8 ноября 2012 г. N25-П по делу о проверке конституционности положения части первой статьи 79 ФКЗ «О Конституционном Суде РФ», Сравнительное конституционное обозрение, N1(93), 2013, с.157-159.

10 Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, 2012г..С. 28.

կարգավորում է ոչ այնքան մանրակրկիտ, ինչքան դա արվում է մյուս դատավարական օրենսգրքերում, մասնավորապես քրեական դատավարության, որտեղ դատավճռի ամեն մի մասի նվիրված է առանձին հոդված: Մեր կարծիքով, օրենսդրի նման մոտեցումը սահմանադրական դատարանի որոշումների կանոնակարգմանը որոշ չափով առաջացնում է դժվարություններ դրանց իրականացման ժամանակ: Օրինակ՝ Օրենքի 52-րդ հոդվածի 9-11-րդ կետերը պարունակում են Գերագույն դատարանի որոշումների եզրափակիչ մասի վերաբերյալ պահանջվող համառոտ տվյալներ.

- որոշման ձևակերպումը,
- որոշման վերջնական լինելու մասին նշումը,
- որոշման՝ հրապարակման պահից ուժի մեջ մտնելու կամ ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետներ սահմանելու մասին նշումներ:

Նշված պահանջները կոնկրետացվում են Օրենքի 56-67-րդ հոդվածներում: Այսպես՝ Գերագույն դատարանի որոշման ձևակերպման հնարավոր բովանդակությունը կախված է նրանից, թե ինչ գործով է այն ընդունված: Իսկ գործերին առնչվող բոլոր այլ հանգամանքների քննության և այդ գործերով որոշումներ ընդունելու ժամանակ կիրառվում են Օրենքի 56-րդ հոդվածի 5-19-րդ մասերի կանոնները: Գերագույն դատարանի որոշումների վերջնական և պարտադիր լինելու մասին պահանջները ամրագրված են Օրենքի 49-րդ հոդվածի 4-5-րդ կետերում, իսկ նրանց հրապարակման կարգը սահմանված է 53-րդ հոդվածով: Դրա հետ մեկտեղ վերը նշված Օրենքի պահանջների վերլուծությունը, առանց նրանց իրական պրակտիկայում կիրառման, անհնար է դարձնում գնահատել այն բոլոր դրույթների բազմազանությունը, որը կարող է ընդգրկվել դատարանի որոշման եզրափակիչ մասում:

Հարկ է նշել, որ ցանկացած դատական որոշում պարունակում է իր մեջ պետաիշխանական հրամայական, որի առկայությունը ուղղված է տվյալ որոշմամբ որոշակի հասարակական հարաբերությունների կանոնակարգմանը: Սահմանադրական դատարանի որոշումները այս իմաստով բացառություն չեն կազմում, և նրա պահանջը ձևակերպվում է որոշմամբ: Որոշումներում առկա են գործի հանգամանքների նկարագրական մաս, սահմանադրաիրավական վերլուծության արդյունքում ձևավորված իրավական դիրքորոշում և որոշման եզրափակիչ մաս: Ինչպես նշում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը, «սահմանադրական դատարանի որոշմանը պետք է մոտենալ որպես մեկ ամբողջություն՝ չառանձնացնելով եզրափակիչ մասը դատարանի իրավական դիրքորոշումներից»:¹¹ Սահմանա-

դրական դատարանի որոշումները կատարողները (իրավաստեղծ և իրավակիրառող մարմինները) պետք է հաշվի առնեն դատարանի արտահայտված իրավական դիրքորոշումները (իրավաբանական նշանակությունը), որոնք արտացոլված են որոշման այլ մասերում, ու դիտվեն որպես սահմանադրական իրավունքի աղբյուր: Ըստ էության՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների գործունեությունը՝ «որպես սոցիալական հակասությունների լուծման ունիվերսալ ինստիտուտ»¹², կրում է ինչպես իրավակիրառող, այնպես էլ իրավաստեղծ բնույթ, որովհետև սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները ունեն ինքնուրույն իրավական բովանդակություն և մոտենում են իրավաստեղծ (և՛որմ սահմանող) գործունեությանը, ուստի սահմանադրական դատավարության արդյունքում յուրովի ազդեցություն է գործադրվում իրավաստեղծ գործընթացի վրա: Նման ազդեցությունը հնարավոր է դառնում իրականացնել սահմանադրական նորմերի կիրառման, նրանց մեկնաբանման և սահմանադրական վերահսկողություն իրականացնելու արդյունքում: Այսինքն՝ սահմանադրական դատարանի որոշումները կրում են նորմատիվային բնույթ, որի հատկանիշները ամրագրված են օրենսդրությամբ, առավել ևս սահմանադրություններում (որոշումների վերջնական և պարտադիր լինելը բոլորի համար, անմիջապես գործելը, նրանց պարտադիր առաքումը իշխանության ներկայացուցիչներին ու հրատարակվելը): Բայց սրանով չի սահմանափակվում սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական նշանակությունը՝ որպես իրավունքի աղբյուր:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները վիճարկվող ակտի սահմանադրականության վերաբերյալ արտահայտվում են ոչ միայն եզրափակիչ մասում, այլև նրան նախորդող Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանություններում, որի իրավասության շրջանակները սահմանված են օրենսդրությամբ: Սահմանադրական արդարադատության հիմնական գործառնություններից է Սահմանադրության պաշտոնական մեկնաբանումը: Նման բացառիկ պետաիշխանական լիազորությամբ օժտված է միայն սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինը, որը «կոչված է բացահայտելու Սահմանադրության նորմերի իրավական բովանդակությունը, դրանց

11 Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, 2012г. С. 28.
 12 Н.Бондарь. Конституция-ценностно-правовая основа разрешения социальных противоречий. Сравнительное конституционное обозрение, N2(63)2008г. С. 50.

միատեսակ ըմբռնումն ու կիրառումը»,¹³ ինչից կարող ենք եզրահանգել, որ սահմանադրական դատարանի որոշման կատարումը դիտարկել միայն այդ որոշման եզրավակիչ մասի եզրահանգումով, թերի է ու ոչ լիարժեք:

ԼՂՀ Սահմանադրության 114-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ «սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Գերագույն դատարանը», որն ապահովում է ԼՂՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: Իրավական ակտերի սահմանադրականության ապահովման միջոցով Գերագույն դատարանը պետք է ձևավորի իր նախադեպային իրավունքը ու դրանով հանդերձ իրականացնի իրեն վերապահված գործառնական և կառուցակարգային լիազորությունը: «Առանց սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը ընկալելու և իրացնելու՝ անհնարին է երկրում սահմանադրականություն հաստատել ու խոսել Սահմանադրության գերակայության երաշխավորման կամ իրավական պետության գոյության մասին»,¹⁴ նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը: Իրողությունը այն է, որ անցումային շրջանի երկրներում դեռևս կայացած ու երաշխավորված չէ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի նախադեպային իրավունքը: Մեր կարծիքով, այս հարցի լուծումը խնդրահարույց է նաև նշված այն երկրների համար, որտեղ սահմանադրական արդարադատությունը իրականացվում է ոչ կենտրոնացված ձևով, այլ իրավական համակարգի համաձայն՝ գործում է սահմանադրական վերահսկողության հատուկ ձև: Խոսքը վերաբերում է այն իրավական համակարգին, որտեղ բարձրագույն դատական մարմինը (Գերագույն դատարանը), ի լրումն սովորական վճռաբեկ լիազորությունների, իրավասու է իրականացնելու նաև սահմանադրական վերահսկողություն:¹⁵ Մենք սահմանադրական արդարադատություն իրականացնելու փորձի պակասի պատճառով հնարավորություն չունենք ներկայացնելու, թե ինչպես կընկալվի և կիրացվի Գերագույն դատարանի նախադեպային իրավունքը: Ուզում ենք ընդգծել հետևյալը: Համեմատելով ՀՀ և ԼՂՀ դատական օրենսգրքերի 15-րդ հոդվածների դրույթները կարող ենք նշել, որ ՀՀ դատարանների համար որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը

13 ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 917:

14 Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, 2012г., С. 29.

15 St' u Исследование о прямом доступе к конституционному правосудию. Принято на 85-ом пленарном заседании Венецианской комиссии. С. 17-18.

պարտադիր է համարվում այն դեպքում, երբ շրջանցվում է ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը: ԼՂՀ Դատական օրենսգրքում վերը նշված դրույթները չեն արտացոլվել: Բայց դատարանները գործնականում իրենց որոշումները կայացնելիս երբեմն առաջնորդվում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի և ՄԻԵԴ-ի դրույթներով:¹⁶

Պետք է նշել, որ այն համակարգերում, որտեղ դատական իշխանությունը իրականացնում են Սահմանադրական և Գերագույն դատարանները, առաջանում են հակասություններ և հարաբերությունների լարվածություն, որի հիմնական պատճառ է հանդիսանում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի միջամտությունը սովորական դատարանների իրավասությանը, որը արտահայտվում է սովորական դատարանների կայացրած որոշումների հնարավոր քննությամբ: Այդ լարվածությունը կարող է կրել լատենտային բնույթ. դատարանները արդարադատություն իրականացնելիս շրջանցում են սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Նման խնդիր գրեթե չի առաջանում այն երկրներում, որտեղ ներդրված է լիարժեք սահմանադրական գանգատի ինստիտուտը, քանի որ դատական ակտերը նույնպես սահմանադրական վերահսկողության օբյեկտ են: Մենք համամիտ ենք Վենետիկի հանձնաժողովի այն դիրքորոշմանը, որ «անհրաժեշտ է խուսափել հարցի այնպիսի լուծումից, երբ Սահմանադրական դատարանին տրամադրվում է վերադաս Գերագույն դատարանի կարգավիճակ»¹⁷ կամ հակառակը: Լեխ Գարլիցկու կարծիքով՝ նման լարվածությունը նույնպես բնական է թվում, ինչպես զարգացած ժողովրդավարական պետություններում, այնպես էլ հետկոմունիստական երիտասարդ համակարգերի համար:¹⁸ Մեր կարծիքով, դատարանների միջև ծագող լարվածության հիմքերը հետևյալն են. նախ՝ նրանք առաջանում են ժողովրդավարացման գործընթացների արդյունքում, երբ երկրի Հիմնական օրենքի դերը արտահայտվում է որպես իրավական փաստաթղթի և իրավունքի հիմք, այլ ոչ թե քաղաքական հայտարարության, որի դրույթները կարող են անմիջապես գործել և գործողության մեջ դրվել իրավակիրառողների կողմից:

16 Տե՛ս 2009թ. հունիսի 30-ի ԳԴՈ-1, 2010թ. հուլիսի 7-ի նյութ N0052/13-09, 2010թ. նոյեմբերի 22-ի քաղ. գործ N02-390/02/2009, 2011թ. սեպտեմբերի 28-ի քաղ. գործ. N0471/02/2010 Գերագույն դատարանի որոշումները և այլն:

17 Տե՛ս Исследование о прямом доступе к конституционному правосудию. Принято на 85-ом пленарном заседании Венецианской комиссии, п. 211. С. 71.

18 Л. Гарлицкий. Конституционные суды против верховных судов. Сравнительное конституционное обозрение, N2(59)2007. С. 155.

Երկրորդ՝ հասարակական հարաբերությունների սահմանադրականացումն է, որի արդյունքում սահմանադրական նորմերը իրավունքի մյուս ճյուղերով կարգավորվող հարցերի հիմք են հանդիսանում: Երրորդ՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինները ստեղծվում են՝ ելնելով հատուկ պայմաններից (պատմական, աշխարհագրական, իրավական, քաղաքական), այդ թվում՝ երկրում տիրող քաղաքական և սահմանադրական մշակույթից:

Ինչ վերաբերում է սահմանադրական և վճարեկ լիազորությունների վերապահմանը և իրականացմանը մեկ դատարանի կողմից, ապա կարող ենք ասել, որ այն ունի իր առանձնահատկությունները:

Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս Գերագույն դատարանի լիակազմ նիստերը նրա գործունեության կազմակերպչական իրավական գլխավոր ձևն են: Դա պայմանավորված է նրանով, որ դատարանն ամբողջ կազմով իրականացնում է իրավական նորմերի վերացական սահմանադրական վերահսկողություն, քննարկում Սահմանադրության 114-րդ հոդվածի 1.1-1.9-րդ կետերով նախատեսված հարցերով դիմումները, գործերը, որոնք դատարաններում դեռ քննության առարկա չեն դարձել: Նշված հարցերով դիմումները ընդունվում են քննության աշխատակարգային որոշումով՝ դատավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Գործի քննությունը մերժելու պահանջները ամրագրված են Օրենքի 20-րդ հոդվածում և Կանոնակարգով:

Բացի վերացական վերահսկողությունից, որի համաձայն նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը կարող է օրենքով նախատեսված մարմնի կամ իրավասու անձի կողմից բարձրացվել՝ անկախ որևէ կոնկրետ գործի քննությունից, Գերագույն դատարանը կարող է իրականացնել նաև կոնկրետ սահմանադրական վերահսկողություն: Այն ենթադրում է նորմատիվ ակտի սահմանադրականության հարցի լուծում, որը առնչվում է դատաքննության առարկա դարձած այս կամ այն կոնկրետ գործին: Անհատական սահմանադրական դիմումի ինստիտուտն իր սահմանադրաիրավական ամրագրումն է ստացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածի 2-րդ մասի 2.6-րդ կետում: Անհատական սահմանադրական դիմումի ինստիտուտի վերաբերյալ դրույթներն ամրագրվել են նաև Արցախի Հանրապետության նոր Սահմանադրության նախագծի 141-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում, ըստ որի՝ Գերագույն դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ

ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրության նախագծի 139-րդ հոդվածի 4-րդ մասով, միաժամանակ, սահմանվում է Գերագույն դատարանի նիստի իրավագործությունը, այսպես՝ Գերագույն դատարանի նիստն իրավագործ է, եթե դրան մասնակցում է առնվազն հինգ դատավոր: Գործող Օրենքով անհատական դիմումների քննության ժամանակ նիստի իրավագործ լինելու համար սահմանվում է երեք դատավորի մասնակցությունը: Բացի այդ՝ հինգ դատավորի կազմով գործի քննությունը կարող է խնդիրներ առաջացնել, քանի որ այն դատավորները, որոնք գործը քննել են վճռաբեկության կարգով, նիստի իրավագործության ապահովման նպատակով, ներգրավվում են վճռաբեկության կարգով դիմումատուի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու գործի քննությանը: Նման դեպքում տեղի կունենա դատական պաշտպանության իրավունքի խախտում:

Հարկ է նշել, որ Լեոնային Ղարաբաղում դեռ ձևավորված չէ նոր հանգամանքների¹⁹ ինստիտուտի պրակտիկան, բայց, այնուամենայնիվ, կարող ենք եզրահանգել, որ նա նույնպես ակտիվ ձևով չի կիրառվի: Քանի որ նոր հանգամանքների ինստիտուտի կիրառումը ենթադրում է դատական գործի վերանայում, ինչին դատարանները մեծ դժվարությամբ կգնան, առավել ևս, որ Գերագույն դատարանում անհատական դիմումով գործի քննությունը ունի իր առանձնահատկությունները: Բարձրագույն դատական մարմինը կազմակերպաիրավական կառուցվածքի առումով հանդիսանում է ընդհանուր իրավասության դատարանների բաղկացուցիչ մաս, և որի վճռաբեկ պալատը պարտադիր կարգով վճռաբեկ բողոքի հիման վրա պետք է կայացնի վերջնական դատական ակտ:

Ինչ վերաբերում է օրենսդրությամբ ամրագրված «որոշման վերջնա-

19 Հաղորդում ՀՀ ՄԴ 2012թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, էջ 58-59: «Հայաստանում գործունակ չէ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը: Ներկայումս դատական պրակտիկան այնպիսին է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիմքով նոր հանգամանքներով, ըստ էության, որևէ դատական գործ չի վերանայվում: Դատարանները, շարունակելով կիրառել Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքների բոլոր նորմերը, հանգեցնում են մարդկանց սահմանադրական իրավունքների խախտմանը»:

կան լինելու մասին» եզրույթին, ապա սահմանադրական դատարանների որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ այն բավականին տարբեր է: Այսպես՝ օրենսդրի ուղղակի ցուցմունքին հակառակ²⁰ սահմանադրական դատարանի որոշումներում անդրադարձ չի կատարվում այդ որոշումների պարտադիր լինելուն: Դրա հետ մեկտեղ սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասում նշվում է ոչ միայն նրանց վերջնական լինելու մասին, ինչպես պահանջում է օրենսդրությունը, այլև նրանց այլ իրավաբանական հատկանիշների մասին: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանի տարբեր տարիների ընդունած որոշումների եզրափակիչ մասերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ նրանցում համապատասխան ձևակերպումները ժամանակի ընթացքում փոփոխվել են: Այսպես՝ 1996թ. մարտի 13-ին ընդունած ՍԴՈ-1 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ «սույն որոշումը վերջնական է, վերանայման ենթակա չէ, ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»: Նման ձևակերպումով որոշումները ընդունվել են մինչև 2005թ. նոյեմբերի 29-ին ընդունած ՍԴՈ-617 որոշումը: 2006թ. փետրվարի 14-ին ՍԴՈ-618 որոշմամբ վերը նշված բանաձևը ենթարկվել է փոփոխության, հանվել է «վերանայման ենթակա չէ» եզրույթը և առայսօր կիրառվում է «սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից» դրույթը (վերը նշվածի հիմքում ընկած են սահմանադրական պահանջները):

Առանձնահատուկ կարևորության խնդիր է սահմանադրական դատարանների որոշումների ոչ միայն վերջնական լինելու և հրատարակվելու հանգամանքը, որոնք իմպերատիվ ձևով ամրագրված են Օրենքում, այլև այն, որ այդ որոշման կատարման ժամկետները (Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ուժը կորցնելը) կարող է սահմանվել Սահմանադրական դատարանի կողմից՝ ելնելով քննվող գործի առանձնահատկություններից: Գործնականում դա արտահայտվում է իրավական նորմի ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետով: Այս դեպքում սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելու և որոշման կատարման համար սահմանված ժամկետները չեն համընկնում, որը բնորոշվում է նրանց ներազդեցության հանգամանքով: Նման իրավական դիրքորոշում ձևակերպված է ՀՀ Սահմանադրական դատարանի մի շարք որոշում-

20 «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ կետ, «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ կետ, «Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ օրենքի 6-րդ հոդված և այլն:

ներում:²¹

Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի որոշումների հրապարակմանը, ապա դրանք լուծվում են հիմնականում միատեսակ և օրենսդրությամբ սահմանված կարգով հրատարակվում են պաշտոնական մամուլում:²²

Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորելու հարցում գերմանացի գիտնական Բ.Իզենզեեի կարծիքն այն է, որ «Սահմանադրական արդարադատության մարմինները ի զորու չեն ինքնուրույն ապահովելու սեփական որոշումների կատարումը՝ հենվելով միայն նրանց հստակության և պետական կյանքի մասնակիցների կոռեկտության վրա»:²³ Ուստի սահմանադրական դատարանի որոշումների կատարումը կախված է այն փոխհարաբերություններից, որը առկա է սահմանադրական դատարանի և իշխանության մյուս թևերի միջև: Որոշ երկրներում օրենսդրությամբ ուղղակի մատնանշվում է պետական իշխանության մարմինների սահմանադրական դատարանի որոշումների կատարման պարտավորության մասին:²⁴

Մեր կարծիքով, այս հարցում որոշիչ դեր ունի երկրի Նախագահը՝ որպես Սահմանադրության պահպանող և երաշխավորող: Աշխարհի առաջին սահմանադրական դատարանն ստեղծած երկրի՝ Ավստրիայի Սահմանադրությունում (հոդված 146) հստակ սահմանված է, որ սահմանադրական դատարանի որոշումների կատարման երաշխավորը երկրի Նախագահն է: «Առանց դրա՝ Նախագահը չի կարող Սահմանադրության պաշտպանի գերագույն առաքելությունն իրականացնել»,²⁵ -նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը:

Երկրի ղեկավարը, հանդիսանալով Սահմանադրության երաշխավորը,

21 Տե՛ս նաև Սահմանադրական դատարանի 18 ապրիլի, 2006թ.ՍԴՈ-630,13 մայիսի, 2008թ. ՍԴՈ-753, 8 հոկտեմբերի, 2008թ. ՍԴՈ-765, 25 նոյեմբերի, 2008թ.ՍԴՈ-780, 2 դեկտեմբերի, 2008թ. ՍԴՈ-782, 13 ապրիլի, 2010թ.ՍԴՈ-873, 14 դեկտեմբերի, 2010թ.ՍԴՈ-929, 21 դեկտեմբերի, 2010թ. ՍԴՈ-930, 2 ապրիլի, 2014թ. ՍԴՈ-1142 որոշումները:

22 ՀՀ-ում և ԼՂՀ-ում որոշումները հրատարակվում են պաշտոնական տեղեկագրում, Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումները հրատարակվում են պետության պաշտոնական մամուլում («Journal officiel de la République Française», սերիա «Lois et décrets») այն օրերի հետ,որի դրույթները ճանաչվել են հակասահմանադրական, Լեհաստանի Սահմանադրական տրիբունալի որոշումները «Dzienniku Urzędowym» պաշտոնական հրատարակությունում, Բուլղարիայի Սահմանադրական դատարանի որոշումները հրատարակվում են իր իսկ հրատարակած («Giurisprudenza costituzionale»)ամսագրում (հեղ.ծան.):

23 Ի. Իզենզե. Конституционное право как право «политическое»/Государственное право Германии.М.,1994.Т.2.С. 311.

24 Տե՛ս և Исследование о прямом доступе к конституционному правосудию. 1.1.14 Таблица: Действие erga omnes.

25 Հաղորդում ՀՀ ՍԴ 2012թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, էջ 54:

առաջին հերթին պետք է հանդես գա որպես սահմանադրական դատարանի որոշման կատարումը ապահովող կազմակերպիչ, այլ ոչ թե կատարող ատյան: Այդ որոշումը կատարելու համար նա պետք է օժտված լինի ցանկացած պետական մարմնի նկատմամբ պարտադրանքի միջոցներ կիրառելու օրենսդրորեն ամրագրված լիազորություններով: Երկրի ղեկավարին սահմանադրական դատարանի որոշումների կատարմանը մասնակից դարձնելու առաջարկությունը նշանակում է նաև, որ այդ որոշումների չկատարման դեպքում պարտադիր կհետևեն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ: Նման առաջարկության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ շատ երկրներում, այդ թվում նաև ԼՂՀ-ում, օրենսդրությամբ սահմանված են պատասխանատվության միջոցներ դատարանի կամ զեկուցող դատավորի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դրանց կատարումից խուսափելու կամ կատարման ժամկետը խախտելու համար: Խոսքը վերաբերում է դատարաններում գործը դատաքնության նախապատրաստելու կապակցությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից փաստաթղթեր և այլ նյութեր, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանցից նրանց տրամադրության տակ գտնվող նյութերը պահանջելուն, որը չկատարելու դեպքում օրենքով սահմանված կարգով կարող են տուգանվել: Դեռ ավելին. պատասխանատվության միջոց նշանակվելուց հետո դատարանի պահանջները վերստին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ դրանց կատարումից խուսափելը կամ կատարման ժամկետները խախտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն (հ.28): Ինչ վերաբերում է դատարանի որոշումների չկատարման հետևանքներին, ապա այն Օրենքի 54-րդ հոդվածում հստակեցված չէ և վերացական է (ՀՀ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 66-րդ հոդված, ՌԴ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 81-րդ հոդված):

Սահմանադրական դատարանի որոշումների պարտադիր լինելը նախ և առաջ նախանշված են օրենսդրին և իրավաստեղծ այլ սուբյեկտներին, ու «կազմում են ժամանակակից սահմանադրականության աքսիոմաներից մեկը»:²⁶ Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի գործունեության արդյունքը սովորաբար արտահայտվում է որևէ օրենքի, նրա առանձին դրույթի կամ մեկ այլ իրավական ակտի

26 St' u Из материалов XIV Конгресса Конференции европейских конституционных судов. Конституционное правосудие. Выпуск 2(40)-3(41) 2008 г..С.218-219.

սահմանադրականության հարցի որոշմամբ: Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավական նորմը չի կարող չառաջացնել իրավական հետևանքներ: Այսինքն՝ դատավարության արդյունքում վիճարկվող ակտը ճանաչվում է Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող և անվավեր: Առաջին դեպքում հաստատվում է իրավական ակտի սահմանադրականությունը, երկրորդի պարագայում որոշվում է իրավական ակտի կամ նրա մի մասի անվավերությունը և ուժը կորցնելը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այսօր սահմանադրական դատարանները որոշումներ ընդունելիս չեն բավարարվում դասական «համապատասխանում է» կամ «հակասում է» Սահմանադրությանը եզրույթներով: Սահմանադրական դատարանների նման որոշումները այսօր գուցորդվում են նաև հատուկ վերապահումներով՝ ուղղված գործող իրավական համակարգին և իրավակիրառական պրակտիկային: Ելնելով Սահմանադրության գերակայության և անմիջական գործելու պայմաններից՝ Սահմանադրական դատարանը, որի բացառիկ լիազորություններից է իրավական ակտի (նորմի) սահմանադրականության որոշելը, չի կարող զրկվել իրավական նորմի կիրառման սահմանադրական պայմաններ սահմանելուց, որպեսզի իրավակիրառական պրակտիկայում բացառվի այդ նորմի հակասահմանադրական մեկնաբանումը, առավել ևս, որ նա չի ճանաչվել Սահմանադրությանը հակասող: Ուստի միայն Սահմանադրական դատարանի կողմից իրավական նորմի սահմանադրաիրավական էության բացահայտված շրջանակներում կարող է գործել և կիրառվել այդ նորմը: Այլ կերպ այդ իրավական նորմի սահմանադրաիրավական բովանդակության մեկնաբանումը կնշանակի Սահմանադրությանը և դատարանի որոշմանը հակառակ գործողություն: Նման պայմաններում առաջանում են դատարանի որոշմամբ սահմանված օրենսդրական բացերը վերացնելու օրենսդրի պարտականությունները, և ձևավորելու համարժեք օրենսդրական նախաձեռնություն:²⁷

Սահմանադրական դատարանի որոշումների կատարման գործում չափազանց կարևոր դեր ունի իշխանության քաղաքական մյուս թևեր՝ կառավարությունը, որը, ժամանակակից պետաիրավական հայեցակարգի համաձայն, օժտված է լայն գործառնական և առարկայական լիազորություններով, որը հնարավորություն է տալիս լուրջ ազդեցություն

²⁷ Там же, с.220.

գործադրելու օրենսդրական գործընթացների վրա: Արևմտյան Եվրոպայի պետությունների խորհրդարանական վիճակագրությունը հաստատում է, որ խորհրդարանների կողմից ընդունված օրենքների 90 տոկոսից ավելին կառավարության ներկայացրած օրինագծերն են:²⁸ Այստեղից կարող ենք եզրահանգել, որ Սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու գործում կառավարությունների անելիքները պարտադիր են և ծավալուն: Կառավարության նորմաստեղծ գործունեության հիմքում պետք է դրվեն սահմանադրական դատարանի որոշումները: Այս հարցի լուծումը մեզ մոտ պետք է ստանա իրավական կարգավորում ու գործառնական փոփոխություններ իրականացվեն օրենսդրությունում՝ արդարադատության նախարարությանը օժտելով համապատասխան լիազորություններով, քանի որ նախարարության կանոնադրությամբ նախատեսված է օրենսդրության ստեղծմանն օժանդակելը, համակարգումը, իրավական ակտերի պետական իրավական փորձաքննություն անցկացնելը:²⁹

Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորողները պետք է հանդիսանան նաև դատարանները: «Այս մակարդակում ամեն ինչ պայմանավորված է անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի բնույթով և լիարժեքության աստիճանով»:³⁰ Տարբեր երկրների սահմանադրական դատավարությունը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ եթե սահմանադրական դատարան դիմողի կողմից վիճարկվող օրենքը կամ նրա որևիցե դրույթ ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, ապա դիմողի նկատմամբ կիրառված վերջնական դատական ակտը ենթակա է վերանայման:³¹ Հիմնական խնդիրն այն է, որ դատարանները իրականում չեն պահպանում օրենսդրության վերը նշված պահանջը (նոր հանգամանքների ինստիտուտի կիրառումը) և «ամեն կերպ խոչընդոտում են այդ ինստիտուտի արդյունավետ գործադրմանը»:³² Այն դեպքում, երբ օրենսդրությունը հստակ սահմանում է, որ սահմանադրական դատա-

28 Конституционное право зарубежных стран: Учебник для вузов/Под общ.ред.чл.-корр.РАН, проф.М.В.Баглая, д.ю.н.,проф. Ю.И.Лейбо и д.ю. н.,проф.Л.М.Энтина.-3-е изд.,перераб.и доп. - М.:Норма,2013. С.340,352.

29 St' u Федеральный конституционный закон от 5 апреля 2013 г. N 1-ФКЗ «О внесении изменения в статью 80 Федерального конституционного закона «О Конституционном Суде Российской Федерации», <http://www.kremlin.ru/acts/17826>.

30 Հաղորդում ՀՀ ՄԴ 2012թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, էջ 55:

31 «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ կետ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ կետ, ՌԴ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ մաս և այլն:

32 Հաղորդում ՀՀ ՄԴ 2012թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, էջ 55:

րանի որոշումը գործում է անմիջականորեն և որևիցե մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից վավերացում չի պահանջում: Ուստի սահմանադրական դատարանի որոշումը եզակի և բավարար հիմք է գործի վերանայման համար:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրահանգել, որ Սահմանադրական դատարանները արդարադատություն իրականացնելու համար օրենսդրությամբ օժտված են լայն լիազորություններով սեփական որոշումների բովանդակությունը ձևակերպելու համար: Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը պետք է իր որոշումներին հաղորդի կատարման տարրեր ու եզրափակիչ մասերի ձևակերպումները (անկախ նրանից, թե վիճարկվող ակտը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող) պետք է լինեն հստակ ու հասկանալի, քանի որ Սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ օրենսդրությամբ որոշումների տեքստերում բովանդակային բնույթի փոփոխություններ, պարզաբանումներ իրականացնելու հնարավորություն չի նախատեսվում: Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի իրացման խնդիր չի կարող առաջանալ, քանի որ սահմանադրական դատարանի կողմից իրավական նորմի՝ Սահմանադրությանը հակասող ճանաչվելու դեպքում այն իրավունքի ուժով դառնում է անվավեր և չի կարող այլևս կիրառվել:

Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը առաջին հերթին կախված է նրանից, թե տվյալ երկրում իրավական ու սահմանադրական մշակույթը որ մակարդակի վրա է, և ինչ վստահություն են վայելում դատարանները հասարակության կողմից:³³

33 В. Зорькин. «Исполнение решений Конституционного Суда - это проблема, схожая с проблемой соблюдения законов, и она не столько увязывается с действиями Суда, сколько с существующей правовой культурой и правосознанием в обществе, с усилиями, исходящими от многих - законодательных и исполнительных органов, прокуратуры и судов.» Россия и Конституция в XXI веке.М.,2008. С. 559-560.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼԱԼԱ ԱՍԼԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 132-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ
ՄԱՍԵՐԻ, 136-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Լ. Ասլիկյանի և նրա ներկայացուցիչ Տ. Սաֆարյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լալա Ասլիկյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016
25

օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լալա Ասլիկյանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Յ .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը սահմանում են.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

...

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ՝ սույն գործով վիճարկվող 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

...

3) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին»:

Սույն գործով վիճարկվող հոդվածներում փոփոխություն և (կամ) լրացում չի կատարվել:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժինը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Լալա Ասլիկյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լալա Ասլիկյանը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել ոստիկանների՝ 05.03.2014թ. գործողությունները: Դատարանի 27.04.2015թ. որոշմամբ վարչական գործի վարույթն ըստ հայցի ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի ընդդեմ Լալա Ասլիկյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին, կարճվել է՝ հայցից հրաժարվելու հիմքով, իսկ ՀՀ վարչական դատարանի 16.07.2015թ. վճռով հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի նշված վճռի դեմ Լալա Ասլիկյանի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ վերջինս 04.09.2015թ. որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է՝ պատճառաբանելով, որ «... բաց է թողնվել բողոքարկման 1-ամսյա ժամկետը և չկա միջնորդություն այն վերականգնելու մասին: ... Նման պայմաններում, նկատի ունենալով, որ վճիռը կայացվել է 2015թ. հուլիսի 16-ին, իսկ վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 2015թ. օգոստոսի 18-ին և ... չի ներկայացվել միջնորդություն՝ բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ... բողոքը ենթակա է վերադարձման»:

Նշված որոշման դեմ Լալա Ասլիկյանի ներկայացուցչի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 28.10.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով հարգելի համարելու՝ դատարանների պարտականությունը, հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 18-րդ և 19-րդ հոդվածներին:

Դիմողը, վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, նշում է, որ այն դեպքերում, երբ ակտն իր բովանդակային մասով բողոքաբերին հասանելի է դառնում հրապարակման օրվանից հետո որոշ ժամանակ անց, բողոքաբերը հրապարակման պահից սկսած մինչև ամբողջական դատական ակտն ստանալու պահը չունի այն

բողոքարկելու իրական հնարավորություն, քանի որ իր տրամադրության տակ չկան բողոքի արդյունավետության համար անհրաժեշտ կարևոր տվյալներ: Դիմողը նշում է նաև, որ վիճարկվող դրույթների բովանդակությունը հանգում է նրան, որ նույնիսկ բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (օրինակ՝ դատական ակտը փոստային առաքմամբ ուշ ստանալու պատճառով) վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում այն հարգելի համարելու, վերաքննիչ բողոքը դատական ակտն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ներկայացնելու իրավունքն իրացնելու համար բողոքաբերը պետք է առանձին միջնորդությամբ խնդրի վերաքննիչ դատարանին թույլ տալ իրացնելու իր իրավունքը, իսկ վերջինիս հայեցողության սահմաններն ու շրջանակները որևէ կերպ սահմանված չեն օրենքով: Դիմողը գտնում է նաև, որ դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը նշանակում է, որ բողոքաբերը կարող է իր բողոքը ներկայացնել այդ ժամկետում՝ ցանկացած օր, այդ թվում՝ ժամկետի վերջին օրը: Տվյալ դեպքում բողոքաբերը, բացի բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու, բողոքի հիմնական թեզերը վստահորդի հետ քննարկելու, մշակելու, համաձայնեցնելու գործողություններից, կախված իր աշխատանքային ծանրաբեռնվածությունից, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներից, ինքն է որոշում այդ հանգամանքների հաշվառմամբ բողոքարկման մեկամսյա ժամկետում բողոքը ներկայացնելու հնարավոր օրը, որը որոշակի դեպքերում կարող է լինել նաև սահմանված ժամկետի վերջին օրը: Մինչդեռ, բողոքաբերի կամքից անկախ պատճառով, ինչպիսին է հանդիսանում փոստային առաքմամբ բողոքարկվող դատական ակտն ուշ ստանալը, իր բողոքը ներկայացնելու համար սահմանված ժամկետը փոքրանում է, եթե բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկվի ակտի հրապարակման, այլ ոչ թե դրա ստացման օրվանից: Ընդ որում, այս դեպքում որևէ նշանակություն չունի, թե քանի օր ուշացումով է բողոքաբերն ստանում դատական ակտը:

ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողը կարծում է, որ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված մեկամսյա ժամկետի փոխարեն ավելի քիչ ժամկետում այդ գործողությունը կատարելու պարտականություն սահմանելը և դա բողոքաբերի վրա դնելը դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող իրավակարգավորմամբ սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետը ողջամիտ է, այն լիովին բավարար է սովորական հանգամանքներում արդյունավետորեն իրականացնելու համապատասխան բողոք ներկայացնող անձի դատական պաշտպանության իրավունքը:

Պատասխանող կողմը նշում է, որ անձի կամքից անկախ պատճառներով օրենքով սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետի բացթողման հանգամանքը տվյալ հիմքով գնահատելու համար անհրաժեշտ է որոշակի ապացույցների առկայություն, որոնք կհավաստեն, որ անձն իր կամքից անկախ, օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել իրացնելու իր բողոքարկման իրավունքը: Ընդ որում, այդ ապացույցները ենթակա են իրավական գնահատականի դատարանի կողմից:

Պատասխանող կողմն իրավական որոշակիության պահպանման նկատառումներով կարևորում է միջնորդության պահանջի առկայությունը և ընդգծում, որ «...առանց միջնորդության և միջնորդության հիմքում ընկած ապացույցների դատարանը չի կարող գնահատել, թե ինչ պատճառներով է անձը բաց թողել օրենքով սահմանված ժամկետը, առավել ևս, դա հնարավոր չէ ժամկետն ինքնին երկարացված համարելու օրենքի ուժով առանց դատարանի իրավական գնահատականի»:

Ըստ պատասխանողի՝ օրենսդիրը նկատի ունենալով հասարակական հարաբերությունների խիստ բազմազանությունը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փաստական հանգամանքների ինքնատիպությունը, չի կարող սպառիչ սահմանել, թե որ դեպքերում է դատարանը պարտավոր բաց թողնված ժամկետը հարգելի համարել: Օրենսդիրն այս հարցում դատարանին օժտել է հայեցողության որոշակի շրջանակով: Պատասխանողը նաև նշում է, որ միջնորդությունը պետք է բոլոր դեպքերում բավարարվի, եթե անձն ապացուցի, որ հարգելի պատճառով է բաց թողել ժամկետը: Դատարանը, որպես ընդհանուր կանոն, հայեցողություն ունի հանգամանքները հարգելի կամ ոչ հարգելի ճանաչելու հարցում, սակայն այն հանգամանքները, որոնք հարգելի համարելը կասկածից վեր է, ինչպիսին դատական ակտի գրավոր տեքստը անձի կամքից անկախ հանգամանքներում որոշակի ժամկետից հետո ստանալը, դատարանին որևէ այլընտրանք չեն թողնում, և նա բոլոր դեպքերում պարտավոր է բավարարել նման միջնորդությունները:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ միջնորդությամբ բաց

թողնված ժամկետը հարգելի ճանաչելու սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, կիրառված միջոցի և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, իսկ «միջնորդության մեխանիզմի առկայության պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է, քանզի անձն ունի հստակ և գործնական հնարավորություն բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը»:

5. ՀՀ սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է համարում էլնել.

- հանրային իշխանության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 3 և 81-րդ հոդվածներ),

- 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ.

ա) սույն գործով վիճարկվում են գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի, այդ ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու վարչական դատավարական իրավակարգավորումները: Այդ իրավակարգավորումները բովանդակային առումով համարժեք են գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու ժամկետի, այդ ժամկետից հետո բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու վարչական դատավարական իրավակարգավորումներին, որոնց սահմանադրականության հարցը քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1254 որոշմամբ,

բ) սույն գործով քննության առարկա դիմումի հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք, ըստ էության, վերաբերում են ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասին՝ ամբողջությամբ, այլ միայն այդ մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի

օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը ...» դրույթին,

գ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, եթե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ (114-րդ հոդվածի 2-րդ մաս), հրապարակվելուց անմիջապես հետո գործն ըստ էության լուծող դատական ակտը հանձնվում է դատավարության մասնակիցներին: Դատավարության մասնակիցներից որևէ մեկի ներկա չլինելու դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինակը հրապարակման կամ դրան հաջորդող օրն ուղարկվում է նրան (114-րդ հոդվածի 7-րդ մաս), վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (127-րդ հոդվածի 1-ին մաս),

դ) սույն գործով քննության առարկա դիմումի մուտքագրման պահին գործել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, և դիմողը վիճարկվող իրավակարգավորումները վիճահարույց է համարել ՀՀ Սահմանադրության այդ խմբագրությամբ 18 և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-3-րդ գլուխներն ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ից, ուստի սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննության առարկա է հանդիսանում 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համատեքստում:

6. Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ.

ա) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1052 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՍԴՈ-1062 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի և ՍԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ,

բ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահ-

մանադրական դատարանի՝ ՄԴՈ-1052 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ,

զ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-1249 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4141-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումների տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումներով քննության առարկա իրավակարգավորումների և սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների բովանդակային համարժեքությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա իրավակարգավորումների առնչությամբ:

7. Նկատի ունենալով դատական ակտերի բողոքարկման ժամկետների, և այդ ժամկետներից հետո բերված բողոքները վարույթ ընդունելու, դրանք վերադարձնելու կամ առանց քննության թողնելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերի իրավակարգավորումների բովանդակային համարժեքությունը, այդ իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների միասնականությունը, սույն գործի շրջանակներում ևս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատական պրակտիկայի առկա վիճակի ուսումնասիրությանը: Հիշյալ ուսումնասիրության արդյունքներով, մասնավորապես, արձանագրվում է.

1) ՀՀ վճարեկ դատարանը 2016 թվականի մարտի 31-ի ԵՇԴ/0133/01/14 քրեական գործով կայացրել է «Վճարեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում, մասնավորապես նշելով, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը հրապարակվել է 2016 թվականի հունվարի 14-ին, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշումը ստացվել է 2016 թվականի փետրվարի 4-ին, իսկ վճարեկ բողոքը բերվել՝ 2016 թվականի մարտի 4-ին, այսինքն՝ վճարեկ բողոք բերելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով

սահմանված մեկամսյա ժամկետն անցնելուց հետո: Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վճռաբեկ բողոքը ներկայացվել է բողոքարկվող դատական ակտը ստանալու պահից 27-օրյա ժամկետի խախտմամբ, հետևաբար՝ բողոքարկվող ակտը 2016 թվականի փետրվարի 4-ին ստանալու վերաբերյալ բողոք ներկայացրած անձի հիմնավորումը չի կարող բավարար համարվել վճռաբեկ բողոք բերելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին բողոքաբերի միջնորդությունը բավարարելու համար:

Հիշատակված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է միայն բողոքաբերի կողմից բողոքարկվող դատական ակտն ստանալու փաստը և չի արձանագրել այդ ակտի ամբողջական տեքստը բողոքաբերին տրամադրելու, նրան պաշտոնապես հասանելի դարձնելու այլ փաստ: Հարկ է ընդգծել, որ բողոքարկվող դատական ակտի հրապարակման օրվա (14.01.2016թ.) և այդ ակտը բողոքաբերի ստանալու օրվա (04.02.2016թ.) համադրումը ցույց է տալիս, որ բողոքարկվող դատական ակտը բողոքաբերին չի տրամադրվել (հասանելի չի դարձվել) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1062 որոշմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է ՀՀ սահմանադրությանը համապատասխանող՝ այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի: Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1052 որոշմամբ որպես երաշխիք ճանաչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածն այնքանով, որքանով այդ հոդվածի 2-րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է եռօրյա ժամկետում դատական ակտի ամբողջական տեքստի տրամադրումը (հասանելիությունը) բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին:

Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ուժով իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի այն ընկալմամբ, որ դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից՝ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1062 որոշմամբ ամրագրել է և ՍԴՈ-1249 որոշմամբ կրկին արձանագրել այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց, սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի (հասանելի դարձվի) անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար»:

Վկայակոչված իրավական դիրքորոշմամբ նշված «առնվազն 27 օր ժամանակը» չի կարող դիտարկվել բողոք ներկայացնելու համար հաշվարկման ենթակա ինքնուրույն և առավելագույն ժամկետ: Միայն այն դեպքում, երբ դատական ակտի հրապարակման պահից օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) պետք է ունենա առնվազն 27 օր ժամանակ, որպես նվազագույն ժամկետ, հիմնավոր բողոք ներկայացնելու համար,

2) ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի մարտի 25-ի ԵՇԴ/0129/01/14 քրեական գործով կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում, մասնավորապես նշելով, որ բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը պետք է մերժել, քանի որ այն պատճառաբանված չէ:

Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1249 որոշմամբ ամրագրել է և ՍԴՈ-1254 որոշմամբ կրկին արձանագրել, մասնավորապես, այն իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց՝ «...երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունն օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն է, հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը: ... երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը

պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

Այսինքն՝ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության պատճառաբանվածության այլ պայման Մահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումներով չի ամրագրել: Տվյալ իրավակարգավորման սահմանադրաիրավական բովանդակությունից բխող պայմանն այն է, որ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված եռօրյա ժամկետից հետո, ապա պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները:

Վերոհիշյալ ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ դատական պրակտիկայում ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1249 և ՍԴՈ-1254 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները դեռևս լիարժեքորեն հաշվի չեն առնվում՝ դրանով իսկ ստեղծելով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման արգելափակման վտանգ:

8. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ իր ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1249 և ՍԴՈ-1254 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը դեռևս համապատասխան օրենսդրական համալիր և միասնական կանոնակարգումների չի ենթարկվել և այս հանգամանքը չի արտացոլվել պատասխանող կողմի ներկայացրած բացատրության մեջ:

Սույն գործի շրջանակներում Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին շեշտադրել իր որոշումներում արտահայտված, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «... մի կողմից, օրենսդրորեն օրյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել» (ՍԴՈ-1249),

բ) «... բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատարանների հանրային-իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը» (ՄԴՈ-1249),

գ) «... քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են, մասնավորապես, քրեական դատավարական, քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական միասնական քաղաքականության շրջանակներում դատական ակտերի վերաբերյալ բողոք ներկայացնելու նախապայմանների մասով համարժեք լուծումներ գտնելու նպատակով» (ՄԴՈ-1254):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ:

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը...» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին

մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1249 և ՄԴՈ-1254 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26 ապրիլի 2016 թվականի
ՄԴՈ-1268



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

29 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Հարությունյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016
38

տանի Հանրապետության կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի մարտի 22-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ Վարկատու) և Զարգացման ֆրանսիական գործակալության (այսուհետ՝ Վարկատու) միջև վարկային համաձայնագիրն (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի հունվարի 26-ին:

Վարկային համաձայնագրի անբաժանելի մասն են հանդիսանում. Հավելված 1Ա. «Սահմանումներ», Հավելված 1Բ. «Մեկնաբանություն», Հավելված 2. «Ծրագրի նկարագրություն», Հավելված 3. «Ֆինանսավորման պլան», Հավելված 4. «Նախապայմաններ», Հավելված 5Ա. «Առհանման հայտի ձև», Հավելված 5Բ. «Առհանման հաստատման ձև և դրույք», Հավելված 6. «Մեղմացման միջոցառումներ բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականության համատեքստում», Հավելված 7. «Ազդեցության ցուցիչների վերաբերյալ հաշվետվության ձև» և Հավելված 8. «Տեղեկություններ, որոնք կարող են հրապարակվել Ֆրանսիայի կառավարության և Վարկատուի կայքերում»:

2. Զարգացման ֆրանսիական գործակալությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է յոթանասունհինգ միլիոն (75.000.000) եվրո գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ)՝ Վարկային համաձայնագրի պայմաններին և դրույթներին համապատասխան Արարատյան հարթավայրում ջրային ռեսուրսների և ոռոգվող գյուղատնտեսության կայունությունը բարելավելու ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր) իրականացնելու նպատակով: ՀՀ կառավարության մասնակցությունը Ծրագրին կազմում է տասնհինգ միլիոն եվրո՝ ԱԱՀ-ի մասով (Հավելվածներ 2 և 3):

Ծրագիրը բաղկացած է 2 բաղադրիչներից՝ Բաղադրիչ 1. «Վեղու ջրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարություն», Բաղադրիչ 2.

«Ոռոգելի մակերեսի վերականգնում, արդիականացում, ընդլայնում» (Հավելված 2, մաս II):

Ծրագրով նախատեսվում է՝ Վեդու ջրամբարի և օժանդակ կառուցվածքների շինարարության շնորհիվ ապահովել 29 մլն մ³ ծավալով վարարաջրերի ամբարումը և, հետևաբար, կրճատել ջրառը Սևանա լճից և գրունտային ջրերից, ոռոգման ինքնահոս համակարգերի միջոցով ապահովել 3200 հա մշակովի հողերի ոռոգումը և 11 պոմպակայանների փակման շնորհիվ խնայել տարեկան 19 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա կամ 1,9 մլն եվրո, ջրանցքների վերականգնման և ընդլայնման, ոռոգման նորարարական տեխնոլոգիաների ներդրման միջոցով ոռոգման ցանցի արդյունավետությունը 50-60%-ից հասցնել 75-80%-ի, iii) նվազեցնել ոռոգման ծախսերն ու դժվարությունները և մեծացնել բերքատվությունը՝ խրախուսելով 4500 ֆերմերների զբաղվել ավելի բարձրարժեք մշակաբույսերի (խաղողի և պտղատու այգիներ, բանջարեղեն) մշակմամբ (Հավելված 2, մաս I):

3. Ըստ Վարկային համաձայնագրի՝ Վարկի մարման ժամկետը 20 տարի է, որից 6 տարին՝ արտոնյալ: Արտոնյալ ժամկետի ավարտից հետո Վարկի մայր գումարը պետք է մարվի 28 կիսամյակային մասնաբաժիններով՝ 2022 թվականի մայիսի 31-ից մինչև 2035 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Ընդ որում, մինչև 2025 թվականի նոյեմբերի 30-ը չի թույլատրվում Վարկի ամբողջական կամ մասնակի վաղաժամ մարում (հոդված 6):

Վարկը տրամադրվելու է մի քանի Առհանումներով՝ պայմանով, որ Առհանումների թիվը չգերազանցի 20-ը: Առհանման գումարը պետք է լինի նվազագույնը երեք մլն (3.000.000) եվրո կամ Հասանելի վարկին համարժեք գումար, եթե այդ գումարը երեք մլն (3.000.000) եվրոյից պակաս է (հոդված 3, կետ 3.1): Առհանման վերջնաժամկետը 2021 թվականի մայիսի 31-ն է, Ծրագրի տեխնիկական ավարտի օրը՝ 2021 թվականի մարտի 31-ը, Վարկի արժույթը՝ եվրոն (Հավելված 1Ա):

4. Վարկային համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Առհանման նկատմամբ կիրառելի տոկոսադրույքը պետք է լինի ստորագրման օրվանից մինչև համապատասխան դրույքի սահմանման օրն ընկած ժամանակահատվածում ինդեքսային դրույքի տատանումից ավելացող/նվազող ֆիքսված հաշվարկային դրույքը, իսկ ժամկետանց վճարումների գծով տույժը՝ տվյալ ժամանակահատվածի համար կիրառելի տոկոսադրույքին գումարած 3,5%: Համաձայնագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ պարտավճարը կազմելու է Վարկի տարեկան 0,5%-ը, գնահատման միանվագ վճարը՝ 0,5%-ը, Վարկի լրիվ կամ մասնակի չեղարկ-

ման վճարը՝ Վարկի չեղարկված գումարի 2,5%-ը:

5. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- օգտագործել սույն Վարկով փոխառված բոլոր գումարները բացառապես ֆինանսավորման նպատակով, բացառությամբ հարկերի, Ծրագրի նկարագրությանը (Հավելված 2) և Ֆինանսավորման պլանին (Հավելված 3) համապատասխան (2-րդ հոդվ., 2.2 կետ),

- ստորագրման օրվանից ոչ ուշ Վարկատուին տրամադրել Հավելված 4-ի (Նախապայմաններ) I մասում սահմանված բոլոր փաստաթղթերը (2-րդ հոդվ., 2.4 կետ, ա) ենթակետ),

- Ծրագրի անունով բացել և վարել հաշիվ ՀՀ կենտրոնական բանկում (Հաշվի բանկ), հրաժարվել և ապահովել, որ Հաշվի բանկը հրաժարվի հաշվանցման ցանկացած իրավունքից, որ Կողմը կարող է ունենալ Ծրագրի հաշվի նկատմամբ և Հաշվի բանկում Հայաստանի Հանրապետության անունից բացված ցանկացած այլ հաշվի կամ Հայաստանի Հանրապետության ցանկացած այլ պարտքի նկատմամբ (3-րդ հոդվ., 3.4.2.1 կետ),

- համաձայնել, որ Առհանման ժամանակահատվածում Ծրագրի հաշիվը պետք է աուդիտի ենթարկվի տարեկան կտրվածքով. աուդիտները կատարվում են Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված անկախ և հեղինակավոր աուդիտորական ընկերության կողմից՝ պայմանով, որ Հայաստանի Հանրապետությունը առարկություն չունենա աուդիտորական առաքելության և Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված աուդիտորական ընկերության նշանակման առնչությամբ, ինչպես նաև կրել աուդիտորական բոլոր ծախսերը (3-րդ հոդվ., 3.4.2.8 կետ),

- Վարկատուի պահանջով 20 օրացուցային օրվա ընթացքում վերադարձնել բոլոր այն գումարները, որոնց օգտագործումը պատշաճ կամ բավարար կերպով չի հիմնավորվել Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3.4.2.7-րդ կետով (Օգտագործման վերջնաժամկետ)՝ որպես օգտագործման վերջնաժամկետ սահմանված օրվա դրությամբ, Ծրագրի հաշվին առկա բոլոր մյուս գումարների հետ միասին (3-րդ հոդվ., 3.4.2.9 կետ),

- յուրաքանչյուր Վճարման օր վճարել Առհանման (Առհանումների) նկատմամբ կուտակված տոկոսները, ընդ որում՝ տոկոսագումարը հավասար է Չմարված մայր գումարի համար Հայաստանի Հանրապետության կողմից վճարման ենթակա տոկոսի գումարին՝ յուրաքանչյուր Առհանման մասով, որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ համապատասխան Առհանման մասով Հայաստանի Հանրապետության կողմից վճարման ենթակա մայր գումարը՝ վճարման անմիջապես նախորդող օրվա կամ, առաջին Տոկոսային ժամանակահատվածի դեպքում, համապատասխան

Առհանման օրվա դրությամբ, որպես հիմք ընդունելով տարին երեք հարյուր վաթսուն (360) օրը՝ համապատասխան Տոկոսային ժամանակահատվածի ընթացքում կուտակված օրերի ճշգրիտ թիվը, և Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.1 կետի (Տոկոսադրույք) դրույթներին համապատասխան որոշված կիրառելի Տոկոսադրույքը, այն է՝ ստորագրման օրվանից մինչև համապատասխան դրույթի սահմանման օրն ընկած ժամանակահատվածում Ինդեքսային դրույթի տատանումից ավելացող կամ նվազող Ֆիքսված հաշվարկային դրույքը, որը Հայաստանի Հանրապետությունը կարող է նշել Առհանման յուրաքանչյուր հայտում, և որը չպետք է գերազանցի տարեկան 6.25 %-ը կամ չպետք է ավելի ցածր լինի տարեկան 0.25%-ից՝ անկախ Տոկոսադրույթի ցանկացած նվազումից (հոդված 4, կետեր 4.1 և 4.2),

- ժամկետանց վճարման և պարտավորության չկատարման դեպքում վճարել Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.3-րդ կետով սահմանված կարգով հաշվարկված տոկոսը և տույժը,

- ստորագրման օրվանից սկսվող՝ 4 ամիսը լրանալուց հետո առաջին օրվանից վճարել տարեկան պարտավճար՝ 0,5%-ի չափով, որը հաշվարկվում է լրացած օրերի փաստացի թվի համար համամասնորեն բաշխված Հասանելի վարկի գումարի նկատմամբ՝ ավելացրած այն Առհանման գումարը, որը Վարկատուի կողմից պետք է տրամադրվի դեռևս չբավարարված Առհանման հայտին համապատասխան (հոդվ. 5, կետ 5.1, 1 և 2 մասեր),

- վճարել կուտակված պարտավճարը յուրաքանչյուր Վճարման օր Առհանման ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող Վճարման օրը, և Հասանելի վարկն ամբողջությամբ չեղարկելու դեպքում՝ դրան հաջորդող Վճարման օրը (հոդվ. 5, կետ 5.1, մաս 4),

- նախքան առաջին Առհանումը և Ստորագրման օրվանից ոչ ուշ, քան չորս ամիս հետո վճարել գնահատման վճար՝ 0,5%-ի չափով (հոդվ. 5, կետ 5.2),

- Վարկի լրիվ կամ մասնակի չեղարկման դեպքում չեղարկմանն անմիջապես հաջորդող վճարման օրը վճարել չեղարկման վճար՝ Վարկի չեղարկված գումարի 2,5%-ի չափով (հոդվ. 5, կետ 5.3),

- արտոնյալ ժամկետի ավարտից անմիջապես հետո Վարկի մայր գումարը մարել 28 կիսամյակային մարումներով (հոդվ. 6),

- լրացուցիչ ծախսերի, պարտավորության չկատարման, վարկային միջոցների օգտագործումը չհիմնավորելու և այլ դեպքերի վերաբերյալ Վարկատուից ծանուցում ստանալով անմիջապես կատարել Վարկի ամբողջական կամ մասնակի մարում (հոդվ. 7, կետ 7.2),

- Վարկի ցանկացած վաղաժամ մարման դեպքում վճարել տույժ՝

կուտակված տոկոսների և չվճարված վճարների հետ միասին (հոդվ. 7, կետ 7.5),

- ուղղակիորեն Վարկատուին վճարել կամ, եթե կիրառելի է, Վարկատուի կողմից վճարված կանխավճարի դեպքում փոխհատուցել սույն Համաձայնագրի բանակցման, նախապատրաստման ու ստորագրման և դրանից հետո կատարված ֆինանսական ցանկացած այլ փաստաթղթի կապակցությամբ Վարկատուի կրած բոլոր ծախսերի և ծախսերի գումարը, որը սահմանափակվում է 15.000 եվրոյով՝ բացառությամբ ԱԱՀ-ի (հոդվ. 8, կետ 8.1),

- վճարել կամ վճարված կանխավճարի դեպքում փոխհատուցել ֆինանսավորման փաստաթղթերի հնարավոր փոփոխությունների հետ կապված դրոշմատուրքերի, գրանցման և նմանատիպ այլ հարկերի հետ կապված ծախսերը, շահութահարկից ազատել կամ համապատասխան չափով փոխհատուցել Վարկատուին վճարվող բոլոր վճարումները, ինչպես նաև փոխհատուցել Վարկատուի վճարած՝ Հայաստանի Հանրապետության հաշվի հետ կապված բոլոր ծախսերը և/կամ հարկերը (հոդվ. 8, կետեր 8.3.1 և 8.3.2),

- Վարկատուի պահանջով 10 աշխատանքային օրվա ընթացքում վճարել պատշաճ կերպով հիմնավորված Վարկատուի բոլոր լրացուցիչ ծախսերը, (հոդվ. 8, կետ 8.4),

- սույն Համաձայնագրի կամ որևէ հրամանի, վճռի կամ որոշման ներքո Վարկատուին վճարման ենթակա գումարը վճարման արժույթից այլ արժույթի փոխարկելու դեպքում Վարկատուի պահանջով 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել փոխարկումից առաջացող ցանկացած ծախսի, կորստի կամ պարտավորության գումարը, ներառյալ փոխարժեքների տարբերությունը, հրաժարվել վճարել սույն Համաձայնագրով վճարման ենթակա ցանկացած գումար վճարման սահմանված արժույթից բացի այլ արժույթով կամ ՀՀ դրամով (հոդվ. 8, կետ 8.5),

- Վարկատուին վճարման ենթակա ցանկացած տույժ կամ փոխհատուցում վճարել սլյալ տույժին կամ փոխհատուցմանը հանգեցրած հանգամանքներին անմիջապես հաջորդող Վճարման օրը (հոդվ. 8, կետ 8.6),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բացառել ֆինանսավորման փաստաթղթերի գրանցումը, հաշվառումը, դատական մարմիններում մուտքագրումը և դրանցով նախատեսված գործարքների համար կամ դրանց առնչությամբ դրոշմատուրքերի, գրանցման հարկերի կամ նման այլ հարկերի կամ վճարների վճարումը, (հոդվ. 9, կետ 9.4),

- ապահովել Վարկատուին վճարման ենթակա բոլոր գումարների (մայր գումար, տոկոսավճար, տույժեր, չնախատեսված ծախսեր) ազատ փոխանցումը Ֆրանսիա կամ այլ երկիր և դրա համար պատշաճ կերպով

եվրոյի ձեռքբերումը (հոդվ. 9, կետ 9.5),

- ապահովել, որ Վարկատուին տրամադրվող բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը լինեն ճշգրիտ, հավաստի և թարմացված տրամադրման օրվա դրությամբ (հոդվ. 9, կետ 9.9),

- ապահովել համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության և/կամ Ծրագրի վրա տարածվող օրենքներին ու կանոնակարգերին (մասնավորապես՝ շրջակա միջավայրի պաշտպանության, անվտանգության և աշխատանքային օրենսդրությանը) և Ծրագրի փաստաթղթերով նախատեսված իր բոլոր պարտավորություններին (հոդվ. 10, կետ 10.1),

- ժամանակին ձեռք բերել օրենքով կամ կանոնակարգով պահանջվող ցանկացած թույլտվություն, ապահովել դրա համապատասխանությունը և ձեռնարկել այն ուժի մեջ պահելու համար բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի կարողանա կատարել սույն Համաձայնագրով և Ծրագրի փաստաթղթերով նախատեսված իր պարտավորությունները (հոդվ. 10, կետ 10.2),

- Վարկատուին տրամադրել Ծրագրի փաստաթղթերում ցանկացած փոփոխության պատճենը և առանց Վարկատուի համաձայնության Ծրագրի փաստաթղթերում չկատարել (չհամաձայնել կատարել) որևէ էական փոփոխություն (հոդվ. 10, կետ 10.3),

- իրականացնել Ծրագիրը՝ անվտանգության համընդհանուր ճանաչված սկզբունքներին և գործող տեխնիկական չափորոշիչներին համապատասխան, պահպանել Ծրագրի գույքը աշխատանքային ու տեխնիկական սպասարկման բարվոք պայմաններում, և այն օգտագործել դրա նպատակներին և օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան (հոդվ. 10, կետ 10.4),

- Ծրագրի իրականացման կապակցությամբ բավարարել Գնումների ուղեցույցի պահանջները և իրականացնել դրանք, ձեռնարկել Գնումների ուղեցույցի արդյունավետ իրականացման բոլոր քայլերը և մրցառքային փաստաթղթերում ներառել բնապահպանական և սոցիալական պատասխանատվության դրույթներ (հոդվ. 10, կետ 10.5),

- չլրամշակել կամ չփոփոխել Ֆինանսավորման պլանը՝ առանց նախապես Վարկատուի գրավոր համաձայնությունն ստանալու, և ֆինանսավորել Ֆինանսավորման պլանով չնախատեսված լրացուցիչ ծախսերն այնպիսի պայմաններով, որոնցով երաշխավորվում է Վարկի մարումը (հոդվ. 10, կետ 10.7),

- պարտավորվել՝ i) ապահովել, որ սույն Համաձայնագրով նախատեսված վճարման Հայաստանի Հանրապետության պարտավորությունները ցանկացած ժամանակ դասակարգվեն իբրև առնվազն հավասարազոր իր

ներկա և հետագա՝ չապահովված և չստորակարգված այլ պարտավորություններին, ii) այլ վարկատուների չտրամադրել առաջնահերթություն կամ երաշխիքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ըստ Վարկատուի պահանջի տրվում են հոգուս նրա (հոդվ. 10, կետ 10.8),

- լիազորել Վարկատուին և նրա ներկայացուցիչներին իրականացնել ստուգումներ, դրա ընթացքում համագործակցել և աջակցություն ու տեղեկություններ տրամադրել նրանց, փոխհատուցել տարեկան մեկ ստուգման հետ կապված ծախսերը, պահպանել Թույլատրելի ծախսերին վերաբերող բոլոր փաստաթղթերն Առհանման վերջնաժամկետից հետո 10 տարվա ընթացքում (հոդվ.10, կետ 10.11),

- ապահովել, որ Ծրագրի իրականացմանը մասնակցողները ներառված չլինեն ֆինանսական պատժամիջոցների որևէ ցանկում, և չֆինանսավորել ՄԱԿ-ի, ԵՄ-ի կամ Ֆրանսիայի կողմից Էմբարգոյի ենթարկված մատակարարումները կամ սեկտորները (հոդվ. 10, կետ 10.13),

- Վարկատուին տրամադրել Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին պարտքի, ինչպես նաև երաշխավորված վարկերի կարգավիճակի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որը Վարկատուն ողջամտորեն կարող է պահանջել (հոդվ. 11, կետ 11.1),

- առանց նախապես Վարկատուի համաձայնությունն ստանալու՝ Վարկառուն չպետք է բացահայտի Համաձայնագրի բովանդակությունը որևէ երրորդ կողմի, բացառությամբ այն անձի, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն ունի բացահայտման պարտավորություն՝ կիրառելի օրենքներին, կանոնակարգերին կամ դատական վճռին համապատասխան (հոդվ. 14, կետ 14.9):

6. Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ քննության առարկա Համաձայնագրում նախատեսված է, որ պարտավորությունների չկատարման դեպք տեղի ունենալու պահին կամ դրանից հետո՝ ցանկացած ժամանակ, Վարկատուն, առանց պաշտոնական պահանջի կամ դատական կամ արտադատարանական ընթացակարգ սկսելու, Հայաստանի Հանրապետությանը գրավոր ծանուցելով՝ կարող է չեղարկել Հասանելի Վարկը և/կամ հայտարարել, որ Վարկն ամբողջությամբ կամ մասամբ՝ կուտակված կամ չվճարված տոկոսավճարների և Համաձայնագրի ներքո չմարված բոլոր մյուս գումարների հետ միասին, ենթակա է անհապաղ վճարման (հոդվ. 12, կետ 12.2):

Ընդ որում, քննության առարկա Համաձայնագրում, ի թիվս այլնի, որպես պարտավորությունների չկատարման դեպք նշվում է Վարկառուի երկրում տեղի ունեցած «քաղաքական իրավիճակի փոփոխությունը» (հոդվ. 12, կետ 12.1, ենթակետ է), առանց հստակեցնելու, թե կոնկրետ ինչ

հանգամանքներ, դեպքեր կամ փաստեր կարող են որակվել որպես այդպիսին: Սակայն փոփոխության գնահատումն իրականում թողնված չէ Վարկատուի սուբյեկտիվ գնահատականին, քանի որ 1Ա հավելվածում սահմանված է «էական բացասական ազդեցություն» եզրույթը, որից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է այնպիսի բացասական (այդ թվում՝ քաղաքական) փոփոխություններին, որոնք կարող են էականորեն վտանգել Ծրագրի իրականացումը, ՀՀ կառավարության կողմից պարտավորությունների կատարումը, Համաձայնագրի կիրարկումը և դրա շրջանակներում Վարկատուի պաշտպանության միջոցները:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ սույն Համաձայնագրով հիմք են ընդունվում նաև մի շարք պայմաններ, որոնց առնչությամբ Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի ապրիլի 5-ի ՄԴԱՌ-23 որոշմամբ պաշտոնական պարզաբանումներ և հիմնավորումներ է պահանջել քննության առարկա գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչից: Դրանք, մասնավորապես, վերաբերում են Համաձայնագրի 9.7, 9.8, 9.12, 9.13, 9.14, 10.9, 12.1, 12.2, 14.2, 14.4, 14.5, 14.9, 16.1 և 16.2 կետերին:

7. Քննության առարկա Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունների սահմանադրականությունը գնահատելիս ՀՀ սահմանադրական դատարանը հաշվի է առնում, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասում, մասնավորապես, ամրագրված է. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և միջազգային հանրային իրավունքի նորմերով (այսուհետ՝ միջազգային իրավունք) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավունքի սուբյեկտի, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմավորումների միջև ստորագրված և սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր դարձած գրավոր համաձայնություն է, որը տվյալ միջազգային պայմանագրով որոշված կարգավորման առարկայի առնչությամբ պայմանագրի կողմերի համար սահմանում է իրավունքներ և պարտականություններ, փոփոխում կամ դադարեցնում է դրանք»:

Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ «Սույն օրենքով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի է համարվում ցանկացած գրավոր համաձայնություն, որ ձևակերպվել է պայմանագրի, համաձայնագրի, կոնվենցիայի, հուշագրի, արձանագրության տեսքով կամ որևէ այլ

անվանումով փաստաթղթի տեսքով, կամ որն արտահայտվել է նոտաների կամ նամակների փոխանակումով»:

Հիշյալ օրենքի 4-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով:

Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ. «Հայկական կողմից միջազգային պայմանագրի սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է, անկախ նրանից, թե միջազգային պայմանագիրը ում անունից է կնքվել:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի մյուս կողմից հանդես եկող սուբյեկտներ կարող են լինել միջազգային իրավունքի սուբյեկտները՝ օտարերկրյա պետությունները, միջազգային կազմակերպությունները, միջազգային իրավունքի այլ սուբյեկտները, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմավորումները»: Նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված է. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կողմ կարող են լինել նաև իսադադության, մարդու իրավունքների պաշտպանության, մարդասիրական կամ ֆինանսատնտեսական աջակցության ոլորտներին առնչվող հարցերով՝ միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող կամ որպես այդպիսին չճանաչված կազմավորումները»:

ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրությամբ /2005թ. խմբագրությամբ՝ հոդված 81, 2015թ. խմբագրությամբ՝ հոդված 116/ միանշանակ սահմանված է, որ վավերացման ենթակա են այն միջազգային պայմանագրերը, որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական պարտավորություններ:

Բացի դրանից, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայով (հոդվածներ 2, 14), ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ կետի ե) ենթակետով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով (հոդվ. 24)

սահմանված է նաև, որ վավերացման են ենթակա բոլոր այն միջազգային պայմանագրերը, որոնցով նախատեսվում է վավերացում:

Հայաստանի Հանրապետության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածի 2-րդ մասի ա) կետով որպես առաջին առհանման նախապայման է սահմանված հետևյալը. «Արտաքին գործերի նախարարության կողմից գրավոր ծանուցման տրամադրում, որով հաստատվում է Վարկառուի պետական հաստատությունների կողմից սույն Համաձայնագրի ստորագրման, ուժի մեջ մտնելու և Վարկառուի համար այդ ստորագրումը պարտադիր դարձնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունների կատարումը՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից սույն Համաձայնագրի սահմանադրականության վերաբերյալ որոշումը և սույն Համաձայնագրի հաստատումը /վավերացումը/ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշմամբ, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որը կարող է անհրաժեշտ համարվել Հայաստանի Հանրապետության օրենքներով»:

Բերված իրավակարգավորումների և գործում առկա նյութերի համադրված վերլուծությունից հետևում է, որ.

1. քննության առարկա Համաձայնագիրը միանշանակ ենթակա է վավերացման,

2. վավերացնելուց հետո այդ Համաձայնագրի նորմերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառելի են միջազգային սույն Համաձայնագրի նորմերը,

3. ըստ Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից ներկայացված՝ գործում առկա գրավոր բացատրությունների՝ քննության առարկա Համաձայնագիրը հանդիսանում է «...մասնավոր իրավահարաբերությունների սուբյեկտի հետ կնքված գործարք, և որպես այդպիսին վերջինիս շրջանակներում պետության կողմից պարտավորությունների ստանձնումը հանդիսանում է jure gestionis (մասնավոր իրավական), այլ ոչ թե jure imperii (հանրային իրավական) գործողություն»:

4. Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը հանգում է նաև նրան, որ սույն Համաձայնագրի առարկան վերաբերում է միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող կազմավորման հետ ձեռք բերված՝ ֆինանսատնտեսական աջակցության ոլորտին առնչվող հարցերին:

ՀՀ սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ ըստ ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունների

1. «...պետության կողմից օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբա-

նական անձի հետ կնքված առևտրային գործարքները կարգավորվում են միջազգային մասնավոր իրավունքով», և որ նման գործարքները «...ի թիվս այլոց ներառում է նաև վարկային պայմանագրերը և այլ ֆինանսական բնույթի պայմանագրերը»,

2. Համաձայնագրի 9.7, 9.8, 9.12, 9.13, 9.14, 14.2, 14.4-րդ կետերի դրույթները չեն հանդիսանում պարտավորություններ՝ որպես այդպիսին, այլ, մասնավորապես, հավաստումներ են, այսինքն՝ փաստերի հաստատում ՀՀ կառավարության կողմից, որոնք նախապայման են Փոխառուի կողմից գումարի փոխանցման համար,

3. ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված Համաձայնագրի 9.7-րդ և 14.2-րդ կետերում առկա են թարգմանության սխալներ, որոնք բովանդակային խնդիրներ են առաջացնում,

4. Համաձայնագրի մասնավոր-իրավական բնույթից են բխում 10.9, 12.1, 12.2, 16.1, 16.2-րդ կետերով ստանձնված պարտավորությունները:

ՀՀ սահմանադրական դատարանը կարևոր է համարում շեշտել նաև, որ Համաձայնագրի 9.13-րդ կետի համաձայն՝ «Վարկառուի համար Գնումների ուղեցույցը պայմանագրորեն պարտադիր է այնպես, ինչպես պարտադիր կլիներ, եթե Գնումների ուղեցույցը հղումով ներառված լիներ սույն Համաձայնագրում...»:

Սակայն դիմումի հետ նման ուղեցույց ՀՀ սահմանադրական դատարան չի ներկայացվել: Այն ներկայացվել է 25.04.2016թ.՝ Սահմանադրական դատարանի պահանջով, որպես հիշյալ նորմի ուժով տվյալ Համաձայնագրի բաղկացուցիչ մաս:

Գնումների ուղեցույցի նախաբանում շեշտված է, որ Զարգացման ֆրանսիական գործակալությունը պետական մարմին է: Այդ մարմնի Կանոնադրությունը ներառված է 2014 թվականի նոյեմբերի 3-ի խմբագրությամբ Ֆրանսիայի Դրամային և ֆինանսական օրենսգրքում: Օրենսգրքի R513-22 հոդվածով սահմանվում է, որ Զարգացման ֆրանսիական գործակալությունը պետական հանրային արդյունաբերական և առևտրային կազմակերպություն է: Այդ կազմակերպության Կանոնադրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն հանդիսանում է հանրային իրավունքի իրավաբանական անձ և կարող է հանդես գալ ինչպես պետության անունից, այնպես էլ որպես միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտ:

8. Վերոշարադրյալը նկատի ունենալով, ինչպես նաև արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությունը սահմանափակվում է միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝

Սահմանադրությանը համապատասխանության գնահատմամբ, Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև դիմողի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, արտահայտում է, մասնավորապես, այն ամփոփ իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց.

1. Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով դիմողի ներկայացուցչի դիրքորոշումը, Համաձայնագրի 9.7, 9.8, 9.12, 9.13, 9.14, 14.2, 14.4-րդ կետերի դրույթները՝ դրանց սահմանադրականության գնահատման տեսանկյունից, չի դիտարկում որպես Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորություններ,

2. Համաձայնագրի 10.9, 12.1, 12.2, 16.1, 16.2-րդ կետերով ստանձնված պարտավորությունները կարող են Հայաստանի Հանրապետության համար կոնկրետ իրավական հետևանքներ առաջացնել միայն այնքանով, որքանով դրանք կճանաչվեն որպես միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտի հետ ստանձնված պարտավորություն,

3. Համաձայնագրի 16.2-րդ կետով ստանձնված պարտավորությունը կարող է մեկնաբանվել միայն որպես Համաձայնագրի մասնավոր իրավական բնույթից բխող դատավարական անձեռնմխելիությունից հրաժարում /«Պետությունների և նրանց գույքի դատավարական անձեռնմխելիության մասին» ՄԱԿ-ի 2004 թվականի դեկտեմբերի 2-ի կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով, ինչն արտացոլում է այս հարցում ձևավորված միջազգային սովորութային իրավունքը/,

4. Օտարերկրյա պետություններում Զարգացման ֆրանսիական գործակալության կողմից ֆինանսավորվող պայմանագրերով նախատեսված գնումների ուղեցույցը Համաձայնագրի 9.13-րդ կետի ուժով հանդիսանում է քննության առարկա Համաձայնագրի բաղկացուցիչ մաս,

5. վավերացման ներկայացնելիս Համաձայնագրում պետք է բացառվեն թարգմանական բնույթի սխալները, որոնք հատկապես բովանդակային խնդիրներ են առաջացնում /մասնավորապես՝ 9.7, 9.13 և 14.2-րդ կետեր/:

9. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության համար սույն Համաձայնագրով ստանձնված պարտավորություններն իրավակիրառ պրակտիկայում կիրառելի են սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, հիմք ընդունելով որոշման պատճառաբանական մասի 9-րդ կետի պահանջը, նկատի ունենալով, որ ՀՀ Ազգային ժողովը ՀՀ միջազգային պայմանագրերը վավերացնում է ելնելով դրանց առնչվող՝ ՀՀ սահմանադրական դատարանի

որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29 ապրիլի 2016 թվականի
ՍԴՈ-1269



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔՆԱՐԻԿ ԵՎ ԴԱՎԻԹ ԹԱՀՄԱԶՅԱՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 601-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

3 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողներ Քնարիկ և Դավիթ Թահմազյանների ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի և Ա. Ղազարյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քնարիկ և Դավիթ Թահմազյանների դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Քնարիկ և Դավիթ Թահմազյանների՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքա-

գրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՊԱՐԶԵՑ:

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Նվիրատվությունը վերացնելը» վերտառությամբ՝ սույն գործով վիճարկվող 601-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Նվիրատուն իրավունք ունի վերացնել նվիրատվությունը, եթե նվիրառուն ոտնձգություն է կատարել նրա, նրա ընտանիքի անդամներից կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ կամ նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ»:

Ընդունման պահից ի վեր ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը բազմիցս փոփոխվել և լրացվել է, բայց 601-րդ հոդվածը մնացել է անփոփոխ:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Լ. Սահրադյանը և Ռ. Ալիխանյանը հայց են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Դավիթ և Քնարիկ Թահմազյանների անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի հիմքով, անվավեր ճանաչելու պահանջի:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2013թ. մայիսի 2-ի վճռով (գործ ԵԿԴ0860/02/12) վերոնշյալ հայցը մերժել է: Հայցվորները վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2013թ. օգոստոսի 7-ի որոշմամբ մասնակիորեն բավարարել է հայցվորների վերաքննիչ բողոքը բեկանել է առաջին ատյանի դատարանի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանող կողմը: ՀՀ վճռաբեկ դատարանի 2013թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2014թ. հոկտեմբերի 10-ի վճռով վերստին հայցվորների հայցը մերժել է, գտնելով, որ նվիրատուի կողմից նվիրատուի կամ նրա ընտանիքի անդամների կյանքի

նկատմամբ ոտնձգություն կատարելու հանգամանքը պետք է հաստատված լինի քրեական գործով կայացված դատավճռով: Այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք են բերել հայցվորները:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2015թ. մայիսի 19-ի որոշմամբ բավարարել է հայցվորների վերաքննիչ բողոքը և փոփոխել առաջին ատյանի դատարանի վճիռը՝ վերացնելով վիճարկվող նվիրատվության պայմանագիրը և, որպես հետևանք՝ անվավեր ճանաչելով նաև հետագայում կնքված նվիրատվության պայմանագիրը: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածը, սահմանելով նվիրատվությունը վերացնելու իրավական հիմքերը, քրեական գործով կայացված դատական ակտը չի համարում միակ և պարտադիր ապացույց:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2015թ. հուլիսի 8-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է, նկատի ունենալով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և որ գործի ելքի վրա ազդող առերևույթ դատական սխալ թույլ չի տրվել:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշումը, որը սույն գործով հանդիսանում է վերջնական դատական ակտ, դիմողներին է ուղարկվել 2015թ. հուլիսի 22-ին:

3. Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասը, որը կիրառվել է իրենց նկատմամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 1-ին, 3-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ և 83.5-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողները, վերլուծելով քաղաքացիական և քրեական օրենսգրքերի որոշ դրույթներ, հանգել են այն հետևությանը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված անձանց կյանքի դեմ ուղղված ոտնձգությունը, ինչպես նաև դիտավորյալ մարմնական վնասվածք պատճառելը վերաբերում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքներին, ինչը նշանակում է, որ դրանք քրեորեն պատժելի են, իսկ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն կատարելու փաստը կարող է հաստատվել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Դիմողների կարծիքով՝ քրեական վարույթի շրջանակներում գործող անմեղության կանխավարկածի սկզբունքը և չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու օրենսդրական պահանջը քաղաքացիական դատավարությունում կիրառելի չեն, քանի որ այդ դեպքում դատարանի առջև դրված չէ մարդու մեղավորությունը:

որոշելու հարցը: Ըստ դիմողների՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածում օգտագործված տերմինները չեն կարող մեկնաբանվել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան նորմերից անկախ և քրեական օրենսդրությունից դուրս:

Դիմողների համոզմամբ՝ «ստեղծվել է մի անորոշ իրավիճակ, երբ առանց օրինական ուժի մեջ մտած դատավճռի անձի մեղավորությունը հաստատելու՝ այն դրվում է նվիրատվության պայմանագրի վերացման հիմքում՝ անձի համար առաջացնելով բացասական իրավական հետևանքներ, իսկ իրավական անորոշությունը, իր հերթին, իրավակիրառողին տալիս է լայն մեկնաբանության հնարավորություն՝ առաջացնելով իրավունքի գերակայության և իրավական պետության սկզբունքների խախտում՝ դրանով իսկ սահմանափակելով մարդու իրավունքները»:

Հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-630 և ՄԴՈ-902 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ դիմողները պնդում են, որ վիճարկվող հոդվածի դրույթները հակասահմանադրական են օրենքի որակի չափանիշին չհամապատասխանելու կամ իրավական բաց պարունակելու պատճառով՝ դրանում ամրագրված չէ անհրաժեշտ փաստակազմ՝ դատավճռի առկայությունը, որից էլ իր հերթին կրխեին ապացույցների ցանկի, ապացուցման պարտականության, ապացուցման բեռի բաշխման որոշակիություն և կանխատեսելիություն:

Դիմողները եզրահանգում են, որ քաղաքացիական գործով որոշում կայացնելիս և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածը կիրառելիս ցանկացած դեպքում դատավորը պետք է բարձրաձայնի դատավարության մասնակցի կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի հատկանիշներ պարունակող արարքի կատարման մասին, ինչը հակասում է անմեղության կանխավարկածի սկզբունքին:

4. Ըստ պատասխանողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով կյանքի դեմ ուղղված ոտնձգությունը ներառում է գործողությունների ավելի լայն շրջանակ, քան քրեական օրենսգրքով սահմանված արարքները: Այսինքն՝ օրենսդիրը որպես նվիրատվության վերացման հիմք նախատեսում է ոչ միայն հանցագործությունը, այլ նաև քրեորեն պատժելի հանցագործություններ չորակվող արարքներ, այդ իսկ պատճառով իրավական դրույթը սահմանելիս չի նշել, որ կյանքի դեմ ոտնձգություն կամ պատճառված մարմնական վնասվածքի փաստը պետք է հաստատված լինի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Պատասխանողի կարծիքով՝ նվիրատվության պայմանագիրը նվիրատուի և նվիրառուի միջև ենթադրում է վստահության վրա հիմնված հարաբերություններ, և նվիրատվության վերացման խնդիր է առաջ գալիս

այն ժամանակ, երբ նվիրատուն ակնհայտ երախտամոռություն է դրսևորում:

Վերլուծելով վիճարկվող իրավադրույթը՝ պատասխանողը պնդում է, որ նվիրատուն նվիրատվությունը վերացնելու հարց կարող է բարձրացնել երկու դեպքում՝ կամ որոշակի հանրոքեն վտանգավոր արարք կատարելու դեպքում, կամ դրույթի դիսպոզիցիայում մատնանշված այնպիսի գործողություններ կատարելու դեպքում, որոնք թեն քրեական պատասխանատվության չեն հանգեցնում, բայց կարող են հիմք հանդիսանալ նվիրատվությունը վերացնելու համար:

Պատասխանողի համոզմամբ՝ մի շարք դեպքերում կյանքի դեմ ուղղված ոտնձգության առկայության պայմաններում հնարավոր չէ ակնկալել դատավճռի առկայություն, և հնարավոր են դեպքեր, երբ նվիրատուն չդիմի իրավապահ մարմիններին կամ դիմելուց հետո հաշտություն կնքի նվիրատուի հետ, հետևաբար՝ տվյալ դեպքում նվիրատուի կողմից որոշակի արարք կատարելու փաստը չի կարող ապացուցված լինել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթի իրավական բաց կամ անորոշություն պարունակելու հարցին, պատասխանողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-630 և ՄԴՈ-1142 որոշումները, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, կարծում է, որ այն ձևակերպված է բավականաչափ հստակ:

Պատասխանողը գտնում է, որ դիմողներն ըստ էության վիճարկում են նորմի կիրառման իրավաչափությունը և միջնորդում է կարճել գործի վարույթը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2015 թվականի դեկտեմբերի 22-ից ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթներ: Սահմանադրության նախկին խմբագրությամբ 1-ին հոդվածը մնացել է անփոփոխ, 3-րդ հոդվածն ամրագրում է նույն դրույթը՝ որոշակի խմբագրական փոփոխություններով, իսկ 18, 19 և 21-րդ հոդվածներում ամրագրված դրույթներն ամփոփված են 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 61, 63 և 66-րդ հոդվածներում: Ինչ վերաբերում է դիմողի կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 83.5-րդ հոդվածին, ապա ՀՀ Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխությունների եզրափակիչ և անցումային դրույթների 209-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ Սահմանադրության 4-րդ գլխի դրույթները մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը գործում են, բացառությամբ այդ հոդվածի:

6. ՀՀ սահմանադրական դատարանը, ելնելով դիմումում առաջադրված հարցերի բովանդակությունից, սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավադրույթի սահմանադրականության հարցը որոշելու համար անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- արդյոք վիճարկվող դրույթն իրավական պետության չափորոշիչներին համապատասխան ձևակերպված է այնքան որոշակի և հստակ, որ հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին միանշանակ ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել այդ պահանջներին (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին և 79-րդ հոդվածներ),

- արդյոք վիճարկվող դրույթը երաշխավորում է մարդու իրավունքների պաշտպանությունն ու հարգումը հանրային իշխանության կողմից, ինչպես նաև արդար դատաքննության սահմանադրական իրավունքի և դրա կարևոր տարր հանդիսացող դատարանի մատչելիության սկզբունքի լիարժեք իրացումը և չի հակասում անձի անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական սկզբունքին (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված, 61-րդ հոդվածի 1-ին մաս, 63-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր և 66-րդ հոդված):

7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել

դա-տարանի մեկնաբանություններով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «Չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց՝ իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով, հաճախ օրենքներում առկա են տերմիններ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի խնդիր է» (The Sunday Times v. the United Kingdom (Application no. 6538/74, 26/04/79, §49):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին:

Չնավորված դատական իրավակիրառական պրակտիկան վկայում է այն մասին, որ նվիրատվության պայմանագրի վերացումը հնարավոր է նաև առանց նվիրատուի կողմից նվիրատուի կամ նրա հարազատի կյանքի նկատմամբ ոտնձգության փաստը քրեական դատավարության կարգով հաստատված լինելու:

Օրենսդիրը քաղաքացիական օրենսգրքի վիճելի դրույթը շարադրել է բավարար հստակությամբ՝ ուղղակի կապ չսահմանելով քաղաքացիական և քրեական իրավունքի առարկա հանդիսացող կարգավորումների միջև, հնարավոր համարելով նվիրատուի կողմից նվիրատուի կամ նրա հարազատների նկատմամբ ոտնձգության փաստի հաստատումը քաղաքացիական դատավարության շրջանակներում:

Վեճի առարկա իրավակարգավորումը համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1191-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման հետ՝ պետք է նշել, որ վերջինը նույնպես վերաբերում է անհատույց գույք ստացող անձի «անարժանությանը»: Այս դեպքում, սակայն, խոսքը վերաբերում է ժառանգությունից մեկուսացնելուն, որը քննարկման առարկա է դառնում միայն ժառանգատուի մահից հետո, և քանի որ մահվան փաստի ուժով նա չի կարող իրականացնել իր քաղաքացիական իրավունքները, օրենսդիրը սահմանել է, որ այդ դեպքում ժառանգությունից մեկուսացնելու համար հիմք են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և (կամ) վճիռը:

Ինչ վերաբերում է դիմողների կողմից բարձրացված իրավական բացի խնդրին, ապա ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր ՄԴՈ-1143 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումը. «... օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենս-

դրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը...»:

8. Անդրադառնալով դիմողների այն դիրքորոշմանը, որ վիճարկվող իրավադրույթը հակասության մեջ է մտնում անմեղության կանխավարկածի հետ, ՀՀ սահմանադրական դատարանը նշում է, որ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և, հետևաբար, առավելապես վերաբերում է քրեական դատավարությանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ անմեղության կանխավարկածը «...կիրառվում է, երբ անձը ... մեղադրվում է քրեական հանցագործության կատարման մեջ»: Դատարանը բազմիցս ընդգծել է, որ սա ինքնավար հայեցակարգ է և պետք է մեկնաբանվի իր նախադեպային իրավունքով սահմանված երեք չափանիշներին համապատասխան, այն է՝ ներպետական օրենսդրությամբ դատավարությունների դասակարգման, նրանց էական բնույթի և հնարավոր պատժի աստիճանի և խստության (Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Engel and Others v. the Netherlands), 8 հունիսի 1976թ., կետ 82, Մերիա A թիվ 22 և Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Phillips v. the United Kingdom), թիվ 41087/98, կետ 31, ՄԻԵԴ 2001 VII, Ալենն ընդդեմ Միացյալ Թագավորության (Allen v. UK), թիվ 25424/09, 2013, §95):

Նվիրատվությունը քաղաքացիաիրավական հարաբերություն է, որի հետ կապված վեճերը քննության կարող են առնվել միայն քաղաքացիական դատավարության կանոններով: Պետք է նշել, որ քաղաքացիական դատավարության կողմերը նույնպես օգտվում են որոշակի դատավարական իրավունքներից և երաշխիքներից, ինչը հնարավորություն է տալիս նրանց իրականացնել դատական պաշտպանության իրենց իրավունքը (դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա, քաղաքացիները կարող են դատարանում իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով, քաղաքացիական գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը նույնպես առաջացնում է պատասխանատվություն և այլն):

Քաղաքացիական իրավահարաբերությունների ոլորտում նվիրատուի կարևորագույն իրավունքներից է նվիրատվության վերացումը, եթե նվիրատուն ոտնձգություն է կատարել նրա, նրա ընտանիքի անդամներից

կամ մերձավոր ազգականներից որևէ մեկի կյանքի դեմ կամ նվիրատուին դիտավորյալ պատճառել է մարմնական վնասվածքներ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մաս):

Նման իրավակարգավորումը բխում է նվիրատվության պայմանագրի՝ որպես անհատույց գործարքի բնույթից և ուղղված է նախևառաջ նվիրատուի իրավունքների պաշտպանությանը և պայմանագրի կողմերի շահերի միջև հավասարակշռության ապահովմանը:

Չնայած նրան, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածում նշված իրավախախտումներն առերևույթ կարող են դասվել քրեորեն պատժելի արարքների շարքին, սակայն պարտադիր չէ, որ ոտնձգության բոլոր դրսևորումները քրեորեն պատժելի լինեն՝ այն կարող է և չպարունակել քրեորեն պատժելի արարքի հանցակազմի բոլոր հատկանիշները, բայց, միևնույն է, որոշակի վտանգ ներկայացնել նվիրատուի համար և բացասական բարոյահոգեբանական հետևանքներ առաջացնել: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ նվիրատուի կողմից նվիրատուի կամ նրա հարազատի կյանքի կամ առողջության դեմ ոտնձգության դեպքում առկա է նաև քաղաքացիական իրավախախտում, ինչը կարող է առաջացնել հետպայմանագրային պատասխանատվություն: Ըստ էության, նվիրատվության վերացումը հանդես է գալիս որպես յուրահատուկ քաղաքացիաիրավական սանկցիա:

Անդրադառնալով քաղաքացիական հայցերին՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ, անկախ այն հանգամանքից, թե քրեական դատավարություններն ավարտվել են կարճամաճ կամ արդարացմամբ, քրեական պատասխանատվությունից ազատումը չպետք է խոչընդոտի ապացուցման նվազ բեռի հիմքով նույն փաստերից ծագող փոխհատուցում վճարելու քաղաքացիական պատասխանատվության սահմանմանը (Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի (Ringvold v. Norway), թիվ 34964/97, կետ 36, ՄԻԵԴ 2003 II, Յ.-ն ընդդեմ Նորվեգիայի (Y. v. Norway), թիվ 56568/00, կետ 39):

Վելլան ընդդեմ Մալթայի գործով (Vella v. Malta, 69122/10, 11.02.2014, §28) ՄԻԵԴ-ը նշել է, որ քրեական դատավարության ընթացքում տարբեր երաշխիքներ են գործում մեղադրյալի օգտին, և հնարավոր է, որ նա անմեղ ճանաչվի ոչ բավարար ապացույցներ լինելու պատճառով, բայց չի կարող մյուս կողմին գրկել ապացուցման այլ բեռով հատուցում պահանջելու համար դատարանի մատչելիության հնարավորությունից: ՄԻԵԴ-ը գտել է, որ նման լայն մեկնաբանությունը ոչ միայն չի բխում անմեղության կանխավարկածի վերաբերյալ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից, այլև ընդհանուր հիմք չունի Եվրախորհրդի անդամ երկրների իրավական համակարգերում, այլապես քրեական գործի կարճումը կամ ամբաստանյալի արդարացումը կարող է հանգեցնել տուժողի՝ քաղաքացիական գործով դատարան դիմելու իրավունքի կամայական կամ անհա-

մաշափ սահմանափակման:

Անհրաժեշտ է փաստել, որ քաղաքացիական գործերով ապացուցման բեռը և քրեական գործերով ապացուցման բեռը տարբերվում են իրարից՝ քաղաքացիական գործերով այն կրում են կողմերը, իսկ քրեական գործերով՝ պետությունը՝ հանձին մեղադրող կողմի:

Քաղաքացիական դատավարության շրջանակներում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նվիրատվությունը վերացնելու մասին դրույթի կիրառման համար դիմող կողմը պարտավոր է դատարանին հիմնավոր ապացույցներ ներկայացնել, որոնք վկայում են նվիրատուի կողմից նվիրատուի կամ նրա հարազատների կյանքի կամ առողջության դեմ կատարված ոտնձգության մասին, բայց միայն քրեական գործով կայացված դատավճիռը չէ, որ կարող է դիտվել որպես այդպիսին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործ քննող դատարանի խնդիրն է գնահատել՝ արդյոք ոտնձգությունն առկա է, թե՛ ոչ, և յուրաքանչյուր գործով դատարանը պետք է դրսևորի անհատական մոտեցում՝ խուսափելով օրենքի մեխանիկական կիրառումից՝ ելնելով գործի փաստական հանգամանքներից և առաջնորդվելով ներքին համոզմամբ: Քաղաքացիական գործ քննող դատարանի խնդիրը չէ տալ այդ գործողությունների քրեաիրավական գնահատականը, այլ ներկայացված ապացույցների հիման վրա պարզել դրանց առկայությունը և համապատասխան քաղաքացիաիրավական հետևանքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց:

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

3 մայիսի 2016 թվականի
ՍԴՈ-1270



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՍԱՔԵՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՑԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում) դիմողների ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի, Ա. Այվազյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016 62

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լ. Ալեքսանյանի, Ն. Սաքեյանի, Շ. Վարդանյանի և Գ. Ավետիսյանի՝ 2016 թվականի հունվարի 11-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Նոտարիատի մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքները, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001թ. դեկտեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 2002թ. մարտի 1-ից:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի՝ «Նոտարի գույքային պատասխանատվությունը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը սահմանում է.

«Նոտարի կողմից իր ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար Հայաստանի Հանրապետությունը պատասխանատվություն չի կրում»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004թ. մարտի 16-ին և ուժի մեջ է մտել 2004թ. դեկտեմբերի 31-ից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Հիմնական հասկացությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, որը լրացվել է 17.12.14թ. ՀՕ-257-Ն օրենքով, ամրագրում է՝

«Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական

այլ մարմիններ...»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ֆ. Մկրտչյանն այլ անձի պատկանող անձնագրի օգտագործմամբ 04.07.2007թ. գնել է Երևան քաղաքի Շերամի փողոցի 113-րդ շենքի հ. 81 բնակարանը և ստացել սեփականության իրավունքի գրանցման վկայական:

04.08.2007թ. Ֆ. Մկրտչյանը ներկայանալով այլ անձի անունով՝ ներկայացնելով կեղծ անձնագիր, «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով վերը հիշատակված բնակարանը վաճառել է դիմող Լուսինե Ալեքսանյանին և դրա դիմաց նրանից ստացել 11.390.000 ՀՀ դրամին համարժեք 34.500 ԱՄՆ դոլար: Նույն օրը Ֆ. Մկրտչյանը կրկին ներկայացնելով նշված անձնագիրը՝ «Շենգավիթ» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով այդ բնակարանը վաճառել է դիմող Նարինե Մաքեյանին և վերջինից տարբեր տարադրամներով ստացել 10.938.916 ՀՀ դրամին համարժեք գումար:

06.08.2007թ. Ֆ. Մկրտչյանը վերը նշված եղանակով «Մալաթիա» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով նույն բնակարանը վաճառել է նաև դիմող Հասմիկ Վարդանյանին և դրա դիմաց նրանից ստացել 11.459.360 ՀՀ դրամին համարժեք 34.000 ԱՄՆ դոլար: Նույն օրը Ֆ. Մկրտչյանը վերստին ներկայացնելով վերը նշված կեղծ անձնագիրը՝ «Նոր Նորք» նոտարական գրասենյակի նոտարի կողմից վավերացված առուվաճառքի պայմանագրով նույն բնակարանը 10.054.282 ՀՀ դրամին համարժեք 29.800 ԱՄՆ դոլար գումարով վաճառել է դիմող Գագիկ Ավետիսյանին:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի 06.09.2011թ. ԵԿԴ/0047/01/11 դատավճռով Ֆ. Մկրտչյանը, ի թիվս այլ հանցագործությունների, մեղավոր է ճանաչվել նաև սույն գործով դիմողների առանձնապես խոշոր չափերով գումարները խարդախությամբ հափշտակելու համար և դատապարտվել ազատազրկման: Դատարանը վճռել է նաև Ֆ. Մկրտչյանից հօգուտ սույն գործով դիմողների, որպես հանցագործությամբ պատճառված գույքային վնասի հատուցում, բռնագանձել առուվաճառքի պայմանագրերով նրանց վճարած գումարները:

Դատապարտյալին պատկանող գույքի բացակայության պատճառով հանցագործության հետևանքով դիմողների կրած գույքային վնասի հատուցման մասին դատարանի դատավճիռը չի կատարվել:

05.05.2014թ. դիմողների ներկայացուցիչները դիմել են ՀՀ արդարադա-

տության նախարարին՝ նոտարների գործողությունների հետևանքով իրենց կրած գույքային վնասի հատուցման պահանջով: ՀՀ արդարադատության նախարարությունը 23.05.2014թ. №10/3396-14 գրությամբ վերադարձրել է դիմումը՝ պատճառաբանելով. «... դիմումով առաջադրված պահանջը չի մտնում ինչպես ՀՀ արդարադատության նախարարության, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասության մեջ...»:

Վերը նշված դիմումով ակնկալվող բարենպաստ վարչական ակտ կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին դիմողներն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Վարչական դատարանը 2014թ. դեկտեմբերի 25-ի վճռով (վարչական գործ թիվ ՎԴ/3369/05/14) հայցը մերժել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2015թ. հուլիսի 8-ի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի վերը նշված վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը նույնպես մերժվել է: Միաժամանակ, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում գործի քննության ընթացքում դիմողների անունից «... գործի վարույթը կասեցնելու, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու հարցով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ» միջնորդություն է ներկայացվել, որը Վերաքննիչ դատարանի 18.06.2015թ. արձանագրային որոշմամբ մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2015թ. նոյեմբերի 4-ի որոշմամբ գտել է, որ նշված վարչական գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար անհրաժեշտ հիմքեր չկան և դիմողների անունից ներկայացված բողոքի վարույթ ընդունելը մերժել է:

3. Դիմողները գտնում են, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը՝ բացառելով նոտարի ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար Հայաստանի Հանրապետության պատասխանատվությունը, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը՝ նոտարին չդիտելով որպես վարչարարություն իրականացնող մարմին, հակասում են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 1-ին, 3, 23, 28, 61, 63, 66, 10 և 59, 76, 75-րդ հոդվածներին:

Դիմողները գտնում են, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը նոտարի ներկայությամբ կնքելը և դրա նոտարական վավերացումը կողմերի հայեցողությանը թողնված չէ՝ դա կամավոր գործողություն չէ, այլ կողմերի պարտականությունն է, որը չկատարելն իրավունքի ուժով

հանգեցնում է գործարքի առոչնչության:

Դիմողները գտնում են, որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով ապահովված չէ արդյունավետ կառուցակարգ անձանց գույքային իրավունքների պաշտպանության և կրած վնասի վերականգնման համար, քանի որ «նոտարի իրավունակության և/կամ գործունակության դադարելու ցանկացած դեպքում որևէ մեկը պատասխանատվություն չի կրում նոտարի կողմից իր ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով պատճառված վնասի համար կամ նոտարի պաշտոնավարումը դադարելուց հետո, նյութաիրավական տեսանկյունից, նոտարի իրավահաջորդ գոյություն չունի: ... Հնարավոր են նաև դեպքեր, երբ բացակայում է առանձին վերցված նոտարի մեղքը, սակայն կառուցակարգերի անկատարության պատճառով անձինք դարձել են իրավունքի խախտման գոհ»:

Ըստ դիմողների՝ խնդրո առարկա իրավակարգավորման հետևանքով անձինք, այդ թվում նրանք, ովքեր նոտարի ծառայողական պարտականությունների խախտման հետևանքով ունեն «տուժողի» կարգավիճակ, զրկվում են իրավական պաշտպանության իրավունքից:

Իրենց դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողները վկայակոչում են սեփականության իրավունքի երաշխավորման, ապահովման և պաշտպանության վերաբերյալ Սահմանադրական դատարանի 12.07.2011թ. ՄԴՈ-983 որոշումը և այդ որոշմամբ վկայակոչված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) Մեծ պալատի՝ Օներյիլդիզի ընդդեմ Թուրքիայի գործով (Oneryildiz v. Turkey 48939/99) 2004թ. նոյեմբերի 30-ի վճռի 134-րդ կետը:

Ինչ վերաբերում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետին, ապա այն դիմողների համոզմամբ պարունակում է իրավական բաց, քանի որ չի ներառում նոտարներին՝ որպես հանրային ծառայություններ, գործառույթներ իրականացնող վարչական մարմնի: Դիմողները գտնում են, որ օրենսդիրը դրանով արտադատական իրավական պաշտպանությունից և վերահսկողությունից դուրս է թողել մի ամբողջ ոլորտ՝ նոտարների հետ իրավահարաբերությունները:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ վիճարկվող իրավադրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի «վարչական մարմիններ» հասկացության մեջ նոտարները ներառվել չեն կարող, քանի որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 15-րդ

հողվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած վճարովի ծառայությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը և, հետևաբար, որպես անհատ ձեռնարկատեր նրանք գործունեություն են իրականացնում իրենց ռիսկով, որի համար, ինչպես այլ անհատ ձեռնարկատերերի դեպքում, պետությունը պատասխանատվություն չի կրում:

Պատասխանողը գտնում է, որ նոտարի գործունեության հանրային բնույթ կրելը պայմանավորված է արդարադատությանը նպաստելու՝ նոտարների առաքելությամբ, որը, վարչական մարմիններին բնորոշ գործադիր-կարգադրիչ գործունեություն չլինելով, վարչարարություն չի հանդիսանում:

Ըստ պատասխանողի՝ նոտարիատի գործող համակարգն արդյունավետ կառուցակարգ է քաղաքացիների կողմից իրենց իրավունքների իրացման համար: Այն, որ կոնկրետ գործով անձանց վնաս է պատճառվել խարդախության միջոցով, չի կարող տուժողների մոտ իրավաչափ ակնկալիք առաջացնել, որ հանցագործությամբ պատճառված վնասը պետք է հատուցվի պետության կողմից: Պետությունը չի կարող այնպիսի մեխանիզմ ներդնել, որով կբացառվի հանցագործությունների և դրանց հետևանքով անձանց վնաս պատճառելու հանգամանքը, կամ էլ կհատուցվի բոլոր հանցագործությունների հետևանքով տուժողներին պատճառված նյութական վնասը: Որպես նման վնասները հատուցելու մեխանիզմ պետությունը սահմանել է դրանք վնաս պատճառած անձանց կողմից հատուցելու պարտականություն:

5. ՀՀ նոտարական պալատը սահմանադրական դատարանի պահանջով ներկայացրել է դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, մասնավորապես հայտնելով, որ.

- Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող նոտարական համակարգը փոխառված է ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներում լայնորեն կիրառվող լատինական մոդելից, որտեղ նոտարներն իրավակիրառ գործընթացում կոչված են ապահովելու հանրային և մասնավոր շահերի զուգակցումը: Ու թեև նոտարն իրականացնում է հանրային գործառույթներ, իր լիազորություններն ստանում է պետությունից և դրանք իրականացնում պետության անունից, սակայն վերջինս չի հանդիսանում պետական մարմին, օժտված չէ պետա-իշխանական լիազորություններով, որը կապահովի վերջինիս կամքի պարտադիրությունն իրավահարաբերության մյուս կողմի համար, այլ գործում է անկախ և սեփական պատասխանատվությամբ,

- ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ

նոտարական գործողությունների հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցումն ապահովելու նպատակով օրենսդրական մակարդակով ամրագրված է ինչպես նոտարի գույքային պատասխանատվության, այնպես էլ նոտարի կողմից իր պատասխանատվության ռիսկն ապահովագրելու պարտադիր պահանջ,

- ամփոփելով նոտարի իրավական կարգավիճակի և պատասխանատվության վերաբերյալ համանման իրավական կարգավորումներն այլ պետություններում՝ նոտարական պալատը հանգել է այն հետևությանը, որ, որպես կանոն, պետությունները նոտարի գործողությունների համար պատասխանատվություն չեն կրում:

Նոտարական պալատը գտնում է, որ, հաշվի առնելով նոտարի գործունեության հանրային նշանակությունը՝ պետությունը նոտարի կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով անձանց պատճառված վնասի համար գույքային պատասխանատվության և այդպիսի պատասխանատվության ապահովագրության պարտադիր պահանջի օրենսդրական ամրագրմամբ ապահովել է սեփականության իրավունքի պաշտպանությունը:

6. Սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ելնել հանրային իշխանության կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից և այդ համատեքստում պարզել և գնահատել.

- նոտարների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, նրանց գործունեության և դրա հետևանքով անձին պատճառված վնասի հատուցման իրավական հիմքերը,

- արդյոք նոտարի գործունեության հետևանքով պատճառված վնասի համար գույքային պատասխանատվություն կրելուն ուղղված իրավադրույթներն անձի խախտված իրավունքի վերականգնումն ապահովող անհրաժեշտ իրավակազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր են նախատեսում:

7. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Սահմանադրական հիշյալ դրույթը հանրային իշխանությունների վրա դնում է երկու հստակ պարտականություն՝ հարգել, մասնավորապես, ձեռնպահ մնալ որևէ անհարկի միջամտությունից, և պաշտպանել, այսինքն՝ որոշակի գործողությունների ամբողջության

միջոցով երաշխավորել, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չխախտվեն կամ խախտվելու դեպքում վերականգնվեն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գնահատելու համար, թե արդյոք հանրային իշխանությունը կատարել է նշված պարտականությունները, անհրաժեշտ է անդրադառնալ համապատասխան հիմնական իրավունքին կամ ազատությանն առնչվող սահմանադրական դրույթներին: Սույն գործի շրջանակներում սահմանադրաիրավական վեճն առնչվում է սեփականության իրավունքի իրացմանը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նշված դրույթը յուրաքանչյուրի համար երաշխավորում է ոչ միայն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները, այլ նաև՝ օրինական հիմքով սեփականություն ձեռք բերելու իրավունքը, ինչը պետությունից պահանջում է օրինական հիմքն այնպես կարգավորել, որ դրանից անձը վնաս չկրի, այլ երաշխավորվի սեփականություն ձեռք բերելու իրավունքը:

Նշված իրավունքների իրականացման արդյունավետ իրավակազմակերպական կառուցակարգեր և համապատասխան ընթացակարգեր չնախատեսելու դեպքում անձին կարող է վնաս հասցվել:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ ՄԻԵԿ անդամ պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված՝ անձի սեփականության իրավունքը խախտելուց, այլ նաև ընդունեն այնպիսի օրենսդրություն, որը կպաշտպանի անձի սեփականության իրավունքն այլ անձանց ոտնձգություններից (Սովտրանսավտո հոլդինգն ընդդեմ Ուկրաինայի (Sovtransauto holding v. Ukraine, 25/07/2002թ. վճիռ, գանգատ թիվ 48553/99, կետ 96):

Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել ՄԴՈ-983 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումն առ այն, որ «Հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության խնդիրը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը ոչ միայն նշանակում է, որ սեփականատերը՝ որպես սուբյեկտիվ իրավունքների կրող, իրավասու է պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև ենթադրում է պետության պարտականությունը՝ անձի սեփականությունը պաշտպանելու անօրի-

նական ոտնձգություններից: Պետության այս պարտականությունը խնդրո առարկա իրավիճակում պահանջում է ապահովել արդյունավետ կառուցակարգ հանցագործությունից տուժած անձանց գույքային իրավունքների պաշտպանության և կրած վնասի վերականգնման համար»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ամրագրվել է նոր դրույթ՝ ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածը, որն օրենսդրին ուղղակիորեն պարտավորեցնում է հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս սահմանել այնպիսի կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը:

8. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքների համապատասխան, իրականացնում է այդ օրենքով նախատեսված նոտարական գործողություններ և ծառայություններ, այդ թվում՝ փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու միջոցով:

Նոտարը, վավերացնելով փաստաթուղթը, «Հայաստանի Հանրապետության անունից» հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը: Նրա ստորագրությամբ ու կնիքով վավերացված կամ հաստատված փաստաթուղթն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառնությունների իրականացումը պատվիրակել է նոտարին: Ընդ որում, նոտարին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տալիս է Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կնիք, որի վրա նշված են «Հայաստանի Հանրապետություն» բառերը, և որով վավերացվում են համապատասխան փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալն ընդգծում է տվյալ գործառնության կարևորությունը հանրային կյանքի կազմակերպման տեսանկյունից: Ուստի նոտարը չի կարող պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր, ինչպես ներկայացվում է պատասխանողի կողմից:

Միաժամանակ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարական գործողությունների կամ նոտարի մա-

տուցած վճարովի ծառայությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճարելի դատարանի թիվ ՎԴ/5014/05/09 վարչական գործով ընդունված որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ նոտարի իրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում ունի երկակի՝ հանրային-իրավական և մասնավոր-իրավական բնույթ:

Վերլուծելով նոտարի իրավական կարգավիճակի սահմանադրաիրավական բնույթը՝ Մահմանադրական դատարանը փաստում է, որ «Նոտարիատի մասին» առանձին օրենքով օրենսդիրը կարգավորել է նոտարների գործունեությունը, հետևաբար՝ վարչական մարմինների ցանկում նոտարներին չընդգրկելն օրենսդրական բաց համարվել չի կարող: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը կիրառելի չէ նոտարների նկատմամբ, այն վերաբերում է միայն վարչարարություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց գործունեության իրավական հիմքերն այլ են:

ՀՀ սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում նաև, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է գտնվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-902-24.11.2015-ՊԻ-010/0) օրենսդրական նախաձեռնություն:

ՀՀ կառավարության կողմից առաջարկվող փոփոխություններով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում պետք է ամրագրվի 2-րդ մաս, ըստ որի՝ «... վարչական մարմին է համարվում նաև այն մարմինը կամ անձը, որին օրենքով ուղղակիորեն վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություն»: Փոփոխության նախագծի հիմնավորումներում նշվում է, որ «վարչական մարմին» հասկացությունը չի կարող ներառել միայն տվյալ հոդվածում նշված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, քանի որ կան նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ չհանդիսացող այլ մարմիններ և անձինք, որոնց օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վերապահվել է վարչարարություն իրականացնելու լիազորություններ:

Մահմանադրական դատարանը կարևորում է այնպիսի իրավակարգավորումների անհրաժեշտությունը, որոնց շրջանակներում իր որոշ վարչական լիազորություններ մասնավոր անձանց փոխանցելու միջոցով պետությունը չի կարող հրաժարվել այդ լիազորությունների ոչ արդյունավետ իրականացման համար պատասխանատվությունից:

9. Անդրադառնալով այն հարցին, թե որքանով են պետության կողմից ստեղծված ընթացակարգերը երաշխավորում նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի ամբողջական հատուցումը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն պետք է գնահատել նույն օրենքի համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների հետ և արձանագրում է հետևյալը.

նախ. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոտարի կողմից վավերացված կամ հաստատված փաստաթուղթն անվավեր ճանաչելը, կամ այն դատական կարգով փոփոխելն ինքնին չի առաջացնում այդ փաստաթուղթը վավերացրած կամ հաստատած նոտարի պատասխանատվությունը, եթե դա չի փոփոխվել կամ անվավեր ճանաչվել նոտարական գործողություններ իրականացնելիս նոտարի կողմից թույլ տված օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտման պատճառով: Բոլոր դեպքերում, խոսքը կարող է վերաբերել միայն մեղքի առկայության դեպքում պատասխանատվությանը: Դատարանի կողմից պետք է հաստատված լինի նոտարի մեղքը խախտման կամ օրենսդրությանը հակասող նոտարական գործողության կատարման մեջ:

Երկրորդ՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությանը համապատասխան՝ նոտարը գույքային պատասխանատվություն է կրում միայն իր կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտավորությունը մեղքի միայն մի ձևն է: Մեղքի մյուս ձևերը բացահայտված են ՀՀ քրեական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: Չբացառելով իրականության մեջ նոտարի կողմից իր գործառույթների իրականացման արդյունքում անձին անզգուշությամբ, մասնավորապես, անփութության հետևանքով վնաս պատճառելու հնարավորությունը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս պարագայում նման տարբերակված մոտեցումը, երբ նոտարի պատասխանատվությունը նախատեսված է միայն նոտարի կողմից դիտավորությամբ թույլ տրված խախտումների հետևանքով նոտարական գործողությունների համար դիմած անձանց պատճառված վնասի համար, որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը (Ռուսաստան, Ուկրաինա, Լիտվա, Էստոնիա, Բուլղարիա, Սլովենիա) վկայում է այն մասին, որ երկրների մեծ մասում կիրառվում է «մեղավոր գործողությամբ» կամ «իր մեղքով» ձևակերպումը, ինչը նշանակում է, որ գույքային պատասխանատվություն կրելու համար

նշանակություն չունի, թե մեղքի ինչ ձևով է թույլ տրվել խախտումը, որի արդյունքում վնաս է պատճառվել:

Երրորդ՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոտարը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը, որի չափը չպետք է պակաս լինի նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից: Այն հանգամանքը, որ նոտարը պարտավոր է ապահովագրել իր պատասխանատվության ռիսկը, վկայում է այն մասին, որ օրենսդիրը փորձել է ամրագրել այնպիսի ընթացակարգ, որի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցումը կլինի երաշխավորված: Սակայն հարկ է նշել, որ ապահովագրվող պատասխանատվության ռիսկի նշված նվազագույն չափը միշտ չէ, որ կարող է բավարար համարվել նոտարի մեղքով պատճառված վնասի իրավաչափ հատուցման համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի նշված դրույթները, որոնք կարգավորում են նոտարի պատասխանատվության վերաբերյալ հարցերը, հաշվի չեն առնում հնարավոր իրավիճակների ամբողջ բազմազանությունը և բավարար կառուցակարգեր և ընթացակարգեր չեն սահմանում անձի խախտված սեփականության իրավունքի պաշտպանության համար, որպիսի պարտականություն ՀՀ Սահմանադրության 3-րդ և 75-րդ հոդվածների համաձայն կրում է պետությունը:

ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում անդրադառնալով պետության պոզիտիվ պարտավորությանը՝ ՄԻԵԴ-ը Բլումբերգան ընդդեմ Լատվիայի (Blumberga v. Latvia, 14/10/2008թ. վճիռ, գանգատ թիվ 70930/01, կետ 67) գործով արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել անձի իրավունքների պաշտպանությունն ազգային օրենսդրությամբ սահմանված արդյունավետ մեխանիզմների միջոցով, այդ թվում անհրաժեշտության դեպքում ապահովել վնասների հատուցման իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա օրենսդրական ընթացակարգերը չեն երաշխավորում նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի իրավաչափ հատուցումը և անձի սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:

Ինչ վերաբերում է պատճառված վնասի համար պետության պատասխանատվությանը, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն որևէ կերպ չի նշանակում, որ վնասի հատուցումը պարտադիր պետք է տեղի ունենա բացառապես պետական միջոցների հաշվին: Տվյալ դեպքում պետության գույքային պատասխանատվությունը կարող է

բացառվել, եթե պետության կողմից ստեղծված կառուցակարգերը և ընթացակարգերը երաշխավորեն Հայաստանի Հանրապետության անունից իրականացված գործողության հետևանքով պատճառված վնասի ամբողջական հատուցում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ:

1. «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող:

2. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի հոկտեմբերի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 մայիսի 2016 թվականի
ՍԴՈ-1271



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԳՐՈՂՆՈՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար Ա. Մինասյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի սեպտեմբերի 8-ին Գրողնոյում ստորագրված՝ Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության հետ կապված գործողությունների համակարգման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016
75

շելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 13 ապրիլի 2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Յ.

1. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության հետ կապված գործողությունների համակարգման մասին պայմանագիրն (Պայմանագիր) ստորագրվել է 2015 թվականի սեպտեմբերի 8-ին Գրողնոյում՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում անդամ պետությունների միջև մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցությունը զարգացնելու նպատակով:

2. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- մյուս անդամ պետությունների հետ իրականացնել համագործակցություն և ապահովել արդյունավետ փոխգործակցություն լիազոր մարմինների միջև՝ ելնելով մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության ընդհանուր համակարգի ձևավորման անհրաժեշտությունից (հոդված 2, կետ 1),

- ապահովել, որպեսզի ՀՀ լիազոր մարմինը՝ Պայմանագրի շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ, իրականացնի անդամ պետությունների տարածքներում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների խախտումների կանխմանն ուղղված գործունեության փորձի վերլուծություն և ընդհանրացում, ինչպես նաև տվյալ բնագավառում իրավախախտումների կանխարգելման, հայտնաբերման, կանխման և հետաքննության ոլորտում միտումների կանխատեսում, վերլուծի մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության ոլորտում անդամ պետությունների իրավակիր առ պրակտիկան, այդ թվում՝ տվյալ ոլորտում միջազգային պայմանագրերի կատարումը, մշակի մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ Միության մաքսային տարածքում այդ իրավունքների խախտումների կանխարգելմանն ուղղված առաջարկություններ և մասնակցի մտավոր սեփականության օբյեկտների

նկատմամբ իրավունքների պաշտպանության ոլորտում լիազոր մարմինների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատակիցների որակավորման բարձրացմանն ուղղված համատեղ սեմինարների, համաժողովների, այլ միջոցառումների կազմակերպմանը (հոդված 4),

- երաշխավորել, որ գործողությունների համակարգումն ապահովելու նպատակով ՀՀ լիազոր մարմինը կիրականացնի համագործակցություն Պայմանագրի 5-րդ հոդվածում սահմանված ձևերով (հոդված 5, մաս 1),

- ապահովել, որպեսզի ՀՀ լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ կամ այլ լիազոր մարմինների հարցումով փոխանակի տեղեկություններ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների խախտման հետ կապված կոնկրետ փաստերի և դեպքերի մասին, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների խախտմանն առնչվող անձանց մասին, մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք ապրանքների տեղաշարժի մասին, որի հետևանքով խախտվում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները, ինչպես նաև այդ ապրանքները տեղափոխելիս օգտագործվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մասին, երրորդ երկրների տարածքներից Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների մասին, եթե նման ապրանքների ներմուծումը հանգեցնում է մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների խախտման, ինչպես նաև այլ տեղեկություններ (անհրաժեշտության դեպքում) (հոդված 6, կետ 1),

- երաշխավորել, որ Պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված տեղեկություններն ստացած ՀՀ լիազոր մարմինը կապահովի դրանց պաշտպանության այնպիսի մակարդակ, որը համարժեք է դրանք տրամադրած լիազոր մարմնի կողմից նման տեղեկության նկատմամբ կիրառվող պաշտպանության մակարդակին (հոդված 6, կետ 2, մաս 2),

- ինքնուրույն հոգալ Պայմանագրի իրականացման հետ կապված ծախսերը, ընդ որում՝ որպես ուղարկող անդամ պետություն հոգալ Պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված միջոցառումներն իրականացնելիս տրանսպորտային և կեցության ծախսերը (հոդված 8),

- սահմանել ՀՀ լիազոր մարմին և Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում դրա մասին ծանուցել ավանդապահին, որն էլ այդ լիազոր մարմինների մասին ծանուցում է մյուս անդամ պետություններին (հոդված 9, կետ 3, մաս 1):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-

րդ հողվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց.

1. 2015 թվականի սեպտեմբերի 8-ին Գրողնոյում ստորագրված՝ Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության հետ կապված գործողությունների համակարգման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17 մայիսի 2016 թվականի
ՍԴՈ-1272



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-ԻՆ
ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ Ս6
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ Ա. Առաքելյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2016 թվականի հունվարի 26-ին Երևանում և 2016 թվականի հունվարի 29-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Հայաստանի Ս6 միջպետական ճանապարհ» ֆինանսական պայ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016
79

մանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի մայիսի 6-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով ֆինանսական պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Դ Ձ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկառու) և Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև «Հայաստանի Մ6 միջպետական ճանապարհ» ֆինանսական պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2016 թվականի հունվարի 26-ին՝ Երևանում և 2016 թվականի հունվարի 29-ին՝ Լյուքսեմբուրգում:

Պայմանագիրը բաղկացած է Ներածությունից, 12 հոդվածներից և Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող 4 առդիրներից. Առդիր Ա (Ծրագրի բնութագիրը և հաշվետվությունները), Առդիր Բ (ԵՎՐԻԲՈՐ-ի սահմանումը), Առդիր Գ (Վարկառուի կողմից լրացվող ձևերը), Առդիր Դ (Վարկառուից ստացվող հավաստագրի ձևը): Պայմանագրին կցված են Հավելված I-ը (Լիազորագիր) և Հավելված II-ը (Ա/Բ ձևեր):

2. Բանկը Վարկառուին տրամադրում է 51.000.000 (հիսունմեկ միլիոն) եվրո գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ)՝ Պայմանագրի պայմաններին և դրույթներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում գտնվող Վանաձորի և Հայաստանի Հանրապետության ու Վրաստանի հյուսիսարևելյան սահմանին գտնվող Բագրատաշենի միջև ընկած Մ6 միջպետական ճանապարհի 90 կմ երկարությամբ հատվածի վերականգնման և արդիականացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորման նպատակով (հոդվ. 1, կետ 1.01 և Առդիր Ա.1):

Ծրագրի ընդհանուր արժեքը Բանկի գնահատմամբ կազմում է 102.000.000 (հարյուր երկու միլիոն) եվրո, և Հայաստանի Հանրապետությունը մտադիր է դրա մյուս կեսը ֆինանսավորել Ասիական զարգացման բանկի 51.000.000 (հիսունմեկ միլիոն) եվրո վարկով (Ներածության 5-րդ կետ, Հոդված 1, 1.01 կետ):

Համաձայն Պայմանագրի տեխնիկական նկարագրի (Առդիր Ա.1)՝ նախատեսվում է ճանապարհի վերականգնման և արդիականացման աշխատանքներ կատարել Վանաձորի քաղաքային գոտում (6,7 կմ),

Վանաձոր-Ալավերդի հատվածում (43,9կմ), Ալավերդու քաղաքային գոտում (3,4 կմ) և Ալավերդի-Վրաստան սահմանի հատվածում (36,3կմ): Ծրագրի այդ հատվածներն ունեն ոլորաններ, կտրուկ զառիթափեր, նեղ կամուրջներ և 3 թունելներ (համապատասխանաբար՝ 105մ, 270մ և 171մ երկարությամբ), որոնք պետք է արդիականացվեն:

Ծրագիրը նաև ներառում է ճանապարհային անվտանգության փոքր հատկացում, որի նպատակն է վերացնել ճանապարհային ցանցի վթարավտանգ հատվածները Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում (Առդիր Ա.1, Ներածություն):

Ծրագրի օրացույցով շինարարությանը հատկացվել է 36 ամիս՝ 2017-2020թթ. (Առդիր Ա.1): Վարկի հասանելիության վերջնաժամկետը 2020 թվականի հունվարի 3-ն է: Բանկի կողմից բոլոր Տրանշները հատկացվում են եվրոյով (Հոդված 1, կետ 1.03, Ներածություն):

3. Պայմանագրում ամրագրված են վերջինիս ընդհանուր պայմանները (մեկնաբանություններ և սահմանումներ), Վարկի հատկացման կարգն ու պայմանները, Վարկառուի ֆինանսական և այլ բնույթի մի շարք պարտավորությունները, Վարկի մարման կարգը և ժամկետները, Պայմանագրի կողմերի միջև ծագող վեճերի լուծման, Պայմանագրի ուժի մեջ մտնելու, դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու կարգը և պայմանները, ինչպես նաև եզրափակիչ ու այլ դրույթներ:

Սահմանված է, որ Պայմանագիրը գործողության մեջ է մտնում միայն Բանկի կողմից Պայմանագրի 1-ին հոդվածի 1.04.Ա կետով պահանջվող փաստաթղթերն ստանալուց հետո:

Յուրաքանչյուր Տրանշի վերջին մարման օրը համարվելու է հատկացման սահմանված ամսաթվից հետո 4 տարուց ոչ շուտ և 20 տարուց ոչ ուշ ընկած վճարման ամսաթիվը: Սահմանված է նաև Վարկի մարման արտոնյալ ժամկետ՝ 2 ամսից մինչև 5 տարի: Արտոնյալ ժամկետի ավարտից հետո Վարկի մայր գումարը պետք է մարվի կիսամյակային մասնաբաժիններով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին (Հոդված 4, կետ 4.01.Ա): Վարկառուն կարող է ամբողջությամբ կամ մասամբ վաղաժամ մարել ցանկացած Տրանշ՝ հաշվեգրված տոկոսներով և փոխհատուցումներով (Հոդված 4, կետ 4.02.Ա): Բանկը կարող է Պայմանագրով նախատեսված դեպքերում չեղարկել Վարկի չհատկացված մասը և պահանջել դրա վաղաժամ մարում (Հոդված 4, կետ 4.03.Ա):

Վարկը տրամադրվելու է առավելագույնը 15 Տրանշներով: Յուրաքանչյուր Տրանշի գումարը պետք է լինի նվազագույնը 1.000.000 (մեկ միլիոն) եվրո (Հոդված 1, կետ 1.02.Ա):

4. Պայմանագրի 3-րդ հոդվածի 3.01 կետի համաձայն՝ Վարկի տոկոս-

սաղորույքը կարող է լինել ֆիքսված կամ լողացող, որն ամրագրվելու է առանձին յուրաքանչյուր Տրանշի համար: Ֆիքսված տոկոսադրույքով Տրանշի դեպքում մայր գումարի մարումն իրականացվելու է կիսամյակային կտրվածքով՝ մայր գումարի հավասար մասնաբաժիններով կամ մայր գումարի և տոկոսի հաստատուն մասնաբաժիններով, իսկ լողացող տոկոսադրույքով Տրանշի դեպքում՝ մայր գումարի հավասար կիսամյակային մասնաբաժիններով: Լողացող տոկոսադրույքը հավասար է լինելու 6-ամսյա EURIBOR՝ գումարած ֆիքսված սփրեդ՝ 0.28,5%:

Ժամկետանց վճարումների գծով տույժը հաշվարկվում է՝ ֆիքսված տոկոսադրույքով Տրանշների դեպքում՝ կիրառելի ֆիքսված տոկոսադրույք + 2% կամ EURIBOR + 2% դրույքաչափերի առավելագույնով, իսկ լողացող տոկոսադրույքով Տրանշների դեպքում՝ կիրառելի լողացող տոկոսադրույք + 2% (Հոդված 3, կետ 3.02): Գնահատման միանվագ վճարը կազմելու է 50.000 (հիսուն հազար) եվրո, որը ենթակա է վճարման Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում (Հոդված 1, կետ 1.08):

5. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- Մասհանման ընդունման վերջնաժամկետից ոչ ուշ Բանկ ուղարկել դրա մասին ծանուցում, կից ներկայացնելով IBAN ծածկագիրը կամ տեղական բանկային պրակտիկայում ընդունված համապատասխան ձևաչափը (Հոդված 1, կետ 1.02.Գ),

- առաջին Տրանշի հատկացման համար Մասհանման սահմանված ամսաթվից 7 աշխատանքային օր առաջ Բանկին Պայմանագրով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված՝ իրավական կարծիք (այն հիմնավորող կից փաստաթղթերով) Հայաստանի Հանրապետության կողմից Պայմանագիրը պատշաճ կերպով կնքելու և դրա վավերականության, կատարման ենթակա լինելու և պարտադիր բնույթ ունենալու մասին, ինչպես նաև ապացույցներ Պայմանագրի և Ծրագրի առնչությամբ պահանջվող բոլոր անհրաժեշտ լիազորումները (Հոդված 1, կետ 1.04.Ա),

- Տրանշի հատկացումը Բանկի կողմից մասամբ կամ ամբողջությամբ հետաձգելու, ինչպես նաև սահմանված ամսաթվի և Մասհանման սահմանված ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից Պայմանագրի 1-ին հոդվածի 1.04 կետում սահմանված պայմաններից որևէ մեկի չկատարման դեպքում վճարել հետաձգված Մասհանման գումարի հիման վրա հաշվարկված Հետաձգման փոխհատուցում (Հոդված 1, կետ 1.05.Ա),

- Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում վճարել

Գնահատման միանվագ վճար՝ 50.000 (հիսուն հազար) եվրո գումար (Հոդված 1, կետ 1.08),

- սպասարկել և մարել Վարկը՝ Պայմանագրում սահմանված պայմաններին և ժամկետներին համապատասխան,

- յուրաքանչյուր Տրանշի առնչությամբ վճարման ենթակա տոկոսը, մարումները և այլ վճարները վճարել եվրոյով, իսկ ցանկացած այլ վճարում կատարել Բանկի կողմից սահմանված արժույթով (Հոդված 2, կետ 2.02),

- կիսամյակային կտրվածքով՝ վճարման համապատասխան ամսաթվերին, վճարել ֆիքսված կամ լողացող տոկոսադրույքով յուրաքանչյուր Տրանշի չմարված հաշվեկշռի դիմաց ֆիքսված կամ լողացող տոկոսադրույքով տոկոս՝ Մասհանման առաջարկում սահմանված կարգով (Հոդված 3, կետ 3.01),

- վճարել ժամկետանց վճարումների գծով տույժ՝ ֆիքսված տոկոսադրույքով Տրանշների դեպքում՝ կիրառելի ֆիքսված տոկոսադրույք + 2% կամ EURIBOR + 2% դրույքաչափերի առավելագույնով, իսկ լողացող տոկոսադրույքով Տրանշների դեպքում՝ կիրառելի լողացող տոկոսադրույք + 2% չափով (Հոդված 3, կետ 3.02),

- ֆիքսված տոկոսադրույքով Տրանշի դեպքում մայր գումարի մարումն իրականացնել կիսամյակային կտրվածքով՝ մայր գումարի հավասար մասնաբաժիններով կամ մայր գումարի և տոկոսի հաստատուն մասնաբաժիններով, իսկ լողացող տոկոսադրույքով Տրանշի դեպքում՝ մայր գումարի հավասար կիսամյակային մասնաբաժիններով (Հոդված 4, կետ 4.01.Ա),

- ֆիքսված տոկոսադրույքով Տրանշի ամբողջությամբ կամ մասամբ վաղաժամ մարելու դեպքում վճարել հաշվեգրված տոկոսներ և փոխհատուցումներ, իսկ Բանկի կողմից Պայմանագրով նախատեսված՝ Վարկի չհատկացված մասը չեղարկելու դեպքում՝ վաղաժամ (Բանկի պահանջի ամսաթվից ոչ ուշ, քան 30 օր հետո) մարել այն (Հոդված 4, 4.02 - 4.03 կետեր),

- պատշաճ ժամանակին տեղեկացնել Բանկին օրենքի փոփոխության կամ դրա տեղի ունենալու հավանականության մասին, եթե Բանկի կարծիքով դա էական բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության կողմից սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման վրա (Հոդված 4, կետ 4.03.Ա(3)),

- սույն Պայմանագրի 4-րդ հոդվածի 4.03.Ա(4) կետով սահմանված՝ Բանկի կողմից Վարկի ցանկացած վաղաժամ մարման պահանջի դեպքում վճարել այն՝ հաշվեգրված տոկոսների և կուտակված կամ չվճարված գումարների հետ միասին՝ Բանկի պահանջի ծանուցման մեջ նշված ամսաթվին (Հոդված 4, կետ 4.03.Բ),

- Տրանշն այլ ամսաթվով մարելու դեպքում փոխհատուցել Բանկին այն գումարը, որը, Բանկի հավաստմամբ, պահանջվում է համապատասխան վճարման ամսաթվից տարբեր այլ ամսաթվով միջոցների ստացումը փոխհատուցելու համար (Հոդված 4, կետ 4.04),

- եթե սույն Պայմանագրով կամ Բանկի պահանջով այլ բան սահմանված չէ, ապա տոկոսներից, փոխհատուցման և մայր գումարից տարբեր մյուս բոլոր գումարները վճարել Բանկի պահանջն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում և Բանկի կողմից ծանուցված համապատասխան հաշվին (Հոդված 5, կետ 5.02),

- օգտագործել սույն Վարկով փոխառված բոլոր գումարները Օրագրի իրականացման նպատակով և ապահովել, որ Օրագիրն իրականացվի Տեխնիկական նկարագրությանը համապատասխան (Հոդված 6, 6.01 և 6.02 կետեր),

- եթե Օրագրի ընդհանուր ծախսը գերազանցում է Ներածական դրույթում նշված թիվը, ապա առանց Բանկին դիմելու ձեռք բերել միջոցներ Օրագրի հավելյալ ծախսը ֆինանսավորելու համար՝ այն ավարտին հասցնելու նպատակով և այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին (Հոդված 6, կետ 6.03),

- ապահովել, որ Օրագրի համար կամ դրա առնչությամբ սարքավորումները ձեռք բերվեն, ծառայությունները մատուցվեն և աշխատանքները կատարվեն միջազգային բաց մրցույթով կամ գնումների այլ ընդունելի ընթացակարգով, որը համապատասխանում է միջազգային ստանդարտներով գնումների կանոններին, ներառյալ ԵՆԲ Գնումների ուղեցույցը, և ԵՄ-ի և ՀՀ իշխանությունների միջև կնքված ֆինանսավորման համաձայնագրում համաձայնեցված այլ կանոններին, որոնք պետք է բավարարեն Բանկի պահանջները (Հոդված 6, կետ 6.04),

- երաշխավորել և ապահովել, որ Օժանդակողը (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն) կերաշխավորի, որ սույն Պայմանագրի օրվանից հետո Օրագրի ներքո գնումների բոլոր պայմանագրերը նախատեսեն պահանջ, որ համապատասխան կապալառուն պատշաճ ժամանակին Բանկ ներկայացնի Օրագրին առնչվող Արգելված վարքագծի մասով մեղադրանքը, բողոքը կամ տեղեկությունները, վարի Օրագրին առնչվող բոլոր ֆինանսական գործարքների և ծախսերի հաշվեմատյաններ ու գրանցամատյաններ, նաև Բանկի իրավունքը՝ ենթադրյալ Արգելված վարքագծի մասով ուսումնասիրել կապալառուի Օրագրին առնչվող հաշվեմատյաններն ու գրանցամատյանները և օրենքի թույլատրելի սահմաններում ստանալ փաստաթղթերի պատճենները (Հոդված 6, կետ 6.04),

- պահպանել, ըստ անհրաժեշտության՝ վերանորոգել, ստուգել և թարմացնել Օրագրի մաս կազմող ողջ գույքը, Բանկի գրավոր համաձայնությամբ պահպանել սեփականության, տնօրինման կամ օգտագործման

իրավունքը Ծրագրի մաս կազմող բոլոր ակտիվների նկատմամբ, կամ, նպատակահարմարության դեպքում, փոխարինել կամ նորացնել այդ ակտիվները և ապահովել Ծրագրի շարունակական գործունեությունը՝ դրա սկզբնական նպատակին համապատասխան՝ պայմանով, որ Բանկը կարող է հետ վերցնել իր համաձայնությունը միայն այն դեպքում, երբ առաջարկվող գործողությունը կարող է վնասել Բանկին (Հոդված 6, կետ 6.05),

- ապահովագրել կամ պատշաճ կերպով ապահովել բոլոր այն աշխատանքների և գույքի ապահովագրումը, որոնք Բանկի կողմից ֆինանսավորվող Ծրագրի բաղադրիչների մաս են կազմում՝ ելնելով արդյունաբերական ոլորտի համապատասխան համապարփակ գործելակերպից (Հոդված 6, կետ 6.05),

- իրականացնել և գործարկել Ծրագիրը բնապահպանական և սոցիալական պահանջներին և ԵՄ օրենսդրությանը համապատասխան, ձեռք բերել Ծրագրի համար պահանջվող՝ Բնապահպանական կամ սոցիալական հաստատումները, պահպանել դրանք և ապահովել համապատասխանությունը դրանց պահանջներին, նախքան աշխատանքների մեկնարկը մշակել Բանկի պահանջները բավարարող Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան (Հոդված 6, 6.05 կետ),

- ապահովել, որ Օժանդակողը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում շարունակի պահել ՄԻԳ՝ համապատասխան ռեսուրսներով և անձնակազմով, պատշաճ վարի հաշվեմատյաններ և գրանցամատյաններ, որոնցում կմուտքագրվեն նաև Ծրագրին առնչվող ծախսերը, առանց Բանկի գրավոր համաձայնության չօտարի Ծրագրի մաս կազմող իր ակտիվները մեկ կամ մի շարք գործարքների միջոցով՝ կամավոր կամ հարկադիր կերպով (Հոդված 6, կետեր 6.10, 6.12 և 6.13),

- ապահովել, որ ՀՀ վճարման պարտավորությունները սույն Պայմանագրի շրջանակներում դասակարգվեն բոլոր՝ ներկա և ապագա՝ չապահովված ու չստորակարգված այլ պարտավորությունների վճարման Օրենքին հավասար առաջնահերթությամբ, որն է երրորդ անձի Պարտքային փաստաթղթի կատարման երաշխիք կամ դրա առնչությամբ նախապատվություն կամ առաջնահերթություն տրամադրելու դեպքում սույն Պայմանագրով իր պարտավորությունների կատարման համար համարժեք երաշխիք կամ համարժեք նախապատվություն կամ առաջնահերթություն տրամադրել Բանկին (Հոդված 7, կետեր 7.01 և 7.02),

- տրամադրել կամ ապահովել, որ Օժանդակողը տրամադրի Առդիր Ա.2-ում սահմանված ձևով ու բովանդակությամբ տեղեկություն, Ծրագրի ֆինանսավորմանը, գնումներին, իրականացմանը, գործարկմանը և բնապահպանական կամ սոցիալական խնդիրներին վերաբերող ցանկացած տեղեկություն կամ լրացուցիչ փաստաթուղթ, բնապահպանական և

սոցիալական կառավարման պլանի պատճենը, անհապաղ Բանկի հաստատմանը ներկայացնել Ծրագրի էական փոփոխությունները, մինչև 2018թ. մարտը Բանկի հաստատմանը ներկայացնել Ծրագրի ճանապարհային հատվածների սպասարկման աշխատանքների նախագիծ (Հոդված 8, կետ 8.01),

- տեղեկացնել կամ ապահովել Օժանդակողի կողմից Ծրագրին առնչվող ցանկացած տեղեկատվության տրամադրումը Բանկին, Բանկի ողջամիտ պահանջի դեպքում քայլեր ձեռնարկել հետաքննելու և/կամ դադարեցնելու համար որևէ ենթադրյալ կամ կասկածվող գործողություն, որն ունի Պայմանագրի 6.09 հոդվածում նկարագրված բնույթը, Բանկին տեղեկացնել դրա հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատու անձանցից փոխհատուցում պահանջելու նպատակով ձեռնարկված միջոցների մասին, և դյուրացնել քննությունը, որը կարող է անցկացնել Բանկն այդ գործողության առնչությամբ (Հոդված 8, կետեր 8.02 և 8.03),

- վճարել սույն Պայմանագրի կամ առնչվող այլ փաստաթղթի կնքման կամ իրականացման ընթացքում առաջացող բոլոր հարկերը, տուրքերը, վճարները և ցանկացած բնույթի այլ գանձումներն, ներառյալ պետտուրքը կամ գրանցման վճարները (Հոդված 9, կետ 9.01),

- վճարել ամբողջ հիմնական գումարը, տոկոսը, փոխհատուցման գումարը և վճարման ենթակա մյուս գումարներն առանց որևէ ազգային կամ տեղական հարկման նվազեցման. նվազեցման դեպքում պարտավորվել Բանկին վճարել այն հաշվարկով, որ նվազեցումից հետո Բանկի կողմից ստացվող գուտ գումարը համարժեք լինի վճարման ենթակա գումարին (Հոդված 9, կետ 9.01),

- կատարել բոլոր վճարներն ու ծախսերը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ արժույթի փոխանակման վճարները, որոնք կատարվել են Պայմանագրի կամ առնչվող որևէ փաստաթղթի մշակման, կնքման, իրականացման, հարկադիր կատարման կամ դադարեցման առնչությամբ, սույն Պայմանագրից կամ առնչվող որևէ փաստաթղթի փոփոխության, լրացման կամ դրանցից հրաժարման, ինչպես նաև Վարկի համար որևէ երաշխիքի փոփոխման, ձևավորման, կառավարման և իրականացման ուղղությամբ (Հոդված 9, կետ 9.02),

- վճարել Բանկին ցանկացած գումար կամ ծախս, որն առաջացել է կամ Բանկը կրել է որևէ օրենքի կամ կանոնակարգի ներդրման կամ փոփոխության արդյունքում կամ ցանկացած օրենքի կամ կանոնակարգի փոփոխության արդյունքում, նաև փոխհատուցել Բանկին այն վնասները, որոնք առաջացել են Պայմանագրում հստակ սահմանված կարգից տարբերվող եղանակով վճարման կամ մասնակի մարման հետևանքով (Հոդված 9, կետ 9.03),

- Պայմանագրի 10-րդ հոդվածի 10.01.Ա և 10.01.Բ բաժիններում նախա-

տեսված դեպքերում Բանկի կողմից ներկայացվող գրավոր պահանջի հիման վրա ամբողջությամբ կամ մասամբ անմիջապես հետ վճարել Վարկը Պայմանագրի ներքո հաշվեգրված տոկոսների և հաշվեգրված կամ չվճարված այլ բոլոր գումարների հետ միասին (Հոդված 10, կետ 10.01),

- ֆիքսված տոկոսադրույքով տրանշի վերաբերյալ Պայմանագրի 10-րդ հոդվածի 10.01 կետի համաձայն ներկայացվող պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը վաղաժամ մարման ենթակա մայր գումարի դիմաց Վաղաժամ մարման փոխհատուցման հետ միասին (Հոդված 10, կետ 10.03.Ա),

- լողացող տոկոսադրույքով տրանշի վերաբերյալ Պայմանագրի 10-րդ հոդվածի 10.01 կետի համաձայն ներկայացվող պահանջի դեպքում Բանկին վճարել պահանջվող գումարը և ընթացիկ արժեքի 0.15%-ին համարժեք տարեկան գումար, որը հաշվարկվում և հաշվեգրվում է վաղաժամ մարման ենթակա մայր գումարի վրա նույն եղանակով, ինչպես կհաշվարկվեր և կհաշվեգրվեր տոկոսը, եթե այդ գումարը, Տրանշի մարման սկզբնական ժամանակացույցի համաձայն, մնար չվճարված մինչև Մարման ամսաթիվը (Հոդված 10, Բաժին 10.03, կետ 10.03.Բ):

6. Պայմանագրի 11-րդ հոդվածի 11.01 կետով սահմանվում է, որ սույն Պայմանագիրը և դրանից բխող կամ դրա հետ կապված ոչ պայմանագրային պարտավորությունները կարգավորվում են Անգլիայի և Ուելսի օրենքներով, իսկ 11.02 կետով կողմերը համաձայնում են, որ Պայմանագրին առնչվող բոլոր վեճերը ներկայացվում են Եվրոպական համայնքների Արդարադատության դատարան (Դատարան) և կողմերը ենթարկվում են Դատարանի իրավասությանը, հրաժարվում են Դատարանի իրավասությունից իրենց ունեցած անձեռնմխելիությունից կամ այդ իրավասությունը վիճարկելու իրավունքից:

7. Պայմանագրի 12-րդ հոդվածի 12.03 կետով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է առանց նախապես Բանկի գրավոր համաձայնությունը ստանալու չզիջել կամ չփոխանցել Պայմանագրով նախատեսված իր իրավունքները կամ պարտավորությունները:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է, որ Բանկը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնել կամ փոխանցել Պայմանագրով նախատեսված իր իրավունքները կամ արտոնությունները:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Պայմանագրի Ներածությունում հղում է կատարվում 2008 թվականի

փետրվարի 12-ին Լյուքսեմբուրգում և 2008թ. փետրվարի 29-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական ներդրումային բանկի գործունեության կանոնակարգման (կառավարման) վերաբերյալ Շրջանակային համաձայնագրին, որը համաձայն սույն Պայմանագրի ներածության 2-րդ կետի՝ կշարունակի ուժի մեջ մնալ քննության առարկա Պայմանագրի գործողության ողջ ընթացքում: Նշված Շրջանակային համաձայնագիրը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի 2008 թվականի հոկտեմբերի 1-ի Ն-099-4 որոշմամբ, իսկ դրանում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ գործով ընդունվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-759 որոշումը:

9. Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության ճանապարհային ցանցի բարելավմանն ու պահպանմանն ուղղված միջազգային ներդրումային ծրագրերի իրականացման և այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման պրակտիկային՝ Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև կնքված «Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր» վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, մասնավորապես՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ 4/2 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվությունը, Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված «Գյուղական ճանապարհների վերականգնում» համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, մասնավորապես՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2010թ. նոյեմբերի 26-ի թիվ 34/2 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային, դրամաշնորհային և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 28-ի թիվ 6/3 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Պայմանագրի կատարման շրջանակներում հիշյալ փաստաթղթերում ՀՀ վերահսկիչ պալատի կողմից բացահայտված թերությունների ու բացթող-

դումների բացառումը, ինչպես նաև արված եզրակացությունների ու առաջարկությունների կենսագործումը վերոհիշյալ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների արդյունավետ կատարման, հետևաբար՝ նաև ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրափրավական խնդիրների իրագործման երաշխիքներ են:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Պայմանագիրը ևս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման և Ծրագրի կառավարման ու թափանցիկ հաշվեքննության կազմակերպման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2016 թվականի հունվարի 26-ին Երևանում և 2016 թվականի հունվարի 29-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ «Հայաստանի Մ6 միջպետական ճանապարհ» ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
31 մայիսի 2016 թվականի
ՄԴՈ-1273

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի հուլիսի 7-ին Բուենոս Այրեսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության

կառավարության միջև հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան 06.05.2016թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2014 թվականի հուլիսի 7-ին՝ Բուենոս Այրեսում: Համաձայնագրի նպատակն է հարկային հարցերով տեղեկատվության փոխանակման ոլորտում համագործակցությունը:

Համաձայնագրով սահմանվում են.

- հարկային հարցերով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության փոխանակման եղանակները և կարգը,

- համատեղ հարկային ստուգումների անցկացման, դրանց մասնակցելու կարգերը,

- փաստաթղթերի տրամադրման կարգը:

2. Համաձայնագրի դրույթները տարածվում են հետևյալ հարկատեսակների վրա.

- Հայաստանի Հանրապետության դեպքում՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ, գույքահարկ, հողի հարկ.

- Արգենտինայի Հանրապետության դեպքում՝ եկամտահարկ, ավելացված արժեքի հարկ, գույքահարկ, հաստատագրված նվազագույն եկամտի հարկ:

Համաձայնագրի դրույթները կկիրառվեն նաև նույնանման այլ հարկերի նկատմամբ, որոնք կնախատեսվեն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

• Արգենտինայի Հանրապետության իրավասու մարմնի հարցման հիման վրա փոխադարձության կարգով Համաձայնագրի դրույթների,

միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների և ներպետական օրենսդրության համաձայն տրամադրել տեղեկատվություն, որն անհրաժեշտ է հարկերի հաշվարկման, գնահատման և հավաքագրման համար,

- ապահովել փոխանակվող տեղեկատվության գաղտնիությունը՝ միաժամանակ չխոչընդոտելով տեղեկատվության արդյունավետ փոխանակմանը: Առանց հարցվող կողմի իրավասու մարմնի գրավոր համաձայնության չտրամադրել համապատասխան տեղեկությունները ցանկացած այլ անձի, միավորի, մարմնի կամ այլ սուբյեկտի,

- ներպետական օրենսդրությանը համապատասխան ապահովել, որպեսզի տեղեկատվությունը բոլոր միջոցներով հավաքագրվի նաև այն դեպքում, երբ իրավասու մարմնի տրամադրության տակ եղած տեղեկատվությունը բավարար չէ հարցումը բավարարելու համար,

- ապահովել, որպեսզի իրավասու մարմինը Համաձայնագրի դրույթների համաձայն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված թույլատրելիության շրջանակներում տրամադրի տեղեկատվություն՝ վկաների ցուցմունքների և գրանցումների բնօրինակների հաստատված պատճենների տեսքով,

- որպես հարցվող կողմ՝ կրել աջակցության տրամադրման հետ կապված ընթացիկ ծախսերը, իսկ որպես հարցող կողմ՝ աջակցության տրամադրման ընթացքում կրած արտակարգ ծախսերը (ներառյալ դատական գործընթացների առնչությամբ արտաքին խորհրդատուների ներգրավմամբ պայմանավորված ողջամիտ ծախսերը),

- Արգենտինայի Հանրապետության իրավասու մարմնի հարցման դեպքում ՀՀ իրավասու մարմնի թույլտվության առկայության պարագայում ապահովել Արգենտինայի Հանրապետության իրավասու մարմնի ներկայացուցիչների ներկա գտնվելը հարկային ստուգումների ժամանակ:

4. Համաձայնագրին կից ներկայացված են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտագիրը և Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության դեսպանության պատասխան հայտագիրը, որոնք, ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարության առաջարկության՝ համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը՝ համաձայն 1969 թվականի մայիսի 23-ին ստորագրված «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 79-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանա-

դրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2014 թվականի հուլիսի 7-ին Բունոս Այրեսում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև հարկային հարցերում տեղեկատվության փոխանակման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31 մայիսի 2016 թվականի
ՄԴՈ-1274



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼԻԼԻԹ ՍՈՒՍԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ «Ի
ՀԱՅՑ ԳԱԼՈՒՑ ՀԵՏՈՒ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ.
Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի,
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացա-
կարգի շրջանակներում)՝ դիմող Լիլիթ Մուսեյանի ներկայացուցիչներ Ա.
Զեյնալյանի, Ա. Կիրակոսյանի, գործով որպես պատասխանող կողմ
ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ
Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության
իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմա-
նադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,
դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լիլիթ Մուսեյանի
դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ
հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ զալուց հետո» բառակապակցության մասով,

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լիլիթ Մուսեյանի՝ 2016թ. հունվարի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Ձ Ե Յ .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի՝ «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու ժամկետը» վերտառությամբ 185-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումը կարող է ներկայացվել համապատասխան հիմքն ի հայտ գալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում»:

Վերոնշյալ դրույթն օրենսգրքի ընդունումից ի վեր փոփոխությունների կամ լրացումների չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողի անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Վարչական դատարանը ՎԴ/10004/05/13 գործով իր՝ 27.06.2014թ. վճռով հայցը մերժել է, որը դիմողի անունից բողոքարկվել է վերաքննության կարգով: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 26.11.2014թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը, որը դիմողի անունից բողոքարկվել է վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 29.01.2015թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, դիմողի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու հիմքով, և տրամադրել է ժամկետ՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Իր՝ 25.02.2015թ. որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը, ի թիվս այլնի, դիմողի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու հիմքով: ՀՀ սահմանադրական դատարանը 03.03.2015թ. ՍԴՈ-1192 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը

հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերի հիմքում դրված՝ դիմողի նկատմամբ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված օրենքի դրույթը: ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015թ. ՄԴՈ-1192 որոշումը պաշտոնապես հրապարակվել է 11.03.2015թ. ՀՀ պաշտոնական տեղեկագրի 2015.03.11/13 (1102).1 համարում: ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015թ. ՄԴՈ-1192 որոշումը պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից հետո 3-ամսյա ժամկետում, ըստ դիմողի՝ 11.06.2015 թվականին դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու պահանջի մասին ներկայացվել է վճռաբեկ բողոք, որով պահանջվել է ՀՀ վճռաբեկ դատարանից հարուցել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի ՎԴ/10004/05/13 գործով 25.02.2015թ. որոշման և/կամ նույն գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.11.2014թ. որոշման վերանայման վարույթ: Վճռաբեկ դատարանն իր՝ 01.07.2015թ. որոշմամբ առանց քննության է թողել վճռաբեկ բողոքը՝ արձանագրելով, որ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1192 որոշումն ուժի մեջ է մտել 03.03.2015 թվականին, իսկ նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոքը բերվել է 12.06.2015 թվականին, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» դրույթն իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ, որով 3-ամսյա ժամկետի սկիզբ է համարվում Սահմանադրական դատարանի կողմից որոշման հրապարակման օրը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներին, քանի որ խոչընդոտում է անձի դատավարական իրավունքների իրացմանը, ինչպես նաև խախտում է արդարադատության մատչելիության և հասանելիության սկզբունքները:

Ըստ դիմողի՝ Սահմանադրական դատարանի եզրակացությունները և որոշումներն օբյեկտիվորեն հանրությանը հասանելի են դառնում պաշտոնական հրապարակումից հետո, հետևաբար՝ անձը Սահմանադրական դատարանի որոշմանը ծանոթանալու, վերանայման դիմում ներկայացնելու համար պետք է ունենա ողջամիտ ժամկետ՝ սկսած այն պահից, երբ փաստացի հնարավորություն է ունեցել սահմանադրական դատարանի որոշումը ձեռք բերելու և սահմանադրական դատարանի որոշմամբ ղեկավարվելու համար: Ըստ այդմ էլ, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերի,

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համադրված վերլուծության արդյունքում դիմողը եզրակացնում է, որ նորմատիվ իրավական ակտի պաշտոնական հրապարակման օրը համարվում է դրա ամբողջական տեքստի՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում առաջին անգամ հրապարակման օրը, ինչը երաշխավորում է, որ իրավահարաբերության սուբյեկտն ունենա բավարար չափով հնարավորություն և ժամանակ նոր ընդունված և իրավաբանական ուժ ստացած՝ իր համար կիրառելի իրավանորմի դրույթներին ծանոթանալու համար: Ըստ դիմողի՝ եթե օրենսդիրը նոր հանգամանքներով վերանայման բողոք ներկայացնելու համար ողջամիտ ժամկետ է համարում եռամսյա ժամկետը, ապա ողջամիտ պետք է համարվի այդ ժամկետի հոսումն այն պահից սկսած, երբ բողոք բերողի համար ի հայտ է եկել նոր հանգամանքներով վերանայման բողոք ներկայացնելու համար օրենսդրական հիմքերը:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավանորմի մեկնաբանման շրջանակներում իրավակիրառ պրակտիկան նոր հանգամանքներով վերանայման դիմում ներկայացնելու ժամկետի սկիզբ է դիտարկում ոչ թե իրավահարաբերության սուբյեկտի մոտ համապատասխան հիմքի օբյեկտիվ և փաստացի ի հայտ գալու պահը, այլ սահմանադրական դատարանի կողմից որոշման հրապարակման պահը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով, համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Գրոշնն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռի 22-րդ կետում արտահայտած իրավական դիրքորոշումը պատասխանողը գտնում է, որ իրավահարաբերության սուբյեկտի մոտ համապատասխան հիմքի օբյեկտիվ և փաստացի ի հայտ գալու պահ է ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանի որոշման՝ ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակման պահը, այլ այն պահը, երբ անձն օբյեկտիվորեն հնարավորություն է ստանում ծանոթանալու որոշման ամբողջական տեքստին:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2016թ. ապրիլի 26-ի ՄԴՈ-1268 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ դրանք իրավունքի հարցերի և փաստերի նմանության պատճառով կիրառելի են նաև սույն գործով: Ըստ այդմ էլ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցությունում ի հայտ գալու պահը ՀՀ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահ համարելն արդարացված է, քանի որ անձն առնվազն 87 օր ունի դիմելու

նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման համար, երբ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում առաքվում է դատավարության կողմին և տեղադրվում համացանցում:

5. Սույն գործի քննության շրջանակներում օրենսգրքի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության 3 և 81-րդ հոդվածներ),

- ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից,

- հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար օրենքներով անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու սահմանադրական պարտականության կատարման անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդված):

6. Դիմումի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը ինդրո առարկա իրավակարգավորումը վիճահարույց է համարում միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի տեսանկյունից, այն է՝ Սահմանադրական դատարանը տվյալ գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ համարել է, որ այդ դրույթն իրավակիրառ պրակտիկայում կիրառվել է Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ: Ուստի Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում վիճարկվող իրավակարգավորմանն անդրադառնում է միայն Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա նոր հանգամանքների առաջացման տեսանկյունից:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքարկման ժամկետների առնչությամբ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել իր ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1249, ՍԴՈ-1254 և ՍԴՈ-1268 որոշումներում, սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը կարևորում է նոր հանգամանքներով

դատական ակտի վերանայման մասին դիմում ներկայացնողի կողմից Սահմանադրական դատարանի որոշումն ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու կամ ստանալու հնարավորություն ունենալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու անհրաժեշտությունը:

Այս կապակցությամբ արձանագրելով, որ դատական ակտի վերանայման բողոք կամ դիմում ներկայացնելու համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ, Սահմանադրական դատարանը մինևույն ժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման դիմում ներկայացնելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պետք է, ելնելով անձի՝ դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ երաշխիքներ նախատեսի դրանց ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման բողոք կամ դիմում ներկայացնելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է Սահմանադրական դատարանի որոշումը հասանելի շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար: Այս առիթով Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.4-րդ հոդվածի 3-րդ մասը, որում, ի տարբերություն համանման իրավակարգավորում նախատեսող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.34-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի, օրենսդիրը ՀՀ սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի առնչությամբ պարտադիր պայման է դիտարկում շահագրգիռ անձի կողմից Սահմանադրական դատարանի որոշման ի հայտ գալու մասին իմանալը կամ իմանալու հնարավորություն ունենալը:

Մյուս կողմից, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը, 65-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասը, 62-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, Սահմանադրական դատարանի կանոնակարգի 54-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է Սահմանադրական դատարանի որոշման մասին իրավունքի սուբյեկտներին իրազեկելու

չորս եղանակ՝ որոշման հրապարակում ՀՀ սահմանադրական դատարանի նիստում, որոշման տեղակայում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում, որոշման հրատարակում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» պաշտոնական պարբերականում և ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Սահմանադրական դատարանը նկատի է առնում, որ.

նախ՝ Սահմանադրական դատարանի որոշումն առնչվում է ոչ միայն Սահմանադրական դատարանում դատավարությանը մասնակից դարձած անձանց շահերին, այլ նաև այդպիսիք չհանդիսացող անձանց շահերին,

երկրորդ՝ Սահմանադրական դատարանն իր որոշումները դատավարության մասնակից չհանդիսացած անձանց առաքելու պարտականություն չունի /բացառություն են կազմում Հանրապետության Նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, ՀՀ վճռաբեկ դատարանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և ՀՀ գլխավոր դատախազը/,

երրորդ՝ Սահմանադրական դատարանի որոշումը համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելու համար սահմանված է առավել սեղմ ժամկետ /հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում/, քան ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում և «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» պաշտոնական պարբերականում հրապարակելու համար /որոշումները տպագրվում են ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագրում եռամսյա ժամկետում, իսկ ՀՀ պաշտոնական տեղեկագրում՝ որոշման ընդունմանը հաջորդած եռօրյա ժամկետում որոշումն ուղարկելուց հետո ստանալու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում՝ չորեքշաբթի օրը/:

Ելնելով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը երաշխավորելու նկատառումներից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ այն շահագրգիռ անձանց համար իրավական հետևանք է առաջացնում «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը հրապարակվելուց հետո եռօրյա ժամկետում համացանցի՝ ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական էջում տեղակայելուց հետո», երբ տվյալ որոշումը նոր հանգամանքների հիմք է հանդիսանում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաս-

տանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31 մայիսի 2016 թվականի
ՄԴՈ-1275



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՄԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված՝ «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավո-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

րությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2016 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Զ Ե Յ.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի մայիսի 11-ին:

2. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) Վարկային համաձայնագրով սահմանված կարգով տրամադրում է 14,600,000 եվրո գումարի չափով վարկ (Վարկ)՝ Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) իրականացման համար:

Վարկը բաղկացած է երեք տրանշից՝

- 1) Ա տրանշ՝ 5,300,000 եվրո գումարի չափով,
- 2) Բ տրանշ՝ 5,300,000 եվրո գումարի չափով,
- 3) Գ տրանշ՝ 4,000,000 եվրո գումարի չափով:

Վարկը տրամադրվում է 15 տարի ժամկետով, որից 3 տարին արտոնյալ է: Վարկի նկատմամբ պարտավորության վճարի դրույքաչափը տարեկան 0,5 տոկոս է:

Վարկի մարման վերջին ամսաթիվն է 2031 թվականի ապրիլի 16-ը:

Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին Գյումրու քաղաքապետարանի ենթակայության հիմնական ճանապարհների վերանորոգման և արտաքին լուսավորության արդիականացման գործում, ներառելով՝

- ասֆալտի և մայթերի նորացումը՝ այդ թվում՝ ջրահեռացման ենթակառուցվածքների արդիականացումը,
- հետիոտների համար նոր տարածքների կառուցումը,
- փողոցային լուսավորության ենթակառուցվածքների վերանորոգումը,
- Գյումրու քաղաքապետարանի համար կայանման հայեցակարգի մշակումը:

Ծրագիրն իրականացվելու է Գյումրու քաղաքապետարանի (Ծրագրի ընկերության) կողմից:

Ակնկալվում է, որ Ծրագիրը կավարտվի մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Վարկը մարել 24 կիսամյակային մասնաբաժիններով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին,

բ) Վարկային համաձայնագրով սահմանված կարգով Ծրագրի ընկերությանը հասանելի դարձնել Վարկի միջոցները Բանկի համար ընդունելի պայմաններով,

գ) ապահովել, որ Ծրագրի ընկերությունն օգտագործի Վարկի միջոցները՝ այն նպատակներով, որոնց համար տրամադրվել է Վարկը,

դ) չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել Ծրագրի այն փաստաթղթի որևէ դրույթ, որի կողմ է, կամ չհրաժարվել դրանից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ այլ համաձայնություն է ձեռք բերվում,

ե) ապահովել, որ Ծրագրի ընկերությունը Վարկային համաձայնագրով սահմանված կարգով կատարի իր բոլոր պարտավորությունները:

4. Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրության համաձայն՝ Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Գյումրի քաղաքի ճանապարհների հիմնանորոգում և արտաքին լուսավորության համակարգի արդիականացում՝

- հիմնովին վերանորոգել քաղաքի 16,075 մետր երկարությամբ, 9-18 մետր լայնությամբ թվով 10 փողոցներ՝ իրենց հարակից մայթերով, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 302,274 քառակուսի մետր, համապատասխանաբար՝ 218,176 քառակուսի մետր փողոց, 84,098 քառակուսի մետր մայթ: Հիմնանորոգված փողոցներում նաև անցկացվելու է 15,185 մետր ջրահեռացման համակարգ: Ծրագրով նախատեսվում է հիմնանորոգման ենթակա փողոցների կահավորում ճանապարհային երթևեկության նշաններով,

- տեղադրել 1500 հատ նոր հենասյուներ, վերանորոգել թվով 5400 հատ հենասյուներ, տեղադրել լուսադիոդային 11500 լուսատուներ, փոխարինել մոտ 700 կիլոմետր նոր մալուխային ցանց:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականի մայիսի 19-ին հավանություն է տվել Վարկային համաձայնագրին:

Քննության առարկա Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման համար պահանջվում է վարկային միջոցների

օգտագործման և Ծրագրի իրականացման հասցեական վերահսկողության և այդ միջոցների օգտագործման թափանցիկ հաշվետվողականության ապահովում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց:

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի մայիսի 11-ին ստորագրված՝ «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1276



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ
ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՎԻԵՆԱՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝
ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԻՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Գ. Մելքոնյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանա-

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան 23.05.2016թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Յ.

1. Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ մշակվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից՝ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև ազատ առևտրի ռեժիմի կիրառման համար անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտի ստեղծման նպատակով:

Համաձայնագիրը բաղկացած է ներածությունից և 15 գլխից, Համաձայնագրին կից երկու Արձանագրություններից, ունի նաև 5 հավելվածներ՝ 8 ենթահավելվածներով:

Համաձայնագրի անբաժանելի մաս են կազմում Ռուսաստանի և Վիետնամի միջև կնքված 1-ին և 2-րդ Արձանագրությունները:

2. Համաձայնագիրը նպատակ ունի՝

1) ազատականացնել և դյուրացնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը, մասնավորապես, սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման և մաքսային ձևակերպումների պարզեցման միջոցով.

2) ազատականացնել և դյուրացնել Կողմերի միջև ծառայությունների առևտուրը.

3) դյուրացնել, խթանել և ամրապնդել ներդրումային հնարավորությունները Կողմերի միջև՝ բարենպաստ ներդրումային միջավայրը զարգացնելու միջոցով.

4) աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային համագործակցությանը.

5) պատշաճ և արդյունավետ պաշտպանել մտավոր սեփականությունը ու խթանել այդ ոլորտում համագործակցությունը.

6) ստեղծել հիմքեր Համաձայնագրով համաձայնեցված բնագավառներում սերտ համագործակցությունն ամրապնդելու համար, ինչպես նաև դյուրացնել Կողմերի միջև հաղորդակցությունը:

3. Համաձայնագրով նախատեսվում է փոխադարձ առևտրում մաքսատուրքի դրույքաչափերի նվազեցում, մասնավորապես՝

- Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո որոշ ապրանքների հանդեպ 0 տոկոս մաքսատուրքի կիրառում,

- համապատասխան ժամանակացույցի համաձայն՝ մինչև 2025թ. ընկած ժամանակահատվածում որոշ ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի դրույքաչափերի նվազեցում մինչև 0 տոկոս,

- Համաձայնագրով սահմանված են ազատ առևտրի ռեժիմից բացառություններ, որոնց նկատմամբ կիրառվելու են առավել բարենպաստ ռեժիմի շրջանակներում գործող մաքսատուրքի դրույքաչափերը:

4. Համաձայնագրի դրույթներին համապատասխան ստեղծվում են Համատեղ կոմիտե, Առևտրային կոմիտե և ոլորտային կոմիտեներ:

Համատեղ կոմիտեն բաղկացած է յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից: Համատեղ կոմիտեն համատեղ նախագահում են երկու ներկայացուցիչներ, մեկը՝ Եվրասիական տնտեսական միությունից կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունից և մյուսը՝ Վիետնամից:

Համատեղ կոմիտեն քննարկում է Համաձայնագրի կիրարկման և գործողության, ինչպես նաև Կողմերի միջև առևտրային հարաբերություններն էլ ավելի ամրապնդելուն առնչվող ցանկացած հարց, վերահսկում է Համաձայնագրի շրջանակներում ստեղծված բոլոր կոմիտեների և մյուս մարմինների աշխատանքը, առաջարկություններ է ներկայացնում Համաձայնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, իրականացնում է Համաձայնագրին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ գործողություններ՝ Կողմերի հնարավոր համաձայնությամբ:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը՝ որպես Եվրասիական տնտեսական միության անդամ, գործելով համատեղ կամ առանձին՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրից բխող ՀՀ իրավասության համապատասխան ոլորտներում ստանձնում է մասնավորապես հետևյալ պարտավորությունները.

• պատվիրակել բարձրաստիճան պաշտոնյա յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից բաղկացած Համատեղ կոմիտեում Հայաստանի Հանրապետությանը ներկայացնելու նպատակով,

• պահպանել Համաձայնագրի համապատասխան մյուս Կողմի՝ գաղտնի տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը՝ ՀՀ համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն,

• ՀՀ համապատասխան օրենքների կամ կարգավորումների համաձայն ապահովել, որպեսզի օրենքները և կարգավորումները, ինչպես նաև ՀՀ համապատասխան միջազգային համաձայնագրերը, որոնք առնչվում են

Համաձայնագրի շրջանակներում ընդգրկված որևէ հարցի, պատշաճ կերպով հրապարակվեն կամ որևէ այլ կերպ հանրորեն մատչելի դարձվեն,

- մյուս Կողմի խնդրանքով անմիջապես պատասխանել առանձին հարցերի և տրամադրել տեղեկություններ Համաձայնագրի 1.13-րդ հոդվածի 1-ին կետում նշված օրենքների և կարգավորումների մասին, ինչպես նաև անհապաղ տրամադրել մյուս Կողմին ներմուծման կամ արտահանման համար կիրառվող մաքսատուրքերի և ցանկացած տեսակի գանձումների առնչությամբ,

- աստիճանաբար նվազեցնել կամ վերացնել մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքների համար կիրառվող մաքսատուրքերը՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված սակագնային պարտավորությունների ՀՀ ժամանակացույցին համապատասխան, և չավելացնել որևէ մաքսատուրք կամ չընդունել որևէ նոր մաքսատուրք, ինչի արդյունքում մյուս Կողմի ծագում ունեցող ապրանքների համար մաքսատուրքերի դրույքաչափը կարող է գերազանցել Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված սակագնային պարտավորությունների ՀՀ ժամանակացույցում սահմանված մակարդակը, եթե Համաձայնագրում այլ բան նախատեսված չէ,

- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմիններն իրենց պաշտոնական կայքէջերի միջոցով հասանելի դարձնեն ՀՀ կողմից կիրառվող վճարների և գանձումների մասին տեղեկությունները,

- ձգտել ներդնել ԾՍՍԷՀ-ն (Ծագման սերտիֆիկացման և ստուգման էլեկտրոնային համակարգ) Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում, ինչպես նաև ձևավորել աշխատանքային խումբ, որը ջանքեր կգործադրի ԾՍՍԷՀ-ի մշակման և ներդրման համար,

- ապահովել, որպեսզի ՀՀ մաքսային մարմինները կիրառեն ռիսկերի կառավարման համակարգ՝ ռիսկերի պարբերական գնահատման միջոցով՝ ստուգումները բարձր ռիսկային ապրանքների վրա կենտրոնացնելու և ցածր ռիսկային ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունների կիրառումը պարզեցնելու նպատակով,

- ապահովել, որպեսզի ՀՀ կենտրոնական մաքսային մարմինները հայտարարատուներին ապահովեն ապրանքներն էլեկտրոնային եղանակով հայտարարագրելու հնարավորությամբ,

- որպես ներմուծող Կողմ ապահովել, որպեսզի Կողմերի միջև շրջանավոր արտադրանքի (ապրանքների) անվտանգությունը հավաստող փաստաթղթերի պահանջները կիրառվեն մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու անհրաժեշտության սահմաններում,

- մյուս Կողմի քաղաքացիների համար ՄՄԻԱՀ («Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» հա-

մաձայնագիր) համաձայնագրի 3-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված մտավոր սեփականության պաշտպանության առումով ապահովել ՀՀ քաղաքացիների համար ապահովվող ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ,

- չհակասելով այն միջազգային համաձայնագրերով սահմանված պարտավորություններին, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն, երաշխավորել և ապահովել հեղինակների, կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների համապատասխանաբար իրենց ստեղծագործությունների, կատարումների, հնչյունագրերի և հեռարձակումների հետ կապված շահերի արդյունավետ պաշտպանությունը,

- ապահովել ապրանքների և ծառայությունների ապրանքային նշանների համարժեք ու արդյունավետ պաշտպանություն՝ ՀՀ համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն, ինչպես նաև այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց Հայաստանի Հանրապետությունը կողմ է հանդիսանում,

- ապահովել գյուտերի համարժեք ու արդյունավետ պաշտպանություն՝ ՀՀ համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն, ինչպես նաև այն միջազգային համաձայնագրերի համաձայն, որոնց Հայաստանի Հանրապետությունը կողմ է հանդիսանում, ինչպես նաև ՄՄԻԱՀ համաձայնագրին համապատասխան,

- ՀՀ համապատասխան օրենքներով և կարգավորումներով, ՄՄԻԱՀ համաձայնագրի համաձայն, ապահովել չբացահայտված տեղեկատվության համարժեք ու արդյունավետ պաշտպանություն,

- հաշվի առնելով առկա ռեսուրսները՝ ընդունել պետական գնումների ոլորտում համագործակցության կարևորությունը՝ ՀՀ օրենքներին և կարգավորումներին համապատասխան և համագործակցել պետական գնումների ոլորտում թափանցիկության մակարդակի բարձրացման, արդար մրցակցության և էլեկտրոնային տեխնոլոգիաների օգտագործման խթանման նպատակներով, ինչպես նաև հնարավորինս շուտ տեղեկացնել մյուս Կողմերին ՀՀ համապատասխան օրենքներում և կարգավորումներում և (կամ) պետական գնումների ընթացակարգերում ցանկացած կարևոր փոփոխության մասին,

- ընդունել ՀՀ առևտրային հարաբերություններում ազատ և չխաթարված մրցակցության կարևորությունը և հարգել մրցակցային քաղաքականության ոլորտում Կողմերի կարողությունների միջև առկա տարբերությունները, ինչպես նաև ՀՀ համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն ձեռնարկել ՀՀ կողմից նպատակահարմար համարվող միջոցները՝ արգելելով հակամրցակցային բիզնես վարքագիծը

ՀՀ համապատասխան շուկայի արդյունավետ գործունեությունն ու սպառողների բարեկեցությունը խթանելու նպատակով,

• որպես վեճի Կողմ ընդունել կոնկրետ վեճի առնչությամբ արբիտրաժային խմբի վերջնական զեկույցի վերջնական և պարտադիր լինելը և անմիջապես ապահովել արբիտրաժային խմբի որոշումների կատարումը, իսկ եթե գործնականում հնարավոր չէ ապահովել դրանց անմիջապես կատարումը, ապա կատարել որոշումները ողջամիտ ժամկետում,

• Համաձայնագրի նպատակների իրականացմանը նպաստելու նպատակով իրականացնել Համաձայնագրի ընդհանուր վերանայումը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո և դրանից հետո՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ:

6. Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին, համաձայն որոնց՝ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2015 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1277



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 12-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

3 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Ի. Իսայանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2016 թվականի մայիսի 12-ին ստորագրված՝ «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի մայիսի 23-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Քննության առարկա վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016թ. մայիսի 12-ին՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև (այսուհետ՝ Բանկ), որի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության՝ էլեկտրաէներգիայի համարժեք և հուսալի մատակարարման պահպանմանն ուղղված ջանքերին՝ էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների և էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով: Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 30 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ)՝ Հայաստանի էլեկտրաէներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար:

Վարկի մարումն սկսվում է 2030թ. նոյեմբերի 15-ից և ավարտվում՝ 2040թ. նոյեմբերի 15-ին: Վարկի փակման ամսաթիվը 2021թ. հուլիսի 30-ն է:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Համաձայնագրի ամսաթվին հաջորդող հարյուրութսուններորդ (180) օրն է:

Համաձայնագիրն ունի երեք առդիր (այսուհետ Առդիր)՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրություն», Առդիր 2. «Ծրագրի իրականացում» և Առդիր 3. «Մարման ժամանակացույց» և Հավելված: Համաձայնագրին կից ներկայացված են նաև լրացուցիչ նամակներ՝ Լրացուցիչ նամակ հմ.1, Լրացուցիչ նամակ հմ.2 և Լրացուցիչ 2-րդ նամակին կից առդիր «Վճարմանը կապակցված ցուցանիշներ, Վճարման կարգավորումներ և Ստուգման ընթացակարգեր» և Լրացուցիչ նամակ հմ. 3-ին՝ կից առդիր «ՀԱԷԿ-ի և Երևանի ՋԷԿ-ի չմարված առևտրային վարկերի և Երևանի ՋԷԿ-ի կրեդիտորական պարտքի վերաբերյալ Ելակետային տվյալներ»:

Համաձայնագիրը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 12-ի թիվ 18 արձանագրային որոշմամբ:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

ա) սպասարկել և մարել վարկը Համաձայնագրի 2-րդ հոդվածով ամրագրված պայմանների և Համաձայնագրի Առդիր 3-ով ամրագրված մարման ժամանակացույցին համապատասխան,

բ) իրականացնել Ծրագիրն Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ ԷԲՊՆ) միջոցով և համակարգել ԷԲՊՆ-ին Ծրագրի իրականացման հարցում աջակցող մարմինների աշխատանքը,

գ) ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Համաձայնագրի Առդիր 2-ի դրույթներին համապատասխան,

դ) իրականացնել Ծրագիրը կամ ապահովել Ծրագրի իրականացումը Բանկի համար ընդունելի ֆինանսական կառավարման, գնումների և բնապահպանական ու սոցիալական կառավարման համակարգերի համաձայն (Ծրագրի ֆիդուցիար, բնապահպանական և սոցիալական համակարգեր),

ե) իրականացնել Ծրագիրը և ապահովել Ծրագրի իրականացումը Բանկի Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան,

զ) ապահովել, որպեսզի պահպանվեն գրասենյակներ, ստորաբաժանումներ և մասնաճյուղեր, որոնցից յուրաքանչյուրին տրված են տեխնիկական, բնապահպանական և սոցիալական երաշխիքների, ֆիդուցիար և Ծրագրին առնչվող այլ պարտավորություններ՝ Ծրագրի համապատասխան մասերի իրականացման համար, յուրաքանչյուրը Բանկին բավարարող լիազորություններով, գործառույթներով, կարողություններով, աշխատակազմով և ռեսուրսներով՝ Ծրագրի շրջանակներում իրենց համապատասխան գործառույթներն իրականացնելու նպատակով,

է) տրամադրել Վարկի միջոցների մի մասը Հայկական ատոմային էլեկտրակայանին (այսուհետ՝ ՀԱԷԿ) և Հայաստանի Հանրապետության Երևանի ջերմաէլեկտրակենտրոնին (այսուհետ՝ Երևանի ՋԷԿ), համապատասխանաբար ՀՀ և ՀԱԷԿ-ի միջև Օժանդակ համաձայնագրի ու ՀՀ և Երևանի ՋԷԿ-ի միջև Օժանդակ համաձայնագրի շրջանակներում, Բանկի հաստատած պայմաններով, որոնք, ի թիվս այլնի, պետք է ներառեն վարկային համաձայնագրի Առդիր 2-ի բաժին I-ի Գ.2 կետում նշված պայմանները,

ը) ապահովել, որ Ծրագրից բացառվեն այն միջոցառումները, որոնք Բանկի կարծիքով հնարավոր է՝ շրջակա միջավայրի և/կամ տուժած անձանց վրա ունենան էական անբարենպաստ ազդեցություններ, որոնք զգայուն են, բազմազան կամ աննախադեպ,

թ) հաշվեքննության ենթարկել և գնահատել Ծրագրի առաջընթացը և պատրաստել Ծրագրի հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների 5.08 բաժնի դրույթների համաձայն,

ժ) ԷԲՊՆ-ի միջոցով իրականացնել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ Ընդհանուր պայմանների (2012թ. մարտի 12-ով թվագրված

«Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի Ընդհանուր պայմաններ վարկերի համար», փոփոխություններով հանդերձ) 5.09 բաժնի «բ» կետի դրույթների համաձայն, ապահովել ՀԱԷԿ-ի և Երևանի ՋԷԿ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացումը Ընդհանուր պայմանների 5.09 բաժնի «բ» կետի դրույթների համաձայն,

ժա) ապահովել, որ Երևանի ՋԷԿ-ը վարկային Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, Համաձայնագրի Առդիր 2-ի IV բաժնի Ա կետի 2-րդ ենթակետի աղյուսակում սահմանված 1-9-րդ կատեգորիաների ներքո Վճարմանը կապակցված արդյունքներին (այսուհետ՝ ՎԿԱ) և Վճարմանը կապակցված ցուցանիշներին (այսուհետ՝ ՎԿՑ) համապատասխանության ստուգումն իրականացնելու նպատակով պայմանագիր կնքի երրորդ կողմ հանդիսացող անկախ կազմակերպություն կամ կազմակերպություններ (Ստուգման անկախ գործակալ(ներ) կամ այսուհետ՝ ՍԱԳ (եր))՝ Բանկին բավարարող լիազորությունների շրջանակով,

ժբ) ապահովել, որ Հաշվարկային կենտրոն ՓԲԸ-ն իրականացնի վարկային համաձայնագրի Առդիր 2-ի IV բաժնի Ա կետի 2-րդ ենթակետի աղյուսակի 10-րդ կատեգորիայի ներքո ՎԿԱ-ին և ՎԿՑ-ին համապատասխանության ստուգում,

ժգ) Ծրագրի իրականացման ողջ ընթացքում իրականացնել ստուգման գործընթաց առաջնորդվելով Բանկի հետ համաձայնեցված Ստուգման ընթացակարգով (Հավելվածի Բաժին I, կետ 24), ստուգման հաշվետվությունները ներկայացնել Բանկին՝ Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ,

ժդ) կատարել բոլոր առհանումները Համաձայնագրի Առդիր 2-ի IV բաժնի Բ կետով սահմանված պայմաններին և ժամանակահատվածին համապատասխան,

ժե) գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը՝ ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման ոլորտի երկարաժամկետ ֆինանսական կայունության հասնելու և այն պահպանելու համար, այդ նպատակով Բանկին անմիջապես տեղեկացնել ցանկացած այնպիսի ծագող իրավիճակի մասին, որը կարող է անհնարին դարձնել այդ կայունության ձեռքբերումն ու պահպանումը:

3. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի պարզաբանումների՝ վարկային միջոցները չեն ուղղվելու մասնավոր ընկերության ֆինանսական դրության բարելավմանը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

գտնում է նաև, որ Համաձայնագրի IV բաժնի Ա. կետի 2-րդ մասում ներկայացված աղյուսակի բոլոր կատեգորիաներով նախատեսված հատկացումների հիմնավորումները Օրագրով լիարժեք ներկայացված չեն: ՀՀ Ազգային ժողովի կողմից Համաձայնագրի վավերացման փուլում համարժեք հիմնավորումների դեպքում հնարավոր կլինի պարզել նման հատկացումների նպատակահարմարությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց:

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2016 թվականի մայիսի 12-ին ստորագրված՝ «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1278



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 թվապահի Փետրվարի 29-ին ԺՆԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ
ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՎԻՋԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ
ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի փետրվարի 29-ին Ժնևում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016
117

տասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՀՀ սահմանադրական դատարանի 31.05.2016թ. ՍԴԱՌ-42 որոշմամբ գործն ընդունվել է քննության՝ գրավոր ընթացակարգով:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ ստորագրվել է 2016թ. փետրվարի 29-ին՝ Ժնևում:

Համաձայնագրի նպատակն է դյուրացնել վիզաների տրամադրումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին 180 օր ժամանակահատվածի ընթացքում 90 օրվանից ոչ ավել ժամանակահատվածով որոշակի նպատակներով Շվեյցարիայում գտնվելու համար:

Տվյալ Համաձայնագիրն ստորագրվել է, ի թիվս այլ համաձայնագրերի, հաշվի առնելով նաև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» 2012թ. դեկտեմբերի 17-ին Բրյուսելում ստորագրված համաձայնագիրը: Այդ համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ին (ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՌ-1110 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող):

2. Կողմերի ներքին ընթացակարգերին համապատասխան Համաձայնագիրը ենթակա է վավերացման կամ հաստատման և ուժի մեջ է մտնում այն ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, երբ Կողմերը միմյանց ծանուցում են ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին:

Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին տրված գրավոր ծանուցման միջոցով կարող է այն դադարեցնել:

3. Համաձայնագրով սահմանվում են ճամփորդության նպատակը հիմնավորելու համար անհրաժեշտ փաստաթղթերի շրջանակը, բազմակի վիզաների տրամադրման կարգը, վիզայի դիմումների հետ կապված

ձևակերպումների համար վճարի չափը և այն անձանց շրջանակը, ովքեր ազատվում են վճարից, ինչպես նաև այդ ձևակերպումներին առնչվող ընթացակարգերի տևողությունը և այլն:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- վիզայի պահանջները Շվեյցարիայի քաղաքացիների համար վերականգնելու դեպքում՝ ինքնաբերաբար, փոխադարձության սկզբունքի հիման վրա Շվեյցարիայի համապատասխան քաղաքացիների նկատմամբ կիրառել նույն դյուրացումները, որոնք Համաձայնագրով շնորհվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին (հոդված 1, կետ 2),

- երաշխավորել, որ Շվեյցարիայի քաղաքացիների համար վիզայի ձևակերպման դեպքում ՀՀ կողմից գանձվող վճարի չափը չի գերազանցի Համաձայնագրի 6-րդ հոդվածի առաջին պարբերությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված վճարի չափը (հոդված 6, կետեր 1, 2),

- երաշխավորել փոխադարձության սկզբունքի հիման վրա, որ Շվեյցարիայի այն քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում կորցրել են իրենց անձը հաստատող փաստաթղթերը, կամ ումից այդ փաստաթղթերը գողացել են, կարող են դուրս գալ Հայաստանի Հանրապետության տարածքից Շվեյցարիայի դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից տրված՝ անձը հաստատող՝ սահմանը հատելու իրավունք տվող վավեր փաստաթղթերի հիման վրա՝ առանց որևէ վիզայի կամ այլ թույլտվության (հոդված 8),

- անձնական տվյալները, որոնք անհրաժեշտ են Համաձայնագրի իրականացման համար, մշակել և պաշտպանել տվյալների պաշտպանության ոլորտում Հայաստանի և Շվեյցարիայի ազգային օրենսդրությանը և այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց երկու պետությունները կողմ են (հոդված 13):

5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա Համաձայնագիրը կարող է նպաստել Համաձայնագրի կողմերի միջև տնտեսական, հումանիտար, մշակութային, գիտական և այլ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը և համահունչ է ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-

րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2016 թվականի փետրվարի 29-ին ժնկում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Շվեյցարիայի Համադաշնության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1279



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅ-
ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Հ. Մխիթարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի մարտի 18-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռն-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016
121

մխելիությունների և արտոնությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի մայիսի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռնմխելիությունների և արտոնությունների մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի մարտի 18-ին՝ Երևանում:

Համաձայնագրի նպատակն է սահմանել 2015 թվականի մայիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագրով ստեղծված հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կեցության պայմանները, անձեռնմխելիությունները և արտոնությունները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի ստեղծման մասին» համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2015 թվականի հունիսի 22-ի ԱԺՈ-164-Ն որոշմամբ:

2. Համաձայնագրով սահմանվում է, որ Կենտրոնի տարածքները և գույքն անձեռնմխելի են և օգտվում են խուզարկության, բռնագրավման, կալանքի և ցանկացած կատարողական գործողությունների կիրառման անձեռնմխելիությունից: Միաժամանակ, Կենտրոնի արխիվները և փաստաթղթերն անձեռնմխելի են: Համաձայնագրի համաձայն՝ Կենտրոնի պաշտոնական թղթակցությունը նույնպես անձեռնմխելի է և ենթակա չէ ոչ հրապարակման, ոչ առգրավման (հոդվ. 2):

3. Համաձայնագրով Կենտրոնին իրավունք է վերապահվում իր տարածքներում և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների հետ համաձայնեցված այլ վայրերում անցկացնելու համաժողովներ, սե-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

մինարներ, դասընթացներ և այլ միջոցառումներ՝ հրավիրելով երրորդ պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների (հոդվ. 6):

4. Ըստ Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում Կենտրոնն իրավունք ունի՝

- օրենքով սահմանված կարգով ստանալ ցանկացած արտարժույթ, տիրապետել, օգտագործել և տնօրինել այն,

- ցանկացած բանկում և ցանկացած արժույթով ունենալ հաշիվներ, տնօրինել դրանք,

- օրենքով սահմանված կարգով ստանալ միջոցներ՝ ցանկացած տեսակի հիմնադրամներ ստեղծելու համար և տնօրինել դրանք,

- օրենքով սահմանված կարգով փոխանցել իր հիմնադրամները, արտարժույթը մի երկրից մյուսը կամ ՀՀ սահմաններում (հոդվ. 9):

5. Համաձայնագրով Կենտրոնի ռուսական անձնակազմի մշտական և ժամանակավոր ներկայացուցիչները և նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում օգտվում են անձնական, բնակարանի, գույքի և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի անձեռնմխելիության իրավունքից, ինչպես նաև 1961 թվականի ապրիլի 18-ի՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան վարչատեխնիկական անձնակազմին տրամադրվող արտոնություններից և անձեռնմխելիությունից, ազատ են միգրացիայի սահմանափակումներից (հոդվ. 11):

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- ՀՀ կառավարության և ՀՀ իրավասու մարմինների միջոցով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Կենտրոնի տարածքներում անվտանգության, աշխատանքի նորմալ պայմանների ապահովման և իրավախախտումների կանխարգելման, ինչպես նաև Կենտրոնի տարածքների պատշաճ ապահովման և սպասարկման համար (հոդվ. 3 և 4),

- Կենտրոնին իր գործունեության իրականացման ընթացքում տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրամադրվում է օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններին՝ փոստային, հեռագրային, ֆաքսային, ֆաքսիմիլային, հեռախոսային և կապի այլ միջոցների սարքավորումների տեղադրման և շահագործման ժամանակ, ինչպես նաև՝ կապված համապատասխան ծառայություններից օգտվելու սակագների հետ (հոդվ. 5),

- Կենտրոնի գործունեության ապահովման համար նախատեսված ապրանքների ներմուծման և արտահանման ժամանակ Կենտրոնին ազա-

տել բոլոր տեսակի մաքսային տուրքերի, հարկերի վճարումից և դրանց հետ կապված գանձումներից և վճարներից, իսկ եթե չկան լուրջ հիմքեր ենթադրելու, որ ապրանքների ներմուծումն ու արտահանումն արգելված են օրենքով կամ կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության սանիտարահիգիենիկ կանոններով, ապա ներմուծման և արտահանման ժամանակ այդ ապրանքներն ազատել մաքսային զննումից (հոդվ. 7),

- Հայաստանի Հանրապետության տարածքում ազատել Կենտրոնին և նրա գույքի մասով գանձվող բոլոր տեսակի հարկերից, տուրքերից և վճարներից, իսկ Կենտրոնի գործունեության համար նախատեսված ապրանքների ու ծառայությունների համար ազատել նաև ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի վճարումից (հոդվ. 8),

- Կենտրոնի ռուսական անձնակազմի մշտական և ժամանակավոր ներկայացուցիչներին և նրանց ընտանիքների անդամներին ազատել բոլոր տեսակի հարկերից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում գործող այս կամ այն սոցիալական ապահովության համակարգով վճարներից (հոդվ. 10),

- Կենտրոնի ռուսական անձնակազմի մշտական և ժամանակավոր ներկայացուցիչներին և նրանց ընտանիքների անդամներին տալ համապատասխան վկայական, որը հաստատում է նրանց անձը (հոդվ. 13),

- Կենտրոնի ռուսական անձնակազմի մշտական և ժամանակավոր ներկայացուցիչներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ և անարգել տեղաշարժման իրավունք՝ բացառությամբ այն օբյեկտների և տարածքների, որոնց այցելության համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, պահանջվում է հատուկ թույլտվություն (հոդվ. 14),

- Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջոցով Կենտրոնին ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն ռուսական անձնակազմի մշտական և ժամանակավոր ներկայացուցիչների և նրանց ընտանիքների անդամների համար բնակարանի ընտրության և վարձակալման, նրանց բժշկական սպասարկման և այլ սոցիալ-կենցաղային խնդիրների լուծման հարցում (հոդվ. 15),

- Կենտրոնի կարիքների համար Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ավտոտրանսպորտը և հատուկ տեխնիկան գրանցել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից՝ համապատասխան սերիայի դիվանագիտական համարանիշների տրամադրմամբ (հոդվ. 19) և այլն:

7. Համաձայնագրի 22-րդ և 23-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքներից ելնելով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ

ա) Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում Կենտրոնի տե-

ղակայման հետևանքով չի կրում միջազգային իրավական պատասխանատվություն Կենտրոնի և նրա պաշտոնատար անձանց գործողությունների համար, բացառությամբ այն պատասխանատվության, որ Հայաստանի Հանրապետությունը կրում է որպես Կենտրոնի մասնակից պետություն,

բ) Կենտրոնը և սույն Համաձայնագրով համապատասխան արտոնություններից ու անձեռնմխելիությունից օգտվող անձինք պարտավոր են հարգել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և ազգային ավանդույթները,

գ) սույն Համաձայնագրով համապատասխան արտոնություններից ու անձեռնմխելիությունից օգտվող անձինք պարտավոր են չմիջամտել Հայաստանի Հանրապետության ներքին գործերին:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2016 թվականի մարտի 18-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայ-ռուսական մարդասիրական արձագանքման կենտրոնի կեցության պայմանների, անձեռնմխելիությունների և արտոնությունների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1280



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ԹԵՀՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դրնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հունիսի 5-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016

թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի հունիսի 13-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով փոխըմբռնման հուշագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՊԱՐԶԵՑ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին փոխըմբռնման հուշագիրն (Փոխըմբռնման հուշագիր) ստորագրվել է 2016 թվականի հունիսի 5-ին՝ թեհրանում:

2. Փոխըմբռնման հուշագրով կողմերի պետությունների քաղաքացիներն առանց մուտքի արտոնագրի կարող են բազմակի մուտք գործել, տարանցմամբ անցնել, դուրս գալ և գտնվել մյուս կողմի պետության տարածքում առավելագույնը 90 (իննսուն) օր ժամկետով՝ 180 (հարյուր ութսուն) օրվա ընթացքում:

Կացության 90-օրյա ժամկետի երկարաձգումը վերապահված է կողմերի իրավասու մարմիններին՝ կողմերի պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Կողմերի պետությունների քաղաքացիներն առանց մուտքի արտոնագրի կարող են մուտք գործել, տարանցմամբ անցնել, դուրս գալ և գտնվել մյուս կողմի պետության տարածքում հետևյալ վավերական ճամփորդական փաստաթղթերով.

- ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝
 - Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիր,
 - Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր,
 - Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական,
- բ) Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների համար՝
 - Իրանի Իսլամական Հանրապետության դիվանագիտական և ծառայողական անձնագիր,
 - Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացու անձնագիր,
 - Իրանի Իսլամական Հանրապետություն վերադարձի վկայական:

Կողմերից մեկի պետության քաղաքացիները կարող են մուտք գործել, դուրս գալ, տարանցում կատարել մյուս կողմի պետության տարածքով միջազգային ուղևորափոխադրումների համար նախատեսված սահմանային անցակետերով:

3. Փոխըմբռնման հուշագրով Հայաստանի Հանրապետությունը, մաս-

նավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) իրանական կողմի հետ դիվանագիտական ուղիներով տեղեկատվություն փոխանակել նոր ճամփորդական փաստաթղթեր շրջանառության մեջ դնելու կամ գործող ճամփորդական փաստաթղթերում փոփոխություն կատարելու վերաբերյալ,

բ) Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների կողմից որպես կացության երկիր Հայաստանի Հանրապետության տարածքում Փոխըմբռնման հուշագրով նախատեսված փաստաթղթերը կորցնելու դեպքում տրամադրել վկայական, որը հաստատում է փաստաթղթերի կորստյան փաստը,

գ) առնվազն 30 օր առաջ դիվանագիտական ուղիներով իրանական կողմին տեղեկացնել մուտքի, գտնվելու և ելքի պայմանների փոփոխությունների մասին:

4. Փոխըմբռնման հուշագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և կոչված են նպաստելու Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների հետագա զարգացմանը և ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2016 թվականի հունիսի 5-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 հունիսի 2016 թվականի
ՄԴՈ-1281



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼԻԼԻԹ ՄՈՒՍԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱ-
ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Լիլիթ Մուսեյանի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Կ. Տոնոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լիլիթ Մուսեյանի 2016թ. փետրվարի 1-ին ՀՀ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016
129

սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Ձ Ե Ց:

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն ընդունվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի կողմից՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Օրենսգրքի՝ «Վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու ընդհանուր կանոնները» վերատառությամբ 32-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը սահմանում է. «Այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա սույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ»:

Հիշյալ հոդվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություններ և լրացումներ են կատարվել 06.12.05թ. ՀՕ-26-Ն, 21.02.07թ. ՀՕ-73-Ն, 26.12.08թ. ՀՕ-239-Ն, 07.02.12թ. ՀՕ-2-Ն, 19.06.13թ. ՀՕ-94-Ն, 21.12.15թ. ՀՕ-178-Ն ՀՀ օրենքներով: Վիճարկվող դրույթով հոդվածը լրացվել է 06.12.05թ. ՀՕ-26-Ն օրենքով, իսկ ներկայիս խմբագրությամբ ձևակերպումն ստացել է 21.02.07թ. ՀՕ-73-Ն, 26.12.08թ. ՀՕ-239-Ն ՀՀ օրենքներով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողին պատկանող ավտոմեքենան տեսանկարահանվել է Երևան քաղաքի Կոմիտաս-Գրիբոյեդով խաչմերուկի հատվածում: Ըստ դիմողի՝ ինքը եղել է ավտոմեքենայի ուղևորը, իսկ ավտոմեքենան վարել է այլ անձ: Ընդ որում, ավտոմեքենայի ուղևորի համար նախատեսված դռնից՝ դիմողի, իսկ վարորդի համար նախատեսված դռնից տղամարդու իջնելու և հեռանալու հանգամանքներն արձանագրված են նշված տեսագրության մեջ: ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը, 17.07.2013թ. համադրելով տեխնիկական միջոցի հատկանիշներն իրավախախտման հատկանիշների հետ, կայացրել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 1300747448 որոշումը: Նշված որոշմամբ դիմողի վրա դրվել է Վարչական իրավա-

խախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասով նախատեսված՝ 5000 դրամ տուգանք վճարելու պարտականություն: Դիմողի անունից վերը նշված որոշման առոչինչ լինելը հաստատելու մասին հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան: Վարչական դատարանը թիվ ՎԴ/8455/05/13 վարչական գործով 26.12.2014թ. կայացրել է վճիռ, որով ճանաչվել է բողոքարկված որոշման առոչինչ լինելը: Նշված վճիռը ՀՀ ոստիկանության կողմից բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որն իր՝ 20.05.2015թ. որոշմամբ բավարարել է ՀՀ ոստիկանության վերաքննիչ բողոքը, ամբողջությամբ բեկանել և փոփոխել է վարչական դատարանի վճիռը և հայցը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշումը դիմողի անունից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողը գտնում է, որ իր համար «բացասական իրավական հետևանք է առաջացրել Վերաքննիչ դատարանի կողմից թիվ ՎԴ/8455/05/13 գործով 20.05.2015թ. որոշմամբ կիրառված և դրանում անմիջականորեն վկայակոչված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը», որը, ըստ դիմողի, հակասում է ՀՀ Սահմանադրության 65, 66 և 71-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը «համապատասխանում են «քրեական մեղադրանք» հասկացությանը»: Վարչական տույժը պատասխանատվության միջոց է, այն կիրառվում է օրենքները պահպանելու ինչպես իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից՝ նոր իրավախախտումների կատարումը կանխելու նպատակով, ինչն էլ հիմք է պնդելու, որ վարչական պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ նախապայման է, որ վարչական մարմինը հիմնավոր ներկայացնի կատարված իրավախախտման բնույթը, զանցանք կատարողի անձը, մեղքի աստիճանը, գույքային դրությունը և այլն:

Վերոթվարկյալ հանգամանքները կարևորելով՝ դիմողն ընդգծում է, որ վիճարկվող նորմն իր նկատմամբ, ի թիվս այլնի, բացասական իրավական հետևանքներ է առաջացրել այն առումով, որ ինքն անհիմն մեղադրվում է զանցանքի կատարման մեջ, քանի որ չի ցանկանում ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավորի վերաբերյալ:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Տալքն ընդդեմ Նիդեռլանդների գործով 2004թ. հոկտեմբերի 19-ին կայաց-

ված վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները, համադրելով ՀՀ Սահմանադրության 65-րդ և 66-րդ հոդվածների ձևակերպումները 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի ձևակերպումների հետ, պատասխանողը գտնում է, որ անմեղության կանխավարկածը «... բացարձակ իրավունք չէ և ենթակա է իրավաչափ սահմանափակումների», ինչը, ըստ պատասխանողի, «...իր կնիքն է թողել նաև ՀՀ գործող Սահմանադրության տեքստում»:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ առկա է հիմնավոր կասկած, որ դիմողի հիմնավորումները «...կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին»:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները և ելնելով սույն գործով դիմողի փաստարկներից և եզրահանգումներից՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

ա) վիճարկվող իրավակարգավորման իրավական նպատակները և հիմքերը,

բ) վիճարկվող իրավակարգավորման պարագայում ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխավորվածությունը և ապահովումը:

6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի խնդիրներն են՝ վարչական իրավախախտումներից (զանցանքներից) պաշտպանել պետական կամ հասարակական կարգը, սեփականությունը, քաղաքացիների իրավունքները և ազատությունները, կառավարման սահմանված կարգը, որոնց շրջանակներում պահպանության են ենթակա, մասնավորապես, ճանապարհային երթևեկության կանոնները: Այդ խնդիրների իրականացման համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն ամրագրում է վարչական պատասխանատվության հիմքը, որոշում, թե հակաիրավական որ արարքներն են համարվում վարչական իրավախախտումներ (զանցանքներ), և սահմանում է վարչական պատասխանատվության տեսակները, վարչական պատասխանատվության ենթարկելու

ընդհանուր կանոնները:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունները բացահայտված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետում, որի 4-րդ պարբերության համաձայն՝ տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ի իրացումն վերը նշված սահմանադրաիրավական դրույթի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված են սեփականության իրավունքի սահմանափակման շրջանակները: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Ընդ որում, վերը նշված դրույթում «այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն» բառակապակցությունը ներառում է, ի թիվս այլնի, ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման պարտականությունը: Իսկ նշված պարտականությունը, իր հերթին, ներառում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ տրանսպորտային միջոցն այն անձի փաստացի օգտագործմանը հանձնելու պարտականությունը, ով թույլ չի տա ճանապարհային երթևեկության կանոնների խախտում՝ դրանով իսկ խախտելով այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 695-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փոխատուն պատասխանատվություն է կրում գույքի օգտագործման հետևանքով երրորդ անձին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցում, որ վնասը դիտավորությամբ պատճառել է փոխատուն կամ այն անձը, որի մոտ այդ գույքը հայտնվել է փոխատուի համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ տրանսպորտային միջոցը համարվում է առավել վտանգի

աղբյուր, և դրանով պատճառված վնասը հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: Առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրի պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 20-րդ կետի ուժով տրանսպորտային միջոցը ենթակա է հաշվառման դրա սեփականատիրոջ անվամբ:

Տվյալ օրենքի 2-րդ և 13-րդ հոդվածների ուժով տրանսպորտային միջոցի պետական հաշվառումը տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրերի, ինչպես նաև դրա սեփականատիրոջ ազգանվան, անվան, հասցեի վերաբերյալ տեղեկությունների հավաքման և ամրագրման գործառույթ է:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետի ուժով տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից (տրանսպորտային միջոցը ձեռք բերելուց) հետո մինչև տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումն այդ տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտումների դեպքում օրենսդրությամբ սեփականատիրոջ համար նախատեսված պատասխանատվությունը կրում է գնորդը, եթե վաճառողն ապացուցում է, որ իրենց միջև կայացել է պատշաճ գործարք:

Օրենսդիրը վարչական պատասխանատվության ենթարկելու ընդհանուր կանոնները սահմանելիս քննարկվող դեպքում վարչական պատասխանատվության սուբյեկտ է դիտարկել տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը՝ հաշվի առնելով վերջինիս սեփականության իրավունքի իրացումից ծագող պարտականությունը, այն է՝ հանձնելու տրանսպորտային միջոցն այն անձի փաստացի օգտագործմանը, ով այն պետք է շահագործի ճանապարհային երթևեկության կանոններին համապատասխան՝ դրանով իսկ չխախտելով այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը: Վիճարկվող իրավակարգավորումը նպատակաուղղված է անձանց իրավունքների պաշտպանությանը և պայմանավորված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված՝ տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման, ինչպես նաև վարչական իրավախախտում կատարած անձի առավել արագ բացահայտման և պատասխանատվության ենթարկման անհրաժեշտությամբ, ինչը ևս ուղղված է այլ անձանց իրավունքների ու օրենքով պահպանվող շահերի պահպանմանը:

Տվյալ իրավահարաբերություններում տրանսպորտային միջոցի սեփականատերը և իրավաչափ ձևով իր սեփականության օգտագործողը գտնվում են որոշակի իրավապայմանագրային հարաբերությունների մեջ, որը, ի մասնավորի, ենթադրում է նաև տրանսպորտային միջոցի օրինաչափ օգտագործման պարտավորություն և իրավախախտման համար պատասխանատվության անխուսափելիություն: Կարևոր է նաև, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը հստակ պարտավորություններ է սահմանում տրանսպորտային միջոցի ինչպես սեփականատերերի, այնպես էլ վարորդների համար՝ տարանջատելով դրանք միմյանցից:

ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն այլ անձի կողմից մեկ այլ անձին պատկանող սեփականության օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս որդեգրել են իրավակարգավորման միևնույն ուղղվածությունը, այն է՝ պատասխանատվությունը դնել սեփականատիրոջ վրա, քանի դեռ վերջինս չի ապացուցել, որ գույքը փաստացիորեն օգտագործել է այլ անձ:

Միևնույն ժամանակ, ելնելով մեղքի առկայությամբ պատասխանատվության, պատժի անհատականացման ընդհանուր սկզբունքներից՝ օրենսդիրը քննարկվող դեպքում տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը վարչական պատասխանատվության սուբյեկտ է դիտարկում, եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը չի ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ: Նման իրավակարգավորում սահմանելու նպատակը ոչ միայն մեղքի առկայությամբ պատասխանատվության ընդհանուր սկզբունքի պահպանումն է, այլև տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ սեփականության իրավունքի իրացումից ծագող պարտականության չկատարման դեպքերը կանխելը, ինչպես նաև վարչական իրավախախտում կատարած անձի պատասխանատվության անխուսափելիության երաշխավորումը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքները սահմանված են ՀՀ Սահմանադրության 65 և 66-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության՝ «Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը» վերտառությամբ 65-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպ-

քեր»:

ՀՀ Սահմանադրության՝ «Անմեղության կանխավարկածը» վերառությամբ 66-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքները համանման կարգավորմամբ ամրագրված էին նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 21 և 22-րդ հոդվածներով:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքներն ուղղակի կամ անուղղակի ամրագրված են նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում են անմեղության կանխավարկածի իրավունքը: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Saunders v. The United Kingdom* (Application no. 19187/91) գործով իր 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճռում արտահայտել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ թեև լռելու իրավունքը և դրա բաղադրատարր հանդիսացող իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածում հիշատակված չեն, այնուամենայնիվ, դրանք հանդիսանում են հանրաճանաչ միջազգային չափորոշիչներ, որոնք ընկած են արդար դատաքննության հիմքում: Նույն վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև եզրահանգել է, որ լռելու իրավունքը սերտ փոխկապակցված է անմեղության կանխավարկածի հետ:

ՀՀ սահմանադրական դատարանը ևս իր որոշումներում անդրադարձել է ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության և ապահովման խնդիրներին: Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ 2010 թվականի մարտի 30-ի ՄԴՈ-871 որոշման մեջ արտահայտած, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը.

«... անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության

մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքներն օրենսդիրն ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես՝ «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 18-րդ հոդվածով և «Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը» վերտառությամբ 20-րդ հոդվածով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում են վերոհիշյալ իրավունքների իրացման ապահովման այլ երաշխիքներ ևս: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ցուցմունքներ տալը կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելը, բացատրություններ տալը կամ բացատրություններ տալուց հրաժարվելն ամրագրվել են որպես կասկածյալի (63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետեր) և մեղադրյալի (65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետեր) իրավունքներ: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է կասկածյալին (211-րդ հոդվածի 3-րդ մաս) և մեղադրյալին (212-րդ հոդվածի 8-րդ մաս) նրանց իրավունքները՝ ներառյալ ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչի կողմից բացատրելու, ինչպես նաև վկային իր, ամուսնու կամ իր մերձավոր ազգականների դեմ չվկայելու իր իրավունքի մասին առերեսման սկզբում քննիչի կողմից նախազգուշացնելու (216-րդ հոդվածի 2-րդ մաս) և իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ վկայելուց հրաժարվելու նրա իրավունքը հարցաքննությունից առաջ նախազգահողի կողմից պարզաբանելու (339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) իրավական պահանջները:

Պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Ցուցմունք տալուց հրաժարվելը» վերտառությամբ 339-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ՝ «Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից»:

Համադրելով վերոգրյալը սույն գործով դիմողի եզրահանգումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ բացարձակապես այն հանգամանքը, որ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերն անվերապահորեն «համապատասխանում են քրեական մեղադրանք հասկացությանը»՝ առավել ևս այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է կողմերի փոխապայմանավորված ու կանխատեսելի վարքագծի հիման վրա կատարված գործողությունների արդյունք հանդիսացող ու քրեորեն ոչ պատժելի

վարչական իրավախախտումներին, ինչպիսին, մասնավորապես, սույն գործով վեճի առարկան է:

Հարկ է նկատել նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում ապացուցման պարտականությունը թեև դրված է վարչական մարմնի վրա, այնուամենայնիվ, նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե վերը նշված վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրագել դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

8. Տրանսպորտային միջոցով կատարված իրավախախտումների վերաբերյալ գործերով անմեղության կանխավարկածի և ցուցմունք տալու պարտականությունից զերծ մնալու իրավունքների հարցերին է անդրադարձել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Օ' Հալորանը և Ֆրանսիսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Case of O'Halloran and Francis v. The United Kingdom, Application no. 15809/02) գործով 29.06.2007թ. կայացված վճռին (զանգաստ թիվ 15809/02), ինչպես նաև Տելֆների (Case of Telfner v. Austria, Application no. 33501/96) գործին: Նշված գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը խախտում չի հայտնաբերել և իբրև ցուցմունք տալու հարկադրանքը թույլատրելի դարձնելու կարևոր գործոն նշել է, որ ավտոմեքենա ձեռք բերող անձը որոշ չափով պետք է համաձայնած լինի ստանձնել ցուցմունք տալու պարտականություն՝ կապված իր մեքենայի ներգրավմամբ ճանապարհային երթևեկության իրավախախտումների հետ: Նկարահանված փոխադրամիջոցների սեփականատերերի վրա դնելով իրավական պարտավորություն՝ բացահայտելու արագության գերազանցման կամ այլ իրավախախտման պահին մեքենան վարող անձի մասին տվյալները, հաշվի են առնվում իրավախախտման և պատժամիջոցի թեթև բնույթը, ճանապարհների անվտանգությունն ապահովելու նկատմամբ հանրային հետաքրքրությունը և այն փաստը, որ վկայություն տալու պարտավորության կանոնակարգված պարտադրման կիրառումը կարող էր կանխատեսվել փոխադրամիջոցը գնելիս:

Իսկ մեկ այլ՝ Ֆալքն ընդդեմ Նիդեռլանդների (Falk v. The Netherlands, Application no. 66273/01) գործով 19.10.2004թ. կայացված վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիմումն անընդունելի է համարել՝ պատճառաբանելով, մասնավորապես, նրանով, որ քրեական գործով անմեղ ենթադրվելու և քրեական մեղադրանքը հիմնավորելու բեռը կրելու պահանջի՝ անձի իրավունքը բացարձակ չէ, եթե հաշվի է առնվում պահ-

պանվող շահի կարևորությունը և պաշտպանության իրավունքը: Տվյալ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ պատասխանատվության կանոնը ներկայացվել է, որպեսզի ապահովվի արդյունավետ ճանապարհային անվտանգություն՝ ապահովելով, որ տեխնիկական կամ այլ միջոցներով արձանագրվող երթևեկության խախտումները կատարած վարորդը, ում անձը չի կարող պարզվել որոշակի ժամանակահատվածում, անպատիժ չմնա: Դատարանը նաև նշել է, որ չի գտնում, որ իրավակարգավորումը, որով պարտավորություն է սահմանվել ավտոմեքենայի գրանցված սեփականատիրոջ համար ենթադրվելու պատասխանատու մեկ այլ անձին իր ավտոմեքենան օգտագործելու թույլտվություն տալու համար, անհամատեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հետ:

Վերոշարադրյալի հիման վրա հետևությունն այն է, որ վեճի առարկա իրավակարգավորումն իրավաչափ նպատակ է հետապնդում, հենվում է իրավահարաբերության սուբյեկտների փոխհամաձայնեցված և կանխատեսելի վարքագծի վրա, ուղղված է մարդկանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, երաշխավորում է սեփականության ոչ օրինաչափ օգտագործման դեպքում պատասխանատվության անխուսափելիությունը և բացառում է խտրականությունը նման պատասխանատվության հարցում՝ պայմանավորված փոխհամաձայնությամբ իրավահարաբերության մեջ մտած սուբյեկտների սոցիալական փոխառնչություններով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1282



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Ա. Մինասյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Մահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2016 թվականի փետրվարի 23-ին ստորագրված՝ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պար-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

տավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 18 մայիսի 2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Ձ Ե Ց.

1. Համաձայնագիրն ստորագրվել է Երևանում՝ 2016 թվականի փետրվարի 23-ին, որով նախատեսվում է ենթակառուցվածքային ծառայությունների և զբոսաշրջության համար ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 55.000.000 ԱՄՆ դոլարի չափով գումար:

2. Համաձայնագիրն ունի երեք Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրություն», Առդիր 2. «Ծրագրի իրականացում», Առդիր 3. «Մարման ժամանակացույց» և Հավելված: Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝ Մաս 1. «Ժառանգության կենտրոնի վերականգնում և զբոսաշրջային երթուղու մշակում», Մաս 2. «Ինստիտուցիոնալ զարգացում», Մաս 3. «Հնարավոր արտակարգ իրավիճակներին արձագանքում»: Ծրագրի նպատակն է ՀՀ տարածքում ընտրված շրջաններում բարելավել ենթակառուցվածքային ծառայությունները և տեղական տնտեսությանը նպաստող՝ ավելացող զբոսաշրջության համար ինստիտուցիոնալ կարողությունները:

Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված Ծրագիրն իրականացվելու է Գորիսի և Մեղրու հին քաղաքներում և ժառանգություն հանդիսացող՝ Արենի, Տաթև և Տանձաթափ գյուղերում, Գառնու տաճարում և կիրճում, Գեղարդի վանքում, Դվինի թանգարանում, Խոր Վիրապի վանքում, Արենու շուկայում և քարանձավում, Մոզրովի քարանձավում, Զորաց քարերում (Քարահունջ), Խնձորեսկում, Հաղպատում և Սանահինում:

Ծրագրի իրականացման պատասխանատուն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, իսկ Ծրագրի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետությունն ստեղծում և պահում է Ծրագրի կազմակերպական հանձնաժողով, որը նախագահում է վարչապետի տեղակալը և կազմված է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից (ԷՆ), ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից, ՀՀ մշակույթի նախարարությունից (ՄՆ), ՀՀ ֆինանսների նախարարությունից (ՖՆ), ՀՀ բնապահպանության նախարարությունից (ԲՆ), ՀՀ քաղաքաշինության

նախարարությունից (ՔՆ) կամ նրանց ցանկացած իրավահաջորդներից, Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ), ստեղծվել է ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի հմ. 1523-Ն որոշմամբ) ներկայացուցիչներից, և Ծրագրի իրականացման մարմնից, որը պատասխանատու է միջգերատեսչական համակարգման, բարձր մակարդակի ռազմավարական որոշումների, Ներդրումային ենթաձրագրերի առաջարկների ընդունման և Ծրագրի ընդհանուր իրականացումը վերահսկելու համար:

3. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է, Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով, Հայաստանի Հանրապետությանը Համաձայնագրի 1-ին առդիրում նկարագրված ծրագիրը (Ծրագիր) ֆինանսավորելու նպատակով տրամադրել հիսունհինգ միլիոն (55,000,000) ԱՄՆ դոլարի չափով գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ Համաձայնագրի 2.08 բաժնի (Վարկ) դրույթներին համապատասխան: Մայր գումարի մարումն սկսվում է 2030թ. նոյեմբերի 15-ից և ավարտվում՝ 2040թ. նոյեմբերի 15-ին: Վարկի փակման ամսաթիվը 2021թ. ապրիլի 30-ն է:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել սկզբնավճար Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) հավասար չափով (հոդված II, կետ 2.03),

- վճարել Հանձնառության վճար Վարկի գումարի չառհանված մնացորդի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) հավասար չափով (հոդված II, կետ 2.04),

- կիսամյակային մուծումներով, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին տոկոսագումարի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարել տոկոս, որը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված Կողմնորոշիչ դրույքաչափին՝ ավելացրած Փոփոխական սպրեդը՝ պայմանով, որ Վարկի ողջ Մայր գումարի կամ դրա մի մասի Փոխարկման դեպքում ՀՀ կողմից Փոխարկման ժամանակահատվածում այդ գումարի համար վճարման ենթակա տոկոսը կորոշվի Ընդհանուր պայմանների IV հոդվածի համապատասխան դրույթների համաձայն (հոդված II, կետ 2.05 և 2.06),

- կիսամյակային մուծումներով, սկսած 2030թ. նոյեմբերի 15-ից մինչև 2040թ. մայիսի 15-ը, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը՝ 4.76% վճարման մասնաբաժնով, իսկ 2040թ. նոյեմբերի 15-ին՝ 4.80% վճարման մասնաբաժնով (հոդված II, կետ 2.07 և Առդիր 3, կետ 1),

- հայտարարել Ծրագրի նպատակներն իրականացնելու հանձնառության մասին և այս նպատակով ապահովել Ծրագրի իրականացումը

Ծրագրի իրականացման մարմնի կողմից՝ Ծրագրի կազմակերպական հանձնաժողովի և Աշխատանքային խմբի աջակցությամբ՝ Ընդհանուր պայմանների V հոդվածին և Ծրագրի համաձայնագրին համապատասխան, ինչպես նաև առանց վերոհիշյալ դրույթները սահմանափակելու և բացառությամբ այն դեպքի, երբ այլ համաձայնություն է ձեռք բերվում ՀՀ և Բանկի միջև, ապահովել Ծրագրի իրականացումը՝ Համաձայնագրի 2-րդ առդիրի դրույթներին համապատասխան (հոդված III, կետեր 3.01 և 3.02),

- Ծրագրի բարձր մակարդակի համակարգման և քաղաքականության աջակցության պատասխանատվությունը պատվիրակել Էկոնոմիկայի նախարարությանը, ինչպես նաև ստեղծել և Ծրագրի իրականացման ընթացքում պահել Ծրագրի կազմակերպական հանձնաժողով, որը նախագահում է վարչապետի տեղակալը և կազմված է ԷՆ, ՏԿԱԻՆ, ՄՆ, ՖՆ, ԲՆ, ՔՆ, ՀԶՀ ներկայացուցիչներից, և Ծրագրի իրականացման մարմին, որը պատասխանատու է միջգերատեսչական համակարգման, բարձր մակարդակի ռազմավարական որոշումների, Ներդրումային ենթաձրագրերի առաջարկների ընդունման և Ծրագրի ընդհանուր իրականացումը վերահսկելու համար (Առդիր 2, Բաժին I, Կետ «Ա», ենթակետեր 1 և 2),

- ստեղծել, այնուհետև Ծրագրի իրականացման ընթացքում պահպանել Աշխատանքային խումբ, որը, ի թիվս այլնի, կազմված է ԷՆ, ՏԿԱԻՆ, ՄՆ, ՖՆ, ՔՆ, ՊԺՊԳ, ԲՆ և Ծրագրի իրականացման մարմնի, ՀԶՀ, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և Ծրագրի շահառու տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական ներկայացուցիչներից՝ նպատակ ունենալով ապահովելու արդյունավետ միջգերատեսչական հաղորդակցություն՝ պատասխանատու լինելով Ծրագրի իրականացման դյուրացման և Ծրագրի կազմակերպական հանձնաժողովին տեխնիկական առաջարկություններ տրամադրելու համար (Առդիր 2, Բաժին I, Կետ «Ա», ենթակետ 3),

- ապահովել, որպեսզի Ծրագրի իրականացման մարմինն իրականացնի Համաձայնագրի 2-րդ առդիրի I բաժնի «Ա» կետի 4-րդ ենթակետում սահմանված գործողությունները (Առդիր 2, Բաժին I, Կետ «Ա», ենթակետ 4),

- Ծրագրի իրականացումը դյուրացնելու նպատակով Վարկային միջոցները դրամաշնորհային հիմունքներով հասանելի դարձնել Ծրագրի իրականացման մարմնին՝ ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար նախարարի և Ծրագրի իրականացման մարմնի միջև կնքված Գործակալության պայմանագրի համաձայն՝ Բանկի կողմից հաստատված պայմաններով («Գործակալության պայմանագիր») (Առդիր 2, Բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),

- Գործակալության պայմանագրով սահմանված ՀՀ իրավունքներն ու

պարտականություններն իրականացնել այնպես, որ պաշտպանվեն ՀՀ և Բանկի շահերը, և իրագործվեն Վարկի տրամադրման նպատակները. բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ այլ բան է համաձայնեցվել, չփոխանցել, չփոփոխել, ուժը կորցրած չճանաչել, չդադարեցնել Օժանդակ համաձայնագիրը կամ դրա որևէ դրույթ կամ չհրաժարվել դրանից և չապահովել դրա հարկադիր կատարումը (Առդիր 2, Բաժին I, Կետ «Բ», ենթակետ 2),

- իրականացնել և ապահովել, որպեսզի Ծրագրի իրականացման մարմինը Ծրագիրն իրականացնի Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան (Առդիր 2, Բաժին I, Կետ «Գ»),

- ապահովել, որպեսզի Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք բերվեն Գնումների ուղեցույցի I բաժնում սահմանված կամ նշված պահանջներին և Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթներին համապատասխան (Առդիր 2, Բաժին III, Կետ «Ա», ենթակետ 1),

- ապահովել, որպեսզի Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորվող բոլոր խորհրդատվական ծառայությունները ձեռք բերվեն Խորհրդատուի ուղեցույցի I և V բաժիններում սահմանված կամ նշված պահանջներին և Համաձայնագրի 2-րդ առդիրի III բաժնի դրույթներին համապատասխան (Առդիր 2, Բաժին III, Կետ «Ա», ենթակետ 2):

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է նաև այլ պարտավորություններ:

Սահմանադրական դատարանը վարկային պարտավորությունների վերաբերյալ նախկին որոշումներում և դրանց կատարման մասին տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Համաձայնագիրը ևս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման և Ծրագրի կառավարման ու թափանցիկ հաշվեքննության կազմակերպման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ասվածի համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի կառավարության կողմից կազմակերպվի և կոնկրետ պատասխանատու պետական մարմնի միջոցով իրականացվի մշտադիտարկում՝ արդյունքները հասանելի դարձնե-

լով հանրությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2016 թվականի փետրվարի 23-ին ստորագրված՝ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1283

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՒՔԻ
ՄԱՐԶԵՐԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված՝ «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

ձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի հունիսի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց .

1. «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկառու) և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև 2016 թվականի ապրիլի 5-ին:

Համաձայնագիրը բաղկացած է Նախաբանից և 6 հոդվածներից:

Համաձայնագրի անբաժանելի մասն են հանդիսանում 2 առդիրներ. Առդիր 1՝ «Ծրագրի նկարագրություն» և Առդիր 2՝ «Դասեր և առհանումներ»:

2. Սույն Համաձայնագրի կնքմամբ դադարեցվում է 2014 թվականի դեկտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագիրը, որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2015 թվականի մայիսի 21-ին՝ ՀՀ ԱԺ ԱԺՈ-158-Ն որոշմամբ (ՄԴՈ-1199):

3. Համաձայնագրով վարկավորվող Ծրագրի նպատակն է աջակցել Վարկառուին՝ բարելավելու կոշտ թափոնների կառավարումը Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում (Նախաբան, Առդիր 1, կետ 1):

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից

Մաս Ա. «Կապիտալ ծախսեր (ներդրումային բաղադրիչներ)», որով նախատեսվում է ֆինանսավորել թափոնների հավաքման բեռնատարների ու բեռնարկղերի և աղբավայրերի համար հատուկ սարքավորումների ձեռքբերումը, ինչպես նաև թափոնների հավաքման նոր կետերի, նոր աղբավայրերի և փոխանցման կայանների կառուցումը:

Մաս Բ. «Տեխնիկական համագործակցություն (Խորհրդատվական հանձնարարություններ), որով նախատեսվում է աջակցել Ծրագրի իրականացմանն ու գնումներին, Կորպորատիվ զարգացման և շահագրգիռ կողմերի մասնակցության ծրագիր կազմել, Բնապահպանական և սոցիա-

լական լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել (Առդիր 1, կետ 2):

4. Համաձայնագրով Բանկը Վարկառուին տրամադրում է 5.500.000 եվրո գումարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ)՝ սույն Համաձայնագրում և Աբովյանի, Բյուրեղավանի, Չարենցավանի, Հրազդանի, Ծաղկաձորի, Նոր Հաճնի, Եղվարդի, Գավառի, Ճամբարակի, Սևանի, Մարտունու ու Վարդենիսի քաղաքապետարանների (այսուհետ՝ Ծրագրի քաղաքապետարաններ) ու Բանկի միջև կնքված՝ ծրագրի իրականացման և աջակցության համաձայնագրում սահմանված կամ հղում կատարված պայմաններին համապատասխան (Նախաբան):

Վարկը բաղկացած է 2 տրանշից.

1) Տրանշ Ա՝ 3.500.000 եվրո գումարի չափով և

2) Տրանշ Բ՝ 2.000.000 եվրո գումարի չափով (II հոդվ., 2.01 բաժին):

Վարկի հասանելի գումարը կարող է ժամանակ առ ժամանակ առհանձվել՝ Առդիր 2-ի դրույթներին համապատասխան, Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ողջամիտ արժեքի առնչությամբ կատարված ծախսերը ֆինանսավորելու համար (II հոդվ., 2.03 բաժին, կետ ա):

Վարկի առհանման նվազագույն գումարը 300.000 եվրո է՝ Ծրագրի Ա մասի ներքո նոր ադրավայրի կառուցման համար, և 50.000 եվրո՝ Ծրագրի «Ա» մասի ներքո այլ ծախսերի համար (II հոդվ., 2.02 բաժին, կետ ա): Վաղաժամ մարման նվազագույն գումարը 500.000 եվրո է, իսկ չեղյալ հայտարարման նվազագույն գումարը՝ 500.000 եվրո (II հոդվ., 2.02 բաժին, կետեր բ և գ):

Տոկոսի վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը և հոկտեմբերի 16-ը (II հոդվ., 2.02 բաժին, կետ դ):

5. Համաձայնագրով Վարկի Տրանշ Ա-ի մարման առաջին ամսաթիվը 2018թ. ապրիլի 16-ն է, իսկ վերջին ամսաթիվը՝ 2029թ. հոկտեմբերի 16-ը: Վարկի Տրանշ Բ-ի մարման առաջին ամսաթիվը 2019թ. ապրիլի 16-ն է, իսկ վերջին ամսաթիվը՝ 2030թ. հոկտեմբերի 16-ը (II հոդվ., 2.02 բաժին, կետ ե, ենթակետ 1):

Տրանշ Ա-ի համար Վարկի հասանելիության վերջին ամսաթիվը 2018թ. մարտի 31-ն է կամ ավելի ուշ ընկնող ամսաթիվ, որը Բանկը, իր հայեցողությամբ, կարող է սահմանել և այդ մասին ծանուցել Վարկառուին, իսկ Տրանշ Բ-ի համար Վարկի հասանելիության վերջին ամսաթիվը 2019թ. մարտի 31-ը կամ ավելի ուշ ընկնող ամսաթիվ, որը Բանկը, իր հայեցողությամբ, կարող է սահմանել և այդ մասին ծանուցել Վարկառուին (II հոդվ., 2.02 բաժին, կետ գ): Համաձայնագրով ակնկալվում է, որ Ծրագրի Ա մասն ավարտվելու է մինչև 2018 թվականի նոյեմբերի 30-ը (Առդիր 1, կետ 3):

Պարտավորության վճարի դրույքաչափը տարեկան 0,5% է (II հոդվ.,

2.02 բաժին, կետ է): Վարկի համար կիրառելի է փոփոխվող տոկոսադրույքը: Չնայած դրան, Վարկառուն կարող է, որպես այլընտրանք, Վարկի մի մասի տոկոսը վճարել ֆիքսված տոկոսադրույքով, պայմանով, որ փոխարկվող մայր գումարը չպետք է 1.000.000 եվրոյից պակաս լինի (II հոդվ., 2.02 բաժին, կետ ը):

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- մարել Տրանշ Ա-ն և Տրանշ Բ-ն 24 հավասար (կամ հնարավորինս հավասար) կիսամյակային մասնաբաժիններով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին (II հոդվ., 2.02 բաժին, կետ ե, ենթակետ 1),

- սեփական միջոցներից Բանկին վճարել 20.076,39 եվրո վարկի վերահաստատման վճար Հայաստանի Հանրապետության և Բանկի միջև 2014թ. դեկտեմբերի 19-ով թվագրված Վարկային համաձայնագրի ներքո կուտակված պարտավորության վճարի փոխարեն՝ վճարման ուժի մեջ մտնելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (II հոդվ., 2.02 բաժին, կետ թ),

- Ծրագրի ընկերությանը հասանելի դարձնել Վարկային միջոցները Բանկի համար ընդունելի պայմաններով սույն Համաձայնագրի համաձայն, Բանկի համար բավարար ձևով ու բովանդակությամբ (III հոդվ., 3.01 բաժին, կետ ա),

- Ենթավարկային համաձայնագրի ներքո իրականացնել իր իրավունքներն այնպես, որպեսզի պաշտպանվեն Հայաստանի Հանրապետության և Բանկի շահերը, ապահովվի համապատասխանությունը Համաձայնագրի դրույթներին, և իրականացվեն այն նպատակները, որոնց համար տրամադրվել է Վարկը (III հոդվ., 3.01 բաժին, կետ բ),

- չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել և չիրաժարվել Ենթավարկային համաձայնագրի որևէ դրույթից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ համաձայնի (III հոդվ., 3.01 բաժին, կետ գ),

- ապահովել, որպեսզի Ծրագրի յուրաքանչյուր քաղաքապետարան իրականացնի Ծրագրի իրականացման և աջակցության համաձայնագրով ստանձնած իր բոլոր պարտավորությունները (III հոդվ., 3.01 բաժին, կետ դ),

- ապահովել, որպեսզի Ծրագրի ընկերությունն իրականացնի Ծրագրի իրականացման համաձայնագրով ստանձնած իր բոլոր պարտավորությունները (III հոդվ., 3.01 բաժին, կետ ե),

- ձեռնարկել կամ ապահովել, որպեսզի ձեռնարկվեն բոլոր այն լրացուցիչ գործողությունները, որոնք անհրաժեշտ են Ծրագրի ավարտի համար բավարար միջոցներ տրամադրելու նպատակով (III հոդվ., 3.01 բաժին, կետ զ),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության կողմից վերահսկվող ցանկացած անձ (բացի ֆիզիկական անձից) կամ միավոր ժամանակին վճարի կոշտ թափոնների վճարները Ծրագրի քաղաքապետարաններին կամ Ծրագրի ընկերությանը՝ կախված հանգամանքներից (III հոդվ., 3.01 բաժին, կետ է),

- ջանքեր գործադրել՝ խթանելու համար իրավական այնպիսի կարգավորումներ, որոնք կոշտ թափոնների ծառայությունների համար ապահովում են ծախսերի ամբողջական փոխհատուցմամբ սակագներ (III հոդվ., 3.01 բաժին, կետ ք),

- երաշխավորել Համաձայնագրի V հոդվածի 5.01 բաժնով նախատեսված գործողությունների իրականացումը որպես Համաձայնագրի ուժի մեջ մտնելու նախապայման (Հոդված V, Բաժին 5.01),

- չկատարել ոչ մի Առհանում մինչև Վարկային համաձայնագրի ամսաթիվը կատարված ծախսերի առնչությամբ (Առդիր 2, մաս 2, կետ ա),

- չկատարել ոչ մի Առհանում Ծրագրի Ա մասի ներքո որևէ ծախսի առնչությամբ, քանի դեռ նույն գումարի չափով միաժամանակյա վճարում չի կատարվել Դրամաշնորհային համաձայնագրով՝ այդ ծախսի մնացած բաժինը ֆինանսավորելու նպատակով (Առդիր 2, մաս 2, կետ բ):

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի I հոդվածի 1.01 բաժնի «ա» կետի համաձայն 2012 թվականի դեկտեմբերի 1-ով թվագրված՝ Բանկի Ստանդարտ պայմանների բոլոր դրույթները ներառվում են Համաձայնագրում և կիրառելի դառնում Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ՝ այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին Համաձայնագրում, ընդ որում, Համաձայնագրի I հոդվածի 1.01 բաժնով նախատեսված են փոփոխություններ Ստանդարտ պայմանների 2.02 բաժնում:

8. Միաժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Համաձայնագիրը ևս պահանջում է լուրջ վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման և Ծրագրի կառավարման ու թափանցիկ հաշվեքննության կազմակերպման առումով Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ

կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016 թվականի ապրիլի 5-ին ստորագրված՝ «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1284



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՓՈԽԱԴԱՐՁ
ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Վ. Քոչարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի մարտի 23-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 03.06.2016թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր Բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Ձ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագիրն (Համաձայնագիր) ստորագրվել է 2016թ. մարտի 23-ին Երևանում՝ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրման իրավական հիմքի ամրապնդման նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ քուվեյթյան կողմին տրամադրել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն, եթե այն գործողությունը, որի առնչությամբ դիմում է ներկայացվել, քրեորեն պատժելի է Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության օրենքներով,

- արտակարգ իրավիճակներում՝ մինչև դիմումների բնօրինակները ներկայացնելը, որպես հայցվող կողմ, անմիջապես կատարել իրավական օգնության մասին հեռատիպի, ֆաքսի, էլեկտրոնային նամակի տեսքով կամ հաղորդակցման այլ ձևերով ներկայացված դիմումը և հայցող քուվեյթյան կողմին տեղեկացնել արդյունքների մասին,

- որպես հայցվող կողմ՝ իրավական օգնության տրամադրումը հետաձգելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու պարագայում, ՀՀ կենտրոնական մարմնի միջոցով այդ մասին տեղեկացնել հայցող կողմին՝ նշելով այդ որոշման պատճառները,

- որպես հայցող կողմ՝ անհրաժեշտության դեպքում ապահովել Համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության տարածք հանձնված կամ դիմումի համաձայն ներկայացած անձի պաշտպանությունը և այլն:

3. Համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաս-

տանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց .

1. 2016 թվականի մարտի 23-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի Պետության միջև քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1285



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 թվապահի ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ՄԱԿԱՌՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՌՅԻ
ՀԱՏՈՒԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՄԻՋԵՎ ՄՈՒՏՔԻ
ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՁԸ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի փետրվարի 3-ին Մակաոյում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի վարչակարգի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016
155

միջև մուտքի արտոնագրի պահանջը փոխադարձաբար վերացնելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի հունիսի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Յ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի վարչակարգի միջև մուտքի արտոնագրի պահանջը փոխադարձաբար վերացնելու մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2016 թվականի փետրվարի 3-ին Մակաոյում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի վարչակարգի (այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր) միջև:

Համաձայնագրի նպատակն է զարգացնել բարեկամական հարաբերությունները, խրախուսել տնտեսական ու առևտրային կապերը և դյուրացնել մարդկանց տեղաշարժը Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի միջև:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության վավեր դիվանագիտական կամ սովորական անձնագիր ունեցող ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև ՉԺՀ Մակաոյի հատուկ վարչական տարածքի վավեր անձնագիր կամ ճամփորդելու թույլտվություն ունեցողներն ազատվում են, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և ՉԺՀ Մակաոյի հատուկ վարչական տարածքի՝ մուտքի, ելքի կամ տարանցման արտոնագրային պահանջներից:

Յուրաքանչյուր այցի ժամանակ վերը նշված անձանց, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և ՉԺՀ Մակաոյի հատուկ վարչական տարածքում գտնվելու տևողությունը 365 օր ժամանակաշրջանում չպետք է գերազանցի 90 օրը (հոդվ. 1):

3. Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված անձանց մուտքի արտոնագրից ազատումը չի ընձեռում աշխատելու իրավունք: Մյուս Պայմանավորվող կողմի տարածք աշխատելու, մասնագիտական գործու-

ներությամբ զբաղվելու, սովորելու կամ այնտեղ ավելի քան 90 օր գտնվելու նպատակով մուտք գործած անձինք պարտավոր են նախապես ստանալ անհրաժեշտ թույլտվություններ (հոդվ. 2):

4. Համաձայնագրով մուտքի արտոնագրային պահանջի վերացումը Պայմանավորվող կողմերի կողմից տրամադրված վավեր անձնագիր կամ ճամփորդելու թույլտվություն ունեցողներին չի ազատում մյուս Պայմանավորվող կողմի տարածքում գործող, մասնավորապես, մուտքի, գտնվելու և ելքի հետ կապված օրենքներին ենթարկվելու պարտավորությունից (հոդվ. 3):

5. Սույն Համաձայնագիրը չի ազդի ինչպես յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների՝ մյուս Պայմանավորվող կողմի անցանկալի համարվող անձանց մուտքն իր տարածք կամ իր տարածքում նրանց գտնվելը մերժելու իրավունքի վրա (հոդվ. 4), այնպես էլ՝ միջազգային իրավունքի ներքո Պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների վրա (հոդվ. 7):

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները ցանկացած պահի հետ ընդունեն ՉԺՀ Մակաոյի հատուկ վարչական տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության վավեր դիվանագիտական կամ սովորական անձնագիր ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին (հոդվ. 5, կետ 1),

- Հայաստանի Հանրապետության տարածքից անձին հետ ուղարկելու դեպքում հոգալ բոլոր տրանսպորտային ծախսերը (հոդվ. 5, կետ 2),

- Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջոցով փոխանակել Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված վավեր դիվանագիտական կամ սովորական անձնագրերի նմուշները՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առնվազն 30 օր առաջ (հոդվ. 6, կետ 1),

- սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված վավեր դիվանագիտական կամ սովորական անձնագրերի փոփոխման կամ նորերի ներդրման դեպքում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջոցով մյուս Պայմանավորվող կողմին տրամադրել այդպիսի փաստաթղթերի նմուշներ՝ դրանք գործածության մեջ դնելուց առնվազն 30 օր առաջ (հոդվ. 6, կետ 2):

7. Համաձայնագրի 8-րդ և 9-րդ հոդվածների վերլուծության արդյունքներից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա) Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն որպես առանձին արձանագրություններ, որոնք ուժի մեջ կմտնեն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով

և կկազմեն դրա անբաժանելի մասը,

բ) Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր կծանուցեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ համապատասխան ներպետական ընթացակարգերի կատարման մասին, ընդ որում, Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից և ուժի մեջ կլինի անորոշ ժամկետով,

գ) յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, մյուս Պայմանավորվող կողմին գրավոր ծանուցելով, կարող է կասեցնել կամ դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ հասարակական կարգի պահպանման, անվտանգության, առողջության կամ այլ արդարացված պատճառներով: Ընդ որում, դադարեցումն ուժի մեջ կմտնի ծանուցումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալու ամսաթվին հաջորդող ամսվա առաջին օրը, իսկ կասեցումն ուժի մեջ կմտնի այդ մասին պաշտոնական ծանուցման օրը՝ առանց խոչընդոտելու սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի իրականացմանը:

8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի ուժով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի սուբյեկտ կարող է լինել նաև դաշնային (կամ միջազգային իրավունքով ընդունված համանման կառուցվածք ունեցող) օտարերկրյա պետությունների դաշնության սուբյեկտը կամ ինքնավարության կամ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմավորումը, եթե այդ սուբյեկտը, կազմավորումը, դաշնային պետության սահմանադրական դրոյթների համաձայն, միջազգային պայմանագիր կնքելու իրավունք ունի: Սույն Համաձայնագրի շրջանակում՝ որպես Պայմանավորվող կողմ հանդես է գալիս Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի վարչակարգը, որը Համաձայնագրի կնքման համար պատշաճորեն լիազորվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կենտրոնական ժողովրդական կառավարության կողմից (Համաձայնագրի նախաբան):

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2016 թվականի փետրվարի 3-ին Մակաոյում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Մակաոյի հատուկ վարչական տարածքի վարչակարգի միջև մուտքի արտոնագրի պահանջը փոխադարձաբար վերացնելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՄԴՈ-1286



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ԵՎ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՍԱՀՄԱՆԱՅԻՆ
ԱՆՑԱԿԵՏԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ (ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ, ԲԱՎՐԱՅԻ ԵՎ ԳՈԳԱՎԱՆԻ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ)» ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԹԻՎ 3 ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2016 թվականի մարտի 22-ին և 2016 թվականի ապրիլի 15-ին ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 8 հունիսի 2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությունն ստորագրվել է Եվրոպական ներդրումային բանկի կողմից 2016թ. մարտի 22-ին, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից՝ 2016թ. ապրիլի 15-ին՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2012 թվականի օգոստոսի 7-ին Երևանում ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն) (Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի (Բանկ) միջև 2012 թվականի օգոստոսի 7-ին Երևանում ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն) (Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի ԱԺՈ-038-Ն որոշմամբ (ՄԴՈ-1055):

3. Ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությամբ նախատեսվում է ավելացնել նշված ֆինանսական պայմանագրով տրամադրված վարկի 30.316.000 եվրո գումարը 534.000 եվրո գումարի չափով, ինչի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի 30.850.000 եվրո:

4. Ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի (Բանկ) միջև 2012 թվականի օգոստոսի 7-ին Երևանում ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի 30.316.000 եվրո գումարն ավելանում է 534.000 եվրո գումարի չափով՝ կազմելով 30.850.000 եվրո:

Այսպիսով, վերոնշյալ 534.000 եվրո գումարի ներգրավումը Հայաստանի Հանրապետության համար առաջացնում է լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ:

5. Փոփոխությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Ֆինանսական պայմանագրի Ներածական 3-րդ դրույթը, Ներածական 4-6-րդ դրույթները, 1.01 հոդվածը փոփոխել և ընդունել Փոփոխությամբ սահմանված բովանդակությամբ:

6. Փոփոխությամբ, ի թիվս այլնի, Հայաստանի Հանրապետությունը հաստատում է, որ Ֆինանսական պայմանագրի 6-րդ հոդվածի ներքո (Վարկառուի հանձնառություններ և հաստատումներ) Հայաստանի Հանրապետության կողմից կատարման ենթակա կամ կրկնված հաստատումներն ու երաշխիքներն ստույգ են բոլոր առումներով՝ Հայաստանի Հանրապետության կողմից Փոփոխության նամակի համաստորագրման ամսաթվի դրությամբ, ինչպես նաև համաձայնում է, որ Ֆինանսական պայմանագրի 11-րդ հոդվածը (Օրենք և ընդդատություն) համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) կիրառվում է Փոփոխության նամակի և Հայաստանի Հանրապետության կողմից դրա պայմանների ընդունումից բխող համաձայնության նկատմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2016 թվականի մարտի 22-ին և 2016 թվականի ապրիլի 15-ին ստորագրված՝ «Սահմանային անցակետեր և ենթակառուցվածք (Հայաստանի Հանրապետություն. Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի

սահմանային անցակետերի արդիականացում)» ֆինանսական պայմանագրի թիվ 3 փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1287



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2016 թվականի ԱՊՐԻԼԻ 6-ԻՆ ԲԵՌԼԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ, ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՍՄ
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

21 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում) Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի ապրիլի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

6-ին Բեռլինում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամների ընտանիքների անդամների վարձատրվող աշխատանքի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի հունիսի 2-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Քննության առարկա Համաձայնագիրն ստորագրվել է 2016 թվականի ապրիլի 6-ին Բեռլինում՝ դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամների ընտանիքների անդամների վարձատրվող աշխատանքի հնարավորությունների բարելավման նպատակով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- փոխադարձության հիման վրա թույլատրել Համաձայնագրի 1-ին հոդվածում թվարկված դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամների ընտանիքի անդամներին (այսուհետ՝ ընտանիքի անդամներ), կատարել վարձատրվող աշխատանք, ինչպես նաև հիշյալ անձանց վարձատրվող աշխատանքի անցնելու կապակցությամբ ազատել կացության կարգավիճակ ստանալու պարտականությունից (հոդված 2, կետ 1),

- եթե ընտանիքի անդամը ցանկանում է վարձատրվող աշխատանք կատարել, ապա ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը հայտագրով տեղեկացնի այդ մասին Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության արարողակարգի ծառայությանը՝ նշելով ընտանիքի անդամի անունը, գործատուի անունը և հասցեն, ինչպես նաև ցանկալի զբաղմունքի անվանումը (հոդված 3, կետ 1),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, Համաձայնագրի դրույթների՝ ընտանիքի

անդամի նկատմամբ կիրառելիությունը որոշելուն պես, անհապաղ գրավոր տեղեկացնի Գերմանիայի Դաշնային Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությանը, որ ընտանիքի անդամը վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվություն է ստանում (հոդված 3, կետ 2),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը ծանուցի Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարությանն ընտանիքի անդամի վարձատրվող աշխատանքի սկզբի և ավարտի մասին (հոդված 3, կետ 3),

- կիրառել Հայաստանի Հանրապետության քրեական իրավագործությունից անձեռնմխելիության վերաբերյալ դրույթները նաև վարձատրվող աշխատանքի առնչությամբ կատարած ցանկացած արարքի նկատմամբ ընտանիքի այն անդամների դեպքում, ովքեր Հայաստանի Հանրապետությունում օգտվում են քրեական իրավագործության անձեռնմխելիությունից՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայի կամ այլ կիրառելի միջազգային փաստաթղթի համաձայն (հոդված 5, կետ 1),

- քրեական արարք կատարելու դեպքում որպես ուղարկող պետություն լրջորեն դիտարկել ընտանիքի համապատասխան անդամի Հայաստանի Հանրապետության քրեական իրավագործության անձեռնմխելիությունից հրաժարվելու հարցը (հոդված 5, կետ 1),

- եթե Հայաստանի Հանրապետությունը չի հրաժարվում ընտանիքի համապատասխան անդամի անձեռնմխելիությունից, ապա այդ անձի կատարած ցանկացած քրեական արարքի մասին տեղեկացնել քրեական հետապնդում իրականացնող ՀՀ մարմիններին և ծանուցել Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը քրեական վարույթի արդյունքների մասին (հոդված 5, կետ 2):

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և միտված են երկկողմ բարիդրացիական հարաբերությունների ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց:

1. 2016 թվականի ապրիլի 6-ին Բեռլինում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի կամ մշտական ներկայացուցչության անդամների ընտանիքների անդամների վարձատրվող աշխատանքի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1288



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԳԵՎՈՐԳ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 87-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Գևորգ Սաֆարյանի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի և Գ. Պետրոսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց՝ «Գևորգ Սաֆարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Գ. Սաֆարյանի՝ 2016 թվականի հունվարի 19-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵԼԵԿՎԻԶԻ ♦ 5-6(83-84)2016

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Յ .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013թ. դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 7-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Հակընդդեմ հայց ներկայացնելը» վերտառությամբ 87-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Պատասխանողը մինչև գործով դատաքննություն նշանակելը կարող է ներկայացնել հակընդդեմ հայց՝ ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

ՀՀ ոստիկանությունը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Գ. Սաֆարյանին (այսուհետ՝ դիմող) ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի հիմքով) վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ դիմողը պահանջել է ոստիկանների՝ իր իրավունքների իրականացմանը միջամտող գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ:

ՀՀ վարչական դատարանը 15.01.2015թ. որոշմամբ մերժել է հակընդդեմ հայցի ընդունումը՝ պատճառաբանելով, որ այն ներկայացվել է գործը դատաքննության նշանակելուց հետո:

ՀՀ վարչական դատարանի նշված որոշման դեմ դիմողի վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.04.2015թ. որոշմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2015թ. որոշմամբ մերժվել է նաև վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերը նշված դատական ակտերով կիրառվել է իր նկատմամբ, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ և 63-րդ հոդվածներին 1-ին մասերին, 78-րդ, 79-

րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին:

Վկայակոչելով սահմանադրական դատարանի դիրքորոշումները (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-902) և Սարգու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ դիմողը պնդում է, որ վիճարկվող իրավադրույթը, որը սահմանափակում է պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքը, չի համապատասխանում իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, անհամաչափ սահմանափակում է անձի արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքները և խախտում դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Դիմողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածների վերլուծության արդյունքում հանգել է այն հետևությանը, որ հակընդդեմ հայց ներկայացնելու՝ պատասխանողի իրավունքի իրականացման համար սահմանված վերջնաժամկետը գործը դատաքննության նշանակելու պահը, կանխատեսելի չէ պատասխանողի համար: Դիմողը գտնում է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում հնարավոր չէ կանխատեսել դատարանի կողմից հայցադիմումը վարույթը նդունելու մասին որոշումը կայացնելուց հետո գործը դատաքննության նշանակելու նվազագույն ժամկետը, քանի որ այն կախված է ինչպես հայցադիմումին պատասխան ներկայացնելու հանգամանքից, այնպես էլ նախնական դատական նիստ նշանակելու՝ դատարանի հայեցողական լիազորությունից:

Ըստ դիմողի՝ դատաքննություն նշանակելու մասին որոշումն ստանալու պահից պատասխանողն այլևս զրկվում է հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքից, քանի որ այդ իրավունքը դադարում է ոչ թե դատաքննությունն սկսելու, այլ դատաքննությունը նշանակելու պահից: Պատասխանողը դատաքննությունը նշանակելու մասին որոշումն ստանալու պահին փաստացի իրազեկվում է հակընդդեմ հայց ներկայացնելու իր իրավունքի իրականացման ժամկետի և հնարավորության սպառման մասին, մինչդեռ հայցվորը պահպանում է հայցի հիմքն ու առարկան փոխելու հնարավորությունը: Դիմողը կարծում է, որ նման իրավակարգավորումն անհամաչափ սահմանափակում է դատարանի մատչելիության՝ պատասխանողի իրավունքը՝ խախտելով նաև կողմերի իրավահավասարության սկզբունքը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը համակարգային առումով փոխկապակցված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 80-րդ հոդվածների հետ, և նույնիսկ այն պարագայում, երբ հակընդդեմ հայցի ներկայացման ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդություն ներկայացվի՝ գործը դատաքննության փուլում գտնվելու պատճառաբանությամբ դատարանն այն բավարարել չի կարող:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, պնդում է, որ վիճարկվող իրավադրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Անդրադառնալով կողմերի իրավահավասարության սկզբունքին՝ պատասխանողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումն ավելի հավասարակշիռ է դարձրել կողմերի հնարավորությունները, քանի որ նախկին օրենսդրությամբ հայցի հիմքը և առարկան կարող էին փոփոխվել մինչև գործը դատաքննություն նշանակելը, իսկ հակընդդեմ հայց կարող էր ներկայացվել հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետում: Գործող օրենսդրությամբ հայցի հիմքը և առարկան կարող են փոխվել մինչև դատաքննություն նշանակելը կամ դատաքննություն նշանակելու մասին դատարանի որոշումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, իսկ հակընդդեմ հայց կարող է ներկայացվել մինչև դատաքննություն նշանակելը:

Ըստ պատասխանողի՝ դատարանի մատչելիության սկզբունքի խախտում հնարավոր է, եթե սահմանափակվի անձի կողմից դատական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը: Մինչդեռ գործող իրավակարգավորումներն անձին հնարավորություն են տալիս ինչպես հակընդդեմ հայց ներկայացնել սկզբնական հայցի հետ միասին քննելու համար, այնպես էլ նման հայց չներկայացնելու դեպքում իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել դատավարական այլ վարույթի շրջանակներում՝ ներկայացնելով առանձին հայց:

Իրավական որոշակիության սկզբունքի առնչությամբ պատասխանողը նշում է, որ դատավարական ժամկետները կարող են սահմանվել ինչպես կոնկրետ ժամանակահատված նշելով, այնպես էլ սահմանելով որոշակի ժամանակահատված, որի հաշվարկի սկիզբը կամ ավարտը պայմանավորված լինի դատավարական որևէ իրադարձության վրա հասնելով՝ իրադարձություն, որի վրա հասնելու պահը դատավարության կողմերի կամքից անկախ է և անկանխատեսելի վերջիններիս համար: Պատասխանողը գտնում է, որ դա դեռևս չի նշանակում, որ խնդրո առարկա իրավակարգավորումները կարող են հանգեցնել անձի իրավաչափ սպասելիքների անկանխատեսելիության:

5. Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավադրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- վարչական դատավարությունում հակընդդեմ հայցի ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը և նպատակը,

- վիճարկվող իրավակարգավորման պայմաններում օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի իրացման երաշ-

խավորվածությունը (ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված),

- հակընդդեմ հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետի բավարար չափով որոշակիությունը, որպեսզի պատասխանողն ի վիճակի լինի դրսևորել համապատասխան վարքագիծ և իրականացնել արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իր սահմանադրական իրավունքները՝ հատկապես դատարանի մատչելիության իրավունքը (ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների առաջին մասեր):

6. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ հակընդդեմ հայցը տվյալ դատավարության շրջանակներում սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար պատասխանողի կողմից ներկայացվող ինքնուրույն պահանջ է, որն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը կամ որի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը, կամ որը փոխադարձաբար կապված է սկզբնական հայցի հետ, և դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծումը: Ակնհայտ է, որ սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով հակընդդեմ հայցի ինստիտուտն իմաստագրվում է, եթե անհրաժեշտ ու բավարար դատավարական ընթացակարգեր նախատեսված չեն այն սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Հակընդդեմ հայցի ինստիտուտը հնարավորություն է տալիս մեկ դատավարության ընթացքում մեկ դատական ակտով լուծել կողմերի փոխադարձ պահանջները և դատավարական նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնել առավել արդյունավետությամբ: Հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև փոխադարձ կապի առկայությունը պարտադիր պայման է, և երկու փոխկապակցված հայցերի առանձին քննությունը կարող է երկարաձգել վեճի ըստ էության լուծումը և լիարժեք չերաշխավորել արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը:

Հակընդդեմ հայցը՝ հանդիսանալով պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց, նպատակ ունի նպաստել արդյունավետ դատական պաշտպանության՝ նրա իրավունքի իրացմանը և ապահովել արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքի իրականացումը: Հետևաբար, օրենսդրորեն հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավակարգավորման հիմնական խնդիրն է դատավարական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ նախատեսել դրա իրավաչափ իրացումը երաշխավորելու համար:

7. ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ բոլորը հավասար են օրենքի առջև, ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի շրջանակներում արտահայտվում է որպես դատավարական կողմերի իրավահավասարության պահանջ:

Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 04.05.2010թ. ՄԴՈ-881 որոշման 5-րդ կետում ամրագրած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի. «... օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ ... սահմանելուն»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատավարության ընթացքում կողմերի իրավահավասարության սկզբունքին, Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության վճռում վերահաստատել է իր նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ «... դատավարությունում կողմերի իրավահավասարության պահանջը, որը արդար դատաքննության հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակում» (Nikoghosyan and Melkonyan v. Armenia, app. no. 11724/04 and 13350/04, 06.12.2007, §37; Dombo Beheer B.V. v. the Netherlands, app. no. 14448/88, 23.09.1993, §33; Steck-Risch v. Liechtenstein, app. no. 63151/00, 19.05.2005):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Վայնենն ընդդեմ Բելգիայի վճռով (Wynen and Centre Hospitalier Interregional Edith-Cavell v. Belgium, app. no. 32576/96, 05.11.2002) կողմերի իրավահավասարության պահանջի խախտում է համարել վճռաբեկ դատարանին լրացուցիչ միջնորդություններ ներկայացնելու՝ կողմերի համար տարբեր ժամկետների առկայությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը նախատեսում է վարչական դատավարության իրականացումը կողմերի իրավահավասարության հիման վրա, այսինքն՝ դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել

քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Սույն գործով վիճարկվող իրավադրույթը համադրելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրորեն վեճի առարկա դրույթով կողմերի համար գործի վերաբերյալ իրենց դիրքորոշումները ներկայացնելու ժամկետի առումով հավասար հնարավորություններ չի ապահովվել: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայցվորը հայցի հիմքը և (կամ) առարկան կարող է փոփոխել նախնական դատական նիստի ընթացքում կամ դատաքննությունն նշանակելու մասին վարչական դատարանի որոշումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, մինչդեռ պատասխանողը հակընդդեմ հայց կարող է ներկայացնել միայն գործի դատաքննությունը նշանակելուն նախորդող ժամանակահատվածում:

8. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, իսկ 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սույն գործով վիճարկվող իրավադրույթի համաձայն՝ վարչական դատավարությունում հակընդդեմ հայց ներկայացնելը հնարավոր է միայն գործով դատաքննությունն նշանակելուն նախորդող ժամանակահատվածում: Բոլորովին այլ իրավակարգավորում է ամրագրում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածը, որը նախատեսում է, որ հակընդդեմ հայցը կարող է ներկայացվել մինչև գործով վճիռ կայացնելը:

Եվ քաղաքացիական, և վարչական դատավարությունները կառուցվում են հրապարակայնության և կողմերի իրավահավասարության սկզբունքների հիման վրա, և երկու դեպքում էլ առկա է գործը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրաիրավական պահանջ:

2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատելով նախորդ մի շարք որոշումներում, մասնավորապես՝ ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190 և ՍԴՈ-1222 որոշումներում, արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքների առնչությամբ իր արտահայտած իրավական դիրքորոշումները, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներից բխող՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության շրջանակներում գտել է, որ. «... որևէ

առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել էլ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Շեշտվել է նաև, որ «ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում... »:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթի սահմանադրականությունը նույնպես պետք է գնահատել հաշվի առնելով տվյալ իրավական դիրքորոշումը:

9. Սահմանադրական դատարանը, ինչպես և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել են, որ դատարանի մատչելիությունը կարող է ունենալ որոշակի ընթացակարգային և ժամանակային սահմանափակումներ, որոնք, սակայն, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Դատավարական ժամկետների սահմանումը գործով վարույթի կանոնակարգման և հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացման նպատակ է հետապնդում:

Դատավարական ժամկետների և հակընդդեմ հայցի ինստիտուտները փոխկապակցված են, և հակընդդեմ հայց ներկայացնելը նույնպես պետք է նախատեսվի այնպիսի փուլում, որպեսզի կողմերին տրամադրվի ողջամիտ ժամկետ իրենց իրավական դիրքորոշումը ձևավորելու համար:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վարչական դատավարությունում գործը դատաքննության նշանակելու հստակ ժամկետ օրենսդիրը չի սահմանում: Վարչական դատարանը գործը դատաքննության նշանակելու մասին որոշում է կայացնում, երբ համարում է գործը դատաքննությանը նախապատրաստված (ՎԴՕ 90-րդ հոդված):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթը ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վարչական դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը: Նույն հոդվածը նախատեսում է նաև դատարանի իրավունքը՝ ելնելով գործի առանձնահատկություններից, սահմանել պատասխանն ուղարկելու ավելի երկար ժամկետ կամ պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխանը ներկայացնելու ժամկետը: Բացի դրանից, նույն հոդվածի 8-րդ մասի ուժով պատասխան չներկայացնելը վարչական դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից

հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում, իսկ 9-րդ մասի ուժով՝ հակընդդեմ հայց ներկայացնելն անձին չի ազատում հայցադիմումի պատասխան ներկայացնելու պարտականությունից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս վարչական դատարանը պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխանն ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում՝ պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դատաքննությունն արդյունավետ իրականացնելու նպատակով կարող է հրավիրել մեկից ավելի նախնական դատական նիստեր, որոնց ընթացքում, ի թիվս այլնի, պարզում է հայցի առարկան և հիմքերը, սահմանում ապացույցներ ներկայացնելու ժամկետները, լուծում ապացույցների ապահովման կամ հակընդդեմ հայցի հարցերը, ինչպես նաև կողմերի այլ միջնորդություններ:

Միայն նշված դատավարական գործողությունների ավարտից հետո դատարանը կարող է գործը համարել նախապատրաստված և նշանակել դատաքննություն: Օրենսդրական նման կանոնակարգումը դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքի իրացումն ուղղակի կախվածության մեջ է դնում նախնական դատական նիստ հրավիրելու և գործը դատաքննության նշանակելու՝ դատավորի հայեցողությունից: Ավելին, իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ առկա իրավակարգավորումը դիմողի համար նաև ստեղծում է իրավաչափ վարքագծի դրսևորման իրավական անորոշություն:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտնում է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հակընդդեմ հայցը ներկայացվում է հայց ներկայացնելու ընդհանուր կանոններով: Հակընդդեմ հայցը վարույթ ընդունելը, վերադարձնելը կամ հակընդդեմ հայցի վարույթ ընդունումը մերժելը կատարվում է նույն օրենսգրքի 78-80-րդ հոդվածներով սահմանված կարգով: Հակընդդեմ հայցի վարույթ ընդունումը մերժվում է նաև, եթե այն չի համապատասխանում նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին, այն է՝ ներկայացվել է գործը դատաքննության նշանա-

կելուց հետո կամ փոխկապակցված չէ սկզբնական հայցի հետ:

Նման իրավակարգավորումը դատական պրակտիկայում կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ, քանի որ օրենսդիրը մի դեպքում ժամկետի բաց թողումն ուղղակիորեն հայցադիմումը մերժելու հիմք է համարել, բայց նույն հոդվածում հղում է կատարել օրենսգրքի 79-րդ հոդվածին, որի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ հայցադիմում ներկայացնելու ժամկետը բաց է թողնվել և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին, ոչ թե մերժվում է հայցադիմումի ընդունումը, այլ այն վերադարձվում է:

Բացի դրանից, չնայած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածը նախատեսել է դատավարության մասնակիցների կողմից հարգելի պատճառով բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանին միջնորդություն ներկայացնելու միջոցով վերականգնելու հնարավորություն, այնուամենայնիվ, վերը նշված իրավակարգավորման պայմաններում պարզ չէ՝ որքանով է այն կիրառելի հակընդդեմ հայցի պարագայում:

Պատասխանողի փաստարկն այն մասին, որ հակընդդեմ հայցը մերժվելու դեպքում պատասխանողը հնարավորություն ունի հայց ներկայացնել ընդհանուր հիմունքներով, հիմնավոր համարվել չի կարող, քանի որ չի երաշխավորվում հակընդդեմ հայցի ինստիտուտի արդյունավետ իրացումը, և առանձին հայցի հարուցումը չի կարող ապահովել դատական պաշտպանության արդյունավետությունը և երաշխավորել գործի քննությունը ողջամիտ ժամկետում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ:

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը՝ «մինչև գործով դատաքննություն նշանակելը» դրույթի մասով ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների առաջին մասերին հակասող:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի դեկտեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ իրենց իրավասության շրջանակներում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա վեճի առարկա հոդվածի կիրառմամբ դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1289



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎԱՐՏԳԵԶ ԳԱՄՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 207-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 140-
ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 213-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Վ. Գասպարիի ներկայացուցիչներ Տ. Եգորյանի, Գ. Պետրոսյանի և Լ. Հակոբյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016
179

դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Վարսզեզ Գասպարիի՝ 2016 թվականի փետրվարի 11-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Ձ Ե Յ.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 140-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի»:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 207-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը»:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 213-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Ա.Դեմիրխանյանը պատիվն ու արժանապատվությունն արատա-

վորելու համար հրապարակավ ներողություն խնդրելու և վնասի հատուցման պահանջի մասին հայցադիմում է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Վարտգեգ Գասպարիի: Դատարանի 19.12.2014թ. վճռով հայցը բավարարվել է մասնակի:

Սույն քաղաքացիական գործով 26.01.2015թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը հաշվարկելով վճիռը բողոքաբերներին մատչելի դառնալու պահից, այն է՝ 24.12.2014 թվականից:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 12.02.2015թ. կայացրել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում, որը բողոքաբերներն ստացել են 19.02.2015թ.: Վերաքննիչ բողոքը վերադարձվել է հետևյալ հիմնավորմամբ. «...վերաքննիչ բողոքը ներկայացվել է 26.01.2015 թվականին՝ օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի՝ չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, ուստի վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման»:

Սույն քաղաքացիական գործով 05.03.2015թ. կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ երկշաբաթյա ժամկետի պահպանմամբ, ներկայացվել է նաև միջնորդություն՝ դատական ակտի հրապարակման պահից հաշվարկվող մեկամսյա ժամկետի բողոքաբերներից անկախ պատճառներով բացթողումն իրավունքի ուժով (ex jure) հարգելի և վերականգնված ճանաչելու, իսկ վերաքննիչ բողոքը պատշաճ ժամկետում ներկայացված ճանաչելու խնդրանքով, հաշվի առնելով այն, որ բողոքաբերների համար այն մատչելի դառնալու պահից մեկամսյա ժամկետը լրանում է 26.01.2015թ.:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 18.05.2015թ. որոշում է կայացրել՝ վճռի բողոքարկման ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժել, իսկ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 19.12.2014թ. վճռի դեմ Վ. Գասպարիի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնել:

Վերոնշյալ որոշման դեմ 10.06.2015թ. բողոքաբերների կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանը 08.07.2015թ. որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

3. Դիմողը՝ վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, նշում է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է դատավարական ժամկետի խախտմամբ և չի

պարունակում ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, վերաքննիչ բողոքը վերադարձվում է առանց թույլ տրված խախտումը վերացնելու համար ժամկետ տրամադրելու, ինչն այդ դեպքում հանգեցնում է բողոքի ընդունման մերժմանը: Նման սահմանափակմամբ չի հետապնդվում որևէ իրավաչափ ողջամիտ նպատակ, որի պարագայում արդարացված կարող է համարվել նման թերացում թույլ տված անձին վերաքննիչ բողոքի ներկայացման հնարավորությունից զրկելը:

Ըստ դիմողի՝ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքն այս դեպքում նախատեսում է տրամագծորեն այլ իրավական կարգավորում՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելը գնահատելով որպես ձևական սխալ»: Նման պարագայում բողոք բերող անձին հնարավորություն է ընձեռվում սահմանված ժամկետում այդ ձևական սխալն ուղղելուց հետո վերստին ներկայացնելու վերաքննիչ բողոքը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները սույն գործով դատարանների կողմից կիրառվել են այն մեկնաբանությամբ, ըստ որի՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել համապատասխան դատական ակտի հրապարակման, այլ ոչ՝ դատական ակտը կողմի համար մատչելի դառնալու պահից մեկ ամիս հետո, իսկ դատական ակտն ստանալու պահից սկսած մեկ ամսվա ընթացքում այն բողոքարկելու հնարավորությունը կարող է իրականացվել բացառապես բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության ներկայացման պարագայում:

Դիմողը նաև գտնում է, որ վիճարկվող դրույթները, դատական պրակտիկայում դրանց տրված վերոգրյալ մեկնաբանությամբ, ուղղակիորեն հակասում են ինչպես ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 28 և 29-րդ հոդվածներին, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին առ այն, որ բողոքարկման ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման, այսինքն՝ դատական ակտն ստանալու պահից:

Համադրված վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողը խնդրում է որոշել օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի, 207-րդ հոդվածի 1-ին մասի և 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1, 3, 28, 29, 78-81-րդ հոդվածներին, 61 և 63-րդ հոդվածներին 1-ին մասերին համապատասխանության հարցը:

4. Վիճարկվող նորմերի սահմանադրականության առնչությամբ պատասխանողի դիրքորոշումը հետևյալն է.

ա) դատարանի մատչելիության իրավունքը կարող է օրենքով ենթարկվել իրավաչափ սահմանափակումների, ինչն առկա է, երբ՝ սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, և տվյալ սահմանափակման պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է:

Քննարկվող իրավակարգավորման դեպքում օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով անձը փաստացիորեն զրկվում է տեխնիկական սխալն ուղղելու հնարավորությունից, որի բացասական հետևանքը վերջինիս կողմից դատարան դիմելու իրավունքի փաստացի սահմանափակումն է: Նման սահմանափակումը, պատասխանողի կարծիքով, իրավաչափ նպատակ հետապնդել չի կարող, քանզի չկա ողջամիտ և օբյեկտիվ արդարացում նշված պայմանի և օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված այլ պայմանների տարբերակման հիմքում: «Նման իրավակարգավորման պայմաններում անձը զրկվում է հստակ և գործնական հնարավորությունից բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը», ինչը սահմանափակում է անձի՝ դատարան դիմելու իրավունքը:

բ) դատական ակտի բողոքարկման՝ օրենքով սահմանված ժամկետի հաշվարկման սկզբի և համապատասխան միջնորդության վերաբերյալ «ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հանգում են հետևյալին՝ 1) բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի մեկնարկը պետք է հաշվել ոչ թե դատական ակտի հրապարակման պահից, այլ դատական ակտը փաստացի անձին հասանելի դառնալու պահից, 2) օրենքով սահմանված բողոքարկման մեկամսյա ժամկետի ավարտից հետո բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունն օբյեկտիվ իրավական անհրաժեշտություն է»:

Պատասխանողի կարծիքով՝ համապատասխան միջնորդություն ներկայացնելու՝ քննարկվող կառուցակարգն ամբողջովին համահունչ է ՀՀ Սահմանադրության պահանջներին, այն է՝ միջնորդության մեխանիզմի առկայության պայմաններում դատարանի մատչելիությունն արդյունավետ է, քանզի անձն ունի հստակ և գործնական հնարավորություն բողոքարկելու կոնկրետ դատական ակտը:

Կոնկրետ դեպքում անձի համար բացասական իրավական հետևանքներ են առաջացրել դատարան համապատասխան միջնորդություն չներկայացնելը, այդ հիմքով բողոքը վերադարձնելը և վերջինիս կապակցությամբ դատարանի իրավական մեկնաբանությունները, այլ ոչ թե բողոքարկման ժամկետի հաշվարկի վերաբերյալ դատարանի իրավական մեկնաբանությունը:

գ) իրավական որոշակիության սկզբունքի իմաստով օրենսգրքի վիճարկվող դրույթներում քննարկվող ձևակերպումները բավականաչափ հստակ են և ամբողջությամբ համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող պահանջներին: Ինչ վերաբերում է օրենսգրքի վիճարկվող 140 և 207-րդ հոդվածների 1-ին մասերին, ապա վերջիններս, պատասխանողի կարծիքով, իրավաչափ կարգավորումներ են նախատեսում՝ համապատասխանելով ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանողը նաև գտնում է, որ՝ «Օրենսգրքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի տարբերակված իրավակարգավորումները խտրական են, քանի որ հիմնավորված չէ այդ տարբերակման հիմքը որևէ իրավաչափ նպատակով, իսկ Օրենսգրքի խնդրո առարկա սահմանափակումը չունի ողջամիտ և օբյեկտիվ արդարացում»:

Պատասխանողի եզրահանգումն այն է, որ՝ «1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի և 140-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: 2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասն այնքանով, որքանով չապահովելով համապատասխան միջնորդությունը չներկայացնելու դեպքում տվյալ սխալի շտկման հնարավորություն, չի երաշխավորում անձի համար դատարան դիմելու բավարար մատչելիություն, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին»:

5. Սույն գործով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 3 և 81-րդ հոդվածներ),

- ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է համանման իրավակարգավորման վերաբերյալ ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում արտահայտած իր իրավական դիրքորոշումները:

6. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՄԴՈ-1062 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի, ՄԴՈ-1254 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի և ՄԴՈ-1268 որոշմամբ քննության առարկա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ:

Հաշվի առնելով ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների և սույն գործով վիճարկվող օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի բովանդակային համարժեքությունը, փաստելով, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա՝ վերը նշված դրույթի առնչությամբ, Սահմանադրական դատարանը հիմք է ընդունում հիշյալ որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Վերոհիշյալ որոշումների շրջանակում Սահմանադրական դատարանը որպես վիճարկվող դրույթների սահմանադրականության պայման նշել է, որ, նախ՝ պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, ինչպես նաև այն, որ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով (ex jure) պետք է ճանաչվի հարգելի: Ընդ որում, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինեն ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

7. Գործի նյութերի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմողի դիրքորոշումների ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից վկայակոչված՝ իր արդար դատաքննության և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքների ենթա-

դրյալ խախտումը և իր համար առաջացած ոչ բարենպաստ հետևանքները պայմանավորված չեն օրենսգրքի տվյալ հոդվածի վիճարկվող մասի սահմանադրականությամբ, ինչպես նաև սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում բացակայում է դատարանների կողմից դիմողի նկատմամբ հիշյալ դրույթի կիրառման և դիմողի սահմանադրական վերոհիշյալ իրավունքների ենթադրյալ խախտման միջև պատճառահետևանքային կապը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսգրքի 140-րդ հոդվածի հիշյալ դրույթը սահմանում է ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու կարգը: Վերջինիս կիրառումը դիմողին անմիջականորեն չի գրկում օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունից: Հետևաբար, դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքները, այն է՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու՝ օրենքով սահմանված ժամկետը դիմողից անկախ պատճառներով բաց թողնելու պարագայում վերաքննիչ բողոք ներկայացնելու հնարավորությունից զրկված լինելը, պայմանավորված չեն դատարանների կողմից դիմողի նկատմամբ հիշյալ դրույթի կիրառմամբ:

Հետևաբար՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների հիման վրա «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի մասով ենթակա է կարճման:

8. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին և հաշվի առնելով հիշյալ դրույթի սահմանադրականության վերաբերյալ դիմողի և պատասխանողի դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում հիշյալ դրույթի սահմանադրականությունը գնահատվում է բացառապես այն մասով, որ վիճարկվող դրույթը չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և երկշաբաթյա ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակար-

զավորման համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները, սակայն վերջիններիս շարքում ներառված չէ բողոք ներկայացնելու ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության բացակայության դեպքը: Այսինքն՝ օրենսգրքի 213-րդ հոդվածի վիճարկվող դրույթը չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորություն:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձվում է առանց թույլ տրված խախտումը վերացնելու համար ժամկետ տրամադրելու, ինչն ինքնաբերաբար հանգեցնում է բողոքի ընդունման փաստացի մերժման:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-864 և ՄԴՈ-914 որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ, համաձայն որոնց՝ օրենսդրական բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, երբ կոնկրետ գործով միաժամանակ առկա են սահմանադրական դատարանի սահմանած չափանիշները՝ կոնկրետ սահմանադրական իրավունքի խախտում կամ այդ խախտման պոտենցիալ հնարավորություն և օրենսդրության մեջ այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքների բացակայություն, կամ էլ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված հակասական իրավակիրառական պրակտիկա:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով (2015թ. խմբագրությամբ) նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, ի թիվս այլնի, կարող է ապահովվել այն դեպքում, երբ առկա են բաց թողնված ժամկետի վերականգնման մասին միջնորդությունը վերադաս դատարանի կողմից պարտադիր քննության առարկա դարձնելու օրենսդրական երաշխիքներ:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածը (2015թ. խմբագրությամբ) սահմանում է. «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Սահմանադրության հիշատակված դրույթների համատեքստում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ

է հաշվի առնել բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորություն թույլ չտալու հանգամանքը:

Այդ իմաստով՝ Սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում դիմող և պատասխանող կողմերի մոտեցումն այն հարցում, որ օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված իրավակարգավորումն անձանց համար ստեղծում է դատարանի մատչելիության իրավունքի պաշտպանության խոչընդոտներ և չի հետապնդում որևէ իրավաչափ ողջամիտ նպատակ:

Նման սահմանափակման անհամաչափությունն առավել ակնհայտ է դառնում օրենսգրքի 210-րդ հոդվածով նախատեսված այլ հիմքերի հետ (օրինակ՝ բողոքաբերի կողմից պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելը, վերաքննիչ բողոքում նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումներ չներկայացնելը, բողոքաբերի պահանջը չներկայացնելը, վերաքննիչ բողոքը չստորագրելը) համադրման պարագայում, որոնց դեպքում նախատեսվում է թույլ տրված խախտումը շտկելու և վերաքննիչ բողոքը վերստին ներկայացնելու հնարավորություն:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի վերոհիշյալ անհամաչափ սահմանափակումներն օրենսդրի կողմից ամրագրվել են ոչ միայն քաղաքացիական դատավարության, այլ նաև քրեական և, մասամբ, վարչական դատավարությունների շրջանակներում, և վերաբերելի են դատական ակտերի ինչպես վերաքննության, այնպես էլ վճռաբեկության կարգով բողոքարկման ինստիտուտին:

Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանողի բացատրության շրջանակներում ներկայացված այն տեղեկատվությունը, համաձայն որի՝ «... քննարկվող իրավական խնդիրն արդեն իսկ հարթվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և քննարկման փուլում գտնվող «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որով առաջարկվում է Օրենսգիրքը շարադրել նոր խմբագրությամբ: Հիշյալ նախագիծը, նպատակ ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով հայեցակարգային լուծումներ տալ քաղաքացիադատաիրավական մի շարք ինստիտուտ-

ների, առաջարկում է նախատեսել նաև վերադարձման հիմք՝ վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, և 15-օրյա ժամկետում այդ խախտումը վերացնելու դեպքում նորից բողոքը դատարան ներկայացնելու հնարավորություն»:

Կարևորելով քաղաքացիական գործերով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը, համապատասխան օրենսդրական համալիր կանոնակարգումը, բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունների համար պատշաճ իրավակարգավորված ընթացակարգ նախատեսելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման բացով պայմանավորված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորության բացառումն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքների խախտման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասի, 140-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի մասով կարճել:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1254 և ՄԴՈ-1268 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոքներ կայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապա-

տասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61, 63 և 78-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որ չի նախատեսում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելու հիմքով՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու և օրենքով սահմանված ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա վեճի առարկա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ դիմողի նկատմամբ կայացված դատական ակտը նոր հանգամանքների ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հունիսի 2016 թվականի
ՍԴՈ-1290



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԿԻՄ ՄԻՆԱՍՅԱՆԻ, ԼՈՒՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՎԱՐՏԳԵՁ
ԳԱՄՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 182-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՐ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների ներկայացուցիչներ Տ. Եգորյանի և Գ. Պետրոսյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Կիմ Մինասյանի, Լուսինե Հարությունյանի, Վարտգեզ Գասպարիի դիմումների հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016
191

Գործի քննության առիթը Կիմ Մինասյանի՝ 2016 թվականի հունվարի 12-ին, Լուսինե Հարությունյանի՝ 2016 թվականի մարտի 2-ին և Վարտգեզ Գասպարիի՝ 2016 թվականի ապրիլի 27-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի մարտի 22-ի ՍԴԱՈ-18 և 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴԱՈ-33 աշխատակարգային որոշումներով որոշել է վերը նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց .

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Ոստիկանության գործերի զինճառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը» վերտառությամբ՝ սույն գործով վիճարկվող 182-րդ հոդվածը սահմանում է.

«Հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության գործերի զինճառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով»:

Սույն գործով վիճարկվող հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ (29.07.88թ., 02.09.93թ. ՀՕ-79, 16.12.05թ. ՀՕ-32-Ն, 21.02.07թ. ՀՕ-73-Ն, 09.02.12թ. ՀՕ-7-Ն, փոփ., լրաց. 07.02.12թ. ՀՕ-2-Ն):

Վիճարկվող հոդվածը՝ սանկցիայի մասով գործող խմբագրությամբ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում ամրագրվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի ՀՕ-73-Ն օրենքով:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ա) Կիմ Մինասյանի դիմումի մասով.

դիմելով դատարան՝ ՀՀ ոստիկանությունը պահանջել է Կիմ Մինասյանին ենթարկել վարչական պատասխանատվության ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար: Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ դիմողը պահանջել է ՀՀ ոստիկանության գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ: ՀՀ վարչական դատարանի 22.07.2014թ. վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ վճռի դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.02.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի 22.07.2014թ. վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 01.07.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում,

բ) Լուսինե Հարությունյանի դիմումի մասով.

դիմելով դատարան՝ ՀՀ ոստիկանությունը պահանջել է Լուսինե Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար: ՀՀ վարչական դատարանի 21.07.2014թ. որոշմամբ հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.04.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի 21.07.2014թ. որոշումը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 06.08.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում,

գ) Վարդգեզ Գասպարիի դիմումի մասով.

դիմելով դատարան՝ ՀՀ ոստիկանությունը պահանջել է Վարդգեզ Գասպարիին ենթարկել վարչական պատասխանատվության ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար: ՀՀ վարչական դատարանի 14.11.2014թ. որոշմամբ հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 30.06.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի 14.11.2014թ. որոշումը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ դիմողի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 07.10.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

3. Դիմողները գտնում են, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը (սանկցիա նախատեսող դրույթի մասով) հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին, 3-րդ, 28-րդ, 29-րդ, 60-րդ (1-4-րդ մասեր), 71-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողները, վերլուծելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթը, նշում են, որ սահմանված տուգանքը հնարավորություն չի ընձեռում իրավակիրառողին դուրս գալ նախատեսված սանկցիայի շրջանակներից կամ դրա շրջանակներում կիրառել այլընտրանքային պատասխանատվության միջոց՝ դրանով իսկ ապահովելով պատասխանատվության անհատականացումը և համաչափության սկզբունքի կիրառումը:

Դիմողներն արձանագրում են, որ անկախ նրանից, թե ինչ բովանդակության օրինական պահանջ է ներկայացվել քաղաքացուն ոստիկանության գորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի կողմից, ինչպես նաև անկախ պահանջը չկատարած քաղաքացու անձից, նրա մեղքի աստիճանից, գույքային դրությունից, մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների առկայությունից՝ բոլոր զանցառուները, ըստ վիճարկվող դրույթի, պետք է ենթարկվեն միևնույն վարչական տույժի: Դիմողներն արձանագրում են նաև, որ վիճարկվող դրույթը համապատասխան իրավախախտման դեպքում չի սահմանում ոչ այլընտրանքային պատասխանատվության միջոց կիրառելու հնարավորություն և ոչ էլ տուգանքի նվազագույն և առավելագույն սահմաններ:

Ըստ դիմող կողմերի՝ համաչափության և հավասարության սկզբունքների խախտումն առավել ակներև է դառնում վիճարկվող դրույթով «օրինական պահանջի» հստակեցված չլինելու պայմաններում: Յուրաքանչյուր դեպքում ներկայացված օրինական պահանջը կարող է էապես տարբերվող բնույթի լինել, էականորեն տարբեր կարող են լինել այդ պահանջի կատարման հանրային նշանակությունը, պահանջի չկատարման զանցանքի հանրային վտանգավորության աստիճանը և հետևանքները: Հետևաբար, վիճարկվող դրույթով նախատեսված զանցանքի համար պատասխանատվությունն անհատականացնելու և պատժաչափի տարբերակման անհրաժեշտությունն էապես պայմանավորված է հատկապես կոնկրետ զանցանքի բնույթով, որը միանշանակ չէ և պայմանա-

վորված չէ կոնկրետ փաստով:

Վկայակոչելով համաչափության սկզբունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դիմողները եզրահանգում են, որ վիճարկվող դրույթով սահմանված զանցանքի առանձնահատկություններից ելնելով՝ դրա համար նախատեսված պատասխանատվությունը պետք է ընձեռի պատժաչափի տարբերակված կիրառման հնարավորություն:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողների փաստարկներին՝ գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ պետությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով խնդրո առարկա արարքի համար օրենքով սահմանել է համաչափ պատասխանատվություն: Միաժամանակ, պետությունն ինքն է որոշում իրավակիրառողին տալ իրավաբանական պատասխանատվության համաչափության գնահատման հայեցողություն, թե՛ ոչ՝ կախված կոնկրետ զանցակազմի բնույթից և դրսևորման բազմազանությունից:

Պատասխանող կողմն արձանագրում է, որ մի շարք դեպքերում, երբ նորմի դիսպոզիցիայում նկարագրվող արարքները կարող են լինել բազմասեռ, հանրային վտանգավորության աստիճանով միմյանցից տարբերվող կամ կատարվեն մեղքի տարբեր ձևերով կամ այնպիսի տարբեր կարգավիճակ ունեցող անձանց կողմից, որոնց պատասխանատվության հարցում կոնկրետ արարքի դեպքում անձանց կարգավիճակով պայմանավորված տարբերակված պատասխանատվության անհրաժեշտություն է առկա, օրենսդիրը սահմանել է ոչ միայն պատասխանատվության միջոցի նվազագույն և առավելագույն չափեր, այլև շատ դեպքերում՝ պատասխանատվության այլընտրանքային միջոցներ: Իսկ երբ այդ անհրաժեշտությունն առկա չէ, օրենսդիրը սահմանել է համաչափ կոնկրետ պատասխանատվություն, ինչպես խնդրո առարկա դեպքն է: Խնդրո առարկա սանկցիայով պետությունն արդեն իսկ սահմանել է անձի իրավունքի համաչափ սահմանափակում՝ չթողնելով այն իրավակիրառի հայեցողությանը: Ըստ պատասխանողի՝ նման կարգավորումը պայմանավորված է «նշված զանցակազմի առանձնահատկություններով՝ նկատի ունենալով, որ զանցակազմը նյութական չէ, այն է՝ զանցանքի առկայությունը չի կապվում արարքի հետևանքով առաջացող որևէ վնասի կամ նրա չափի հետ, ինչպես նաև արարքը կատարման մեղքի ձևի առանձնահատկությունները կամ աստիճանը, կամ այն կատարած անձը էական չեն քննարկվող զանցակազմի դեպքում՝ ելնելով օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքից, օրենքների

կարգադրագրերին հետևելու և ոստիկանության ծառայողի օրինական պահանջը կատարելու համընդհանուր պահանջից»։ Բացի դրանից, քննարկվող սանկցիան տուգանքի նվազագույն և առավելագույն չափ չի սահմանում նաև այն պատճառով, որ ոչ թե ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի ցանկացած օրինական պահանջ չկատարելն է առաջացնում հողվածով սահմանված պատասխանատվություն, այլ միայն նրանք, որոնք արվել են բացառապես հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման և օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում, ինչը նշանակում է, որ նորմի գործողության շրջանակը օրենսդրի կողմից սահմանափակված է, որի դեպքում արդարացված է կոնկրետ տուգանքի չափ սահմանելը։

Պատասխանող կողմը նաև փաստում է, որ, մինչև 2007 թվականի փետրվարի 21-ն ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-73-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, խնդրո առարկա հողվածի սանկցիան ունեցել է հետևյալ տեսքը՝ «առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով»՝ նախատեսելով տուգանքի նվազագույն և առավելագույն չափեր։ Հետագայում օրենսդիրը փոխել է քննարկվող սանկցիան նկատի ունենալով վարչական իրավախախտումների համար տուգանքների սահմանման և փոփոխման ընդհանուր կանոնները արարքի լրջությունը, հաճախականությունը, այն հանգամանքները, որոնցում դրսևորվում է արարքը։

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմողները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի սահմանադրականության հարցը բարձրացնում են միայն վերջինիս կառուցվածքային տարր հանդիսացող սանկցիայի մասով։

Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները և ելնելով սույն գործով դիմողների փաստարկներից և եզրահանգումներից, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող հողվածի սանկցիայի մասով իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատել

ա) վիճարկվող հողվածի դիսպոզիցիայում ամրագրված «օրինական պահանջ» եզրույթի և ոստիկանության զորքերի զինծառայողի, ոստիկանության ծառայողի հասարակական կարգի պահպանության, հասարա-

կական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության լիազորությունները սահմանող օրենսդրական ակտերի համադրված վերլուծության համատեքստում,

բ) համաչափության սկզբունքի և դրա բաղադրատարր հանդիսացող պատժաչափի տարբերակման սկզբունքի ապահովման տեսանկյունից հաշվի առնելով նաև այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արարքի հանրային վտանգավորության գնահատման իր իրավասության շրջանակներում օրենսդիրը հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության զորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը որակել է որպես վարչական իրավախախտում՝ այն ամրագրելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի «Կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ» վերտառությամբ 14-րդ գլխում:

Պետախիշխանական լիազորություններով օժտված յուրաքանչյուր մարմին, յուրաքանչյուր պաշտոնատար անձ պետք է գործի ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում: Հիշյալ սուբյեկտների հանրային-իրավական վարքագծի իրավական հիմք հանդես են գալիս ՀՀ Սահմանադրությունը, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացված միազգային պայմանագրերը, ՀՀ օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով)՝ «Օրինականության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Սահմանադրական հիշյալ իրավակարգավորման համատեքստում անդրադառնալով վիճարկվող հոդվածում ամրագրված «օրինական պահանջ» եզրույթի բովանդակային ծավալին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն, մասնավորապես, ընդգրկում է փոխկապակցված հետևյալ բաղադրատարրերը.

ա) պահանջը պետք է ներկայացվի իրավասու սուբյեկտի, կոնկրետ դեպքում՝ ոստիկանության զորքերի զինձառայողի, ոստիկանության ծառայողի կողմից,

բ) իրավասու սուբյեկտի կողմից ներկայացվող պահանջը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, այսինքն՝ իրավասու սուբ-

յեկտի հանրային-իրավական վարքագիծը պետք է բխի իր լիազորություններից, կոնկրետ դեպքում՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության ոստիկանության գործերի զինծառայողի, ոստիկանության ծառայողի լիազորություններից:

Քննության առարկա գործի շրջանակներում ոստիկանության գործերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի պահանջի օրինականությունն ապահովող իրավական գործիքակազմը բազմաբնույթ է: Որպես ոստիկանության գործերի զինծառայողի և ոստիկանության ծառայողի գործունեության իրավական հիմք են հանդիսանում, մասնավորապես, ՀՀ Սահմանադրությունը, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը, «Ոստիկանության գործերի մասին» ՀՀ օրենքը, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության խնդիրներից բխող և ոստիկանության գործունեությունը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերը: Հետևաբար, ոստիկանության գործերի զինծառայողի և ոստիկանության ծառայողի պահանջի օրինականությունը գնահատման ենթակա է հանրային իրավահարաբերություններում վերջիններիս մասնակցությունը և լիազորությունները սահմանող իրավադրույթների և փաստացի դրսևորված վարքագծի իրավահամեմատության հիման վրա, ինչը կարող է բացահայտվել կոնկրետ դատաքննության շրջանակներում՝ գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում:

7. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վարչական պատասխանատվության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում, մասնավորապես ամրագրելով, որ արարքի ֆինանսական պատասխանատվությունն այնպիսի զսպող միջոցի կիրառմամբ, ինչպիսին տուգանքն է, պետության հայեցողության տիրույթում է (Վալիկո ՄՊԸ-ն ընդդեմ Իտալիայի (Valico S.r.l. v. Italy) 2006թ. մարտի 21-ի որոշում):

ՀՀ սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ օրենսդրի իրավասության շրջանակներում է, մասնավորապես, որոշել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության դրույթների բովանդակությունը, այն արարքների շրջանակը, որոնց կատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության, սահմանել վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների, վարչական պատասխանատվության միջոցների ու չափերի շրջանակը, միաժամանակ անհրաժեշտ է համարում նշել, որ հիշյալ հարցերում օրենսդրի հայեցողությունն ունի իր սահմանադրական շրջանակները: Նշված լիազորություններն իրացնելիս օրենսդիրը պետք է ղեկավարվի սահմանադրական սկզբունքներով: Հանրային իշխանության իրականացումը,

նախևառաջ, սահմանափակվում է իրավական պետության գաղափարից բխող՝ համաչափության ընդհանուր սկզբունքով, որը հանդիսանում է իրավական պատասխանատվության, այդ թվում՝ վարչական պատասխանատվության, հիմքում ընկած կարևորագույն սկզբունքներից մեկը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 71-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին: Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նշել է, որ. «...համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև»:

Սույն գործի շրջանակներում համաչափության սկզբունքի պահպանման կարևորությունը հատկապես ընդգծվում է այն հանգամանքի հաշվառմամբ, որ վարչական պատասխանատվության նախատեսված միջոցը ոչ թե հարաբերական-որոշակի կամ այլընտրանքային է, այլ՝ բացարձակ-որոշակի է: Այսինքն՝ օրենսդիրը սահմանել է ոչ թե տուգանքի նվազագույն և առավելագույն, այլ կոնկրետ չափ:

Վիճարկվող հոդվածի սանկցիայի մասով իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելով համաչափության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող պատժաչափի տարբերակման սկզբունքի ապահովման տեսանկյունից՝ Սահմանադրական դատարանը սույն գործով վերաբերելի է համարում և վերահաստատում է 2013 թվականի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1130 որոշմամբ արտահայտած իր այն իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց՝ «...կախված զանցանքի բնույթից և լրջությունից, այսինքն՝ զանցանքի առանձնահատկություններից՝ ոչ բոլոր դեպքերում է, որ անհրաժեշտություն է առաջանում սահմանելու տվյալ զանցանքի համար նախատեսված պատժաչափի ստորին և վերին սահմանները՝ չբացառելով նշված դեպքերում այդպիսիք սահմանելու՝ օրենսդիր մարմնի բացառիկ հայեցողական իրավասությունը: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ զանցանքի բնույթը միանշանակ է ու պայմանավորված է կոնկրետ փաստով և ոչ որևէ այլ հանգամանքներով»: Հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության զորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը փաստում է օրենքի խախտումը, որևէ հանգամանքով արդարացնելի չէ, նյութականացված չէ և դրա հետևանք հանդիսացող վնասի չափելիությամբ:

յունը բացակայում է, ինչպես նաև սուբյեկտից ակնկալվող վարքագիծը հստակ և աներկբա է՝ կատարել ոստիկանության գործերի զինծառայողի, ոստիկանության ծառայողի օրինական պահանջը: Իսկ պահանջի օրինականության առնչությամբ անհամաձայնությունը, ինչպես նշվեց, կարող է դառնալ դատաքննության առարկա:

Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի բնույթը, տվյալ իրավակարգավորմամբ հետապնդվող նպատակը և նախատեսված տուգանքի չափը, գտնում է, որ վիճարկվող նորմում սահմանված վարչական իրավախախտման հետևանք հանդիսացող իրավական պատասխանատվությունն իրավաչափ նպատակ է հետապնդում, այն է՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը, հասարակական անվտանգությունը և օբյեկտների պահպանությունը: Ինչ վերաբերում է նախատեսված սանկցիային, ապա իրավակարգավորման առանձնահատկություններից ելնելով վերջինիս ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Տվյալ իրավակարգավորմամբ օրենսդիրը գտել է, որ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության գործերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջի հանրային նշանակությունը, պահանջի չկատարման զանցանքի հանրային վտանգավորության աստիճանը և հետևանքներն այնպիսին են, որ վիճարկվող դրույթով նախատեսված զանցանքի համար պատասխանատվությունն անհատականացնելու և տուգանքի չափի տարբերակման անհրաժեշտություն առկա չէ: Տվյալ պարագայում արարքը, դրա հանրային վտանգավորության աստիճանը, զանցանքի ու պատճառած վնասի բնույթը, մեղքի աստիճանը և այլ էական հանգամանքները որևէ ձևով չեն պայմանավորվում զանցանք կատարողի սոցիալական դրությամբ կամ հանրային դիրքով, զանցանքի բնույթը միանշանակ է ու պայմանավորված է կոնկրետ փաստով և ոչ որևէ այլ հանգամանքներով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ օրենսդիրն իշխանության ներկայացուցչի օրինական պահանջը չկատարելու փաստի առնչությամբ տարբերակված մոտեցում է դրսևորել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, մասնավորապես, 180.1-րդ և 182-րդ հոդվածներում, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի իրավակարգավորումներում: Վերջինում (225-րդ, 258-րդ, 316-րդ և այլ հոդվածներ)՝ իշխանության ներկայացուցչի օրինական պահանջը չկատարելու բնույթից, հետևանքներից ու վտանգավորության աստիճանից ելնելով, այն համարում է քրեորեն պատժելի և պատասխանատվություն

անհատականացնելու ու պատժաչափի տարբերակման անհրաժեշտությունը հաշվի առնելով նախատեսում է համարժեք սանկցիաներ՝ իրավախախտման օբյեկտիվ կողմի բոլոր հստակ դրսևորումների առկայությունը նկատի ունենալով: Նման մոտեցումը միանգամայն բխում է նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 հուլիսի 2016 թվականի
ՄԴՈ-1291



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 թվականի Փետրվարի 19-ին Երեւանում ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԽԱՂԱՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Գալստյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի փետրվարի 19-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 5-6(83-84)2016

Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի հունիսի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Ջ Ե Ց .

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2016 թվականի փետրվարի 19-ին Երևանում՝ խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում կողմերի միջև համագործակցության զարգացման և ամրապնդման համար: Համագործակցության ուղղությունները նախատեսվում են քննության առարկա համաձայնագրի 3-րդ հոդվածով, իսկ ձևերը՝ 4-րդ հոդվածով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- զարգացնել և ամրապնդել խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում համագործակցությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ազգային միջուկային ծրագրերի պահանջներին և առաջնահերթություններին համապատասխան (հոդված 1),

- Համաձայնագրի իրականացման նպատակով որպես Հայաստանի Հանրապետության իրավասու մարմին նշանակել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (հոդված 5, կետ 1),

- դիվանագիտական ուղիներով անհապաղ տեղեկացնել Բելառուսի Հանրապետությանն այլ իրավասու մարմին նշանակելու կամ դրա անվանափոխման դեպքում (հոդված 5, կետ 2),

- ապահովել, որպեսզի Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացման պայմանները սահմանվեն ՀՀ լիազորված կազմակերպության և Բելառուսի Հանրապետության լիազորված կազմակերպության միջև՝ Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, երկկողմ պայմանագրերի կնքմամբ (հոդված 6, 1-ին պարբերություն, հոդված 2, 9-րդ պարբերություն),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հաստատի Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված համագործակցության ուղղությունների իրականացման համար մշակվող համատեղ ծրագրերը (նախագծերը) (հոդված 6, 3-րդ պարբերություն),

- իրականացնել փոխանցված և (կամ) համագործակցության ընթացքում ստեղծված գաղտնի տեղեկատվության պաշտպանության փոխադարձաբար ապահովումը գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության բնագավառում երկկողմ միջազգային համաձայնագրին համապատասխան (հոդված 7, կետ 1),

- հստակ սահմանել և նշել Համաձայնագրին համապատասխան փոխանցվող կամ դրա իրականացման արդյունքում ստեղծվող տեղեկատվությունն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության կողմից այն դիտարկվում է որպես այնպիսի տեղեկատվություն, որի տարածումը և (կամ) տրամադրումը սահմանափակ է (հոդված 7, կետ 2, 1-ին պարբերություն),

- որպես տեղեկատվությունն ստացող կողմ՝ ապահովել, որպեսզի այն տեղեկատվության օգտագործումը, որի տարածումը և (կամ) տրամադրումը սահմանափակ է, և դրա պաշտպանությունն իրականացվեն Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով Համաձայնագրի պահանջները, չհրապարակվի կամ չփոխանցվի երրորդ կողմի՝ առանց Բելառուսի Հանրապետության գրավոր թույլտվության (հոդված 7, կետ 2, 2-րդ պարբերություն),

- Համաձայնագրի շրջանակներում աջակցել Բելառուսի Հանրապետությանն աստուային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համատեղ կամ ազգային ծրագրերի իրականացման համար նյութերի, տեխնոլոգիաների, սարքավորումների և ծառայությունների փոխանցման հարցում, և նշված փոխանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 8),

- Համաձայնագրի շրջանակներում միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանումն իրականացնել 1968թ. հուլիսի 1-ի՝ «Միջուկային զենքի չտարածման մասին» պայմանագրից բխող ՀՀ պարտավորություններին, ինչպես նաև արտահանման վերահսկման բազմակողմ մեխանիզմների շրջանակներում այլ միջազգային պայմանագրերին և պայմանավորվածություններին համապատասխան, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը (հոդված 9, կետ 1),

- Համաձայնագրին համապատասխան ստացված միջուկային նյութերը, սարքավորումները, հատուկ ոչ միջուկային նյութերը և համապա-

տասխան տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերը, սարքավորումները և համապատասխան տեխնոլոգիաները չօգտագործել միջուկային զենքի և այլ միջուկային պայթյունիկ սարքերի արտադրության նպատակով կամ որևէ այլ ռազմական նպատակի հասնելու համար (հոդված 9, կետ 2, 1-ին պարբերություն),

- Համաձայնագրին համապատասխան ստացված միջուկային նյութերը, սարքավորումները, հատուկ ոչ միջուկային նյութերը և համապատասխան տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերը, սարքավորումները և համապատասխան տեխնոլոգիաներն ապահովել ֆիզիկական պաշտպանության միջոցներով, որոնց մակարդակը ցածր չի լինի ԱԷՄԳ-ի՝ «Միջուկային նյութերի և միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանությունը վերաբերող՝ ֆիզիկական միջուկային անվտանգության գծով առաջարկություններ» փաստաթղթում (INFCIRC/225/Rev.5) և դրա հետագա փոփոխություններում առաջարկված մակարդակից (հոդված 9, կետ 2),

- Համաձայնագրին համապատասխան ստացված միջուկային նյութերը, սարքավորումները, հատուկ ոչ միջուկային նյութերը և համապատասխան տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերը, սարքավորումները և համապատասխան տեխնոլոգիաները վերաարտահանել կամ Հայաստանի Հանրապետության իրավագործությունից փոխանցել ցանկացած երրորդ պետություն միայն Բելառուսի Հանրապետության նախնական գրավոր թույլտվության դեպքում (հոդված 9, կետ 2),

- Համաձայնագրի շրջանակներում փոխանցվող միջուկային նյութերը, ինչպես նաև Համաձայնագրի շրջանակներում փոխանցված միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի օգտագործման արդյունքում արտադրված միջուկային նյութերը չհարստացնել ուրան-235 իզոտոպով մինչև 20 և ավելի տոկոս ցուցանիշը, ինչպես նաև չհարստացնել և չվերամշակել՝ առանց Բելառուսի Հանրապետության նախնական գրավոր համաձայնության (հոդված 9, կետ 3),

- միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանման վերահսկման հարցերով համագործակցել Բելառուսի Հանրապետության հետ, ինչպես նաև փոխանցված միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերի, տեղա-

կայանքների և սարքավորումների օգտագործման վերահսկողությունն իրականացնել Բելառուսի Հանրապետության հետ խորհրդատվությունների միջոցով համաձայնեցված ձևով (հոդված 9, կետ 4),

- Համաձայնագրի շրջանակներում չիրականացնել ճառագայթված միջուկային վառելիքի քիմիական վերամշակման, ուրանի իզոտոպային հարստացման և ծանր ջրի արտադրության տեխնոլոգիաների և տեղակայանքների, դրանց հիմնական բաղադրիչների կամ դրանց հիման վրա արտադրված ցանկացած այլ առարկայի, ինչպես նաև, ըստ ուրան-235 իզոտոպի, 20 և ավելի տոկոսով հարստացված ուրանի, պլուտոնիումի և ծանր ջրի փոխանցում (հոդված 10),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը, ապահովել Համաձայնագրին համապատասխան փոխանցվող կամ ստեղծվող մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանություն (հոդված 11, 1-ին պարբերություն),

- Բելառուսի Հանրապետության խնդրանքով անցկացնել խորհրդատվություններ՝ Համաձայնագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով (հոդված 14, 1-ին պարբերություն):

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի 16-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով՝ Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Համաձայնագրի 7-րդ և 9-րդ հոդվածներով կողմերի ստանձնած պարտավորությունները մնում են ուժի մեջ:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2016 թվականի փետրվարի 19-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապե-

տության կառավարության միջև ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 հուլիսի 2016 թվականի
ՍԴՈ-1292



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԵՐՖՐԵԶ» ԲԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ
ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հունիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ Խ. Օհանյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երֆրեզ» ԲԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը «Երֆրեզ» ԲԲԸ-ի 2016թ. փետրվարի 16-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Ձ Ե Ց .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» վերտառությամբ 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է.

«2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝

...

3) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հակասության վերաբերյալ.»:

ՀՀ Ազգային ժողովի կողմից վերոնշյալ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, իսկ վիճարկվող դրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.06.14 ՇՕ-49-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել թիվ ԵԱՔԴ/1104/02/11 գործն ըստ հայցի «Երֆրեզ» ԲԲԸ-ի՝ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի՝ 01.06.2005 թվականին կնքված պայմանագիրը վաղաժամկետ՝ 01.07.2010 թվականից լուծելու և որպես հետևանք՝ պատասխանողին փոխառությամբ տրամադրված սարքավորումները ետ վերցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին և ըստ հակընդդեմ հայցի ՀՀ ֆինանսների նախարարության, երրորդ անձ՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի՝ ընդդեմ «Երֆրեզ» ԲԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի վերաբեր-

յալ: Դատարանը 20.05.2013թ. վճռով «Երֆրեզ» ԲԲԸ-ի հայցը բավարարել է, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության հակընդդեմ հայցը՝ մերժել:

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 20.05.2013թ. վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 25.12.2013թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.05.2013թ. վճիռը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հակընդդեմ հայցը մերժելու մասով մասնակի բեկանվել է, և բեկանված մասով գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Մնացած մասով վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 25.12.2013թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 05.03.2014թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.12.2014թ. վճռով հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2015թ. որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 05.12.2014թ. վճիռը մասնակիորեն՝ ՀՀ ֆինանսների նախարարության հակընդդեմ հայցը մերժելու մասով բեկանվել և փոփոխվել է՝ հակընդդեմ հայցը բավարարվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 03.06.2015թ. որոշմամբ «Երֆրեզ» ԲԲԸ-ի անունից բերված վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ որոշումն ստանալու պահից որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար սահմանելով տասնհինգօրյա ժամկետ: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը 22.07.2015թ. ընդունել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ. «... Ընկերության անունից նախկինում բերված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.06.2015 թվականի որոշմամբ վերադարձվել է նաև այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում վկայակոչել է Էյրին ընդդեմ Իռլանդիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը (գանգատ թիվ 6289/73), Բրումարեսկուն ընդդեմ Ռուսիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը (գանգատ թիվ 28342/95) և Բեյանն

ընդդեմ Ռուսիայի (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.12.2007 թվականի վճիռը (գանգատ թիվ 30658/05) ու ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/2534/02/08 քաղաքացիական և 04.07.2013 թվականի թիվ ՎԴ3/0011/05/10 վարչական գործերով որոշումները, սակայն բողոքին կից չի ներկայացրել այդ դատական ակտերը: Միաժամանակ սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի նաև այդ ձևական սխալը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Այժմ, Ընկերության ներկայացուցիչը, չշտկելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.06.2015 թվականի որոշմամբ արձանագրված վերը նշված սխալը, կրկին նույն հիմքերով ներկայացրել է վճռաբեկ բողոք: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության»:

3. Դիմողը նշում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները հանդիսանում են իրավական պետության իրավական համակարգի բաղկացուցիչ տարրեր: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 03.06.2015թ. ընդունված որոշման և 22.07.2015թ. ընդունված՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշման տրամաբանությամբ՝ վճռաբեկ բողոք ներկայացնելիս պետք է կցել նաև ՀՀ քաղաքացիական, վարչական, քրեական դատավարության օրենսգրքերի և այլ իրավական ակտերի համապատասխան նորմերի պատճենները, որոնց հղում է կատարվում բողոքում: Դատարանի կողմից արդարադատության իրականացումը, արդար դատաքննության իրականացման սահմանադրական երաշխիքը պետք է անխափան գործեն: Այս արժեքները չեն կարող նսեմացվել տեխնիկական պատճառներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները վճռաբեկ բողոքին չկցելու պատճառաբանությամբ: Ավելին, սահմանադրական դատարան դիմելիս սահմանված չէ համանման նորմ, ըստ որի՝ դիմողը, եթե վկայակոչում է սահմանադրական դատարանի որևէ դիրքորոշում՝ նշելով որոշման համարը, պետք է կցի նաև այդ որոշումը:

Դիմողը փաստում է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և հատկապես բողոքի ընդունելիության պայմանների կապակցությամբ կարող է ենթարկվել սահմանափակումների: Բոլոր դեպքերում, պետություններն այս կապակցությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Ասվածի հետ մեկտեղ, այնուհանդերձ, կիրառ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 5-6(83-84)2016

ված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճան սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը և նսեմացնի արդարադատությունը: Ուստի, դիմողը կարծում է, որ վիճարկվող իրավակարգավորումը հակասում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առանձին հանձնարարականներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին և չի բխում միջազգային իրավական մոտեցումներից, միտված է բացառելու արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը:

Վիճարկվող դրույթի առնչությամբ դիմողի փաստարկները հանգում են նրան, որ խախտվել են դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները, քանի որ օրենսդրորեն սահմանված իրավանորմը թույլ չի տալիս վերականգնել խախտված իրավունքները, անհամաչափ պարտավորություն է դնում ու արգելափակում է նյութական իրավունքի իրացումը:

Համադրված կարգով վերլուծելով վիճարկվող նորմը՝ դիմողը եզրակացնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 78-րդ հոդվածին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին ու 6-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Վկայակոչելով դատարանի մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Միակրկական ընդդեմ Լեհաստանի գործով 2007թ. մարտի 22-ի վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները, արձանագրելով, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ իրավունք չէ և ենթակա է իրավաչափ սահմանափակումների, պատասխանողը գտնում է, որ դատարանի մատչելիության իրավունքի սկզբունքի խախտում կարող է առկա լինել, երբ նշված իրավունքը սահմանափակվի այնչափ, որ սահմանափակվի անձի կողմից դատարանի իրավական պաշտպանությունից գործնականում օգտվելու իրավունքը: Մինչդեռ, ըստ պատասխանողի, գործող իրավակարգավորումների դեպքում անձը գործնական հնարավորություն ունի օգտվելու դատական պաշտպանության իրավունքից, քանզի Եվրոպական դատարանի որոշումները հրապարակային են և հասանելի յուրաքանչյուրին: Իսկ անգամ բողոքին առաջին անգամ Եվրոպական դատարանի համապատասխան

ակտերը չկցելն անձին չի զրկում դատական պաշտպանության հնարավորությունից, քանի որ դատարանի կողմից ժամկետ է սահմանվում խախտումը վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վկայակոչելով վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները, առանձին երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում, համանման իրավակարգավորումները, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասը, 231-րդ հոդվածի 2-րդ մասը, ընդգծելով ՀՀ վճռաբեկ դատարանի դերը ՀՀ արդարադատության համակարգում՝ պատասխանողն իրավաչափ է համարում վճռաբեկ բողոքին Եվրոպական դատարանի դատական ակտը կցելու պահանջն այն հիմքով, որ խնդրո առարկա պահանջն օրենսդրական երաշխիք է առ այն, որ անձն ամբողջությամբ ծանոթ է իր կողմից վկայակոչվող իրավական ակտերի բովանդակությանը, քանի որ անձը պարտավոր է իր կողմից վկայակոչվող իրավական ակտերի հակասությունը հիմնավորել՝ մեջբերելով դրանց հակասող մասերը:

Անդրադառնալով վիճարկվող դրույթի՝ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ դիմողի փաստարկներին, պատասխանողը, վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Միշոն ընդդեմ Ֆրանսիայի գործով 2012թ. դեկտեմբերի 6-ի վճռում արտահայտված իրավական դիրքորոշումները, նույն հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 և 2014թ. ապրիլի 2-ի ՄԴՈ-1142 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը համապատասխանում է իրավական օրենքին ներկայացվող պահանջներին:

5. Սույն գործով վիճարկվող իրավադրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատել դատական պաշտպանության, վերջինիս տարրը հանդիսացող՝ արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում, կարևորելով՝

- արդարադատության մատչելիության (դատարան դիմելու իրավունքի)՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության իրավունքի իրացման կարևոր նախապայմանի ազատ իրականացման երաշխավորումը: Գնահատել այն այդ իրավունքի իրացման ընթացակարգային գործող կանոնների և դրանց կիրառմամբ առաջացած իրավական հնարավոր հետևանքների շրջանակներում՝ հաշվի առնելով

նան այդ իրավունքի առումով Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշները,

- վեճի առարկա կանոնակարգմամբ պայմանավորված՝ իրավական սահմանափակման համադրելիությունը ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի էության հետ:

6. Անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածներով, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանո՞վ է հասանելի արդարադատությունը, որքան արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը:

Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է: Ի թիվս այլնի, այդ հանգամանքով է պայմանավորված վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը հատկապես դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում գնահատելը:

7. Իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289) Սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրականության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատավարական գործընթացներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազա-

տությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում Սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ:

Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարևորել է իրավակարգավորման մի շարք սկզբունքներ, որոնք սույն գործով վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել էլ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարանի դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման,

- ինքնին խնդրահարույց չէ վճարել բողոքի ընդունելիության այնպիսի պահանջներ սահմանելը, որոնք կարող են ավելի խիստ լինել,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմանները, այդ թվում բողոքարկման ժամկետները չպետք է գերակայեն կամ խոչընդոտեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել նաև դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները, որոնց համաձայն.

- այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով (Luordo v. Italy, 2003թ. հոկտեմբերի 17-ի վճիռ, Staroszczyk v. Poland, 2007թ. հուլիսի 9-ի վճիռ, Stanev v. Bulgaria, 2012թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016
 215

հունվարի 17-ի վճիռ և այլն),

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania (application no. 3738/02), Judgment of 18 December 2007, para. 113):

Նշված դիրքորոշումները կարևորվում են հատկապես ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ մարդու արդարադատական իրավունքների իրացման օրենսդրական երաշխիքների ապահովման համար:

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից բխում է, որ եթե բողոք բերած անձը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ապա բողոքը բերած անձը պետք է, մասնավորապես, հիմնավորի, որ.

- տարբեր գործերով ստորադաս դատարանների առնվազն երկու դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է հակասական մեկնաբանությամբ,

- բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում բացահայտված՝ տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությանը,

- բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը,

- բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշման մեջ

տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքում պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու պահանջն իրավաչափ է, քանզի այն ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են բողոքարկվող դատական ակտի՝ վկայակոչվող դատական ակտին հակասող մասերը մեջբերելը, բողոքարկվող դատական ակտի և վկայակոչվող դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծություն կատարելը:

Հիշյալ համատեքստում հիմնավորում ներկայացնելու իրավական պահանջն ինքնին չի արգելափակում անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման հնարավորությունը՝ հաշվի առնելով այն, որ նման պահանջով անձի վրա չի դրվում օբյեկտիվ իրականության մեջ առկա հնարավորությունների հաշվառմամբ անիրագործելի պարտականություն: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի հանգեցնում նաև իրավունքի էության խախտման: Ավելին, հիմնավորում ներկայացնելու պահանջներ սահմանելու նպատակը ոչ թե բողոք բերած անձին ավելորդ պարտականություններով ծանրաբեռնելն է, այլ տվյալ բողոքարկվող գործով ներկայացված հանգամանքների իրավաչափությունը փաստարկելը:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ պատշաճ իրավական հիմնավորում ներկայացնելու իրավապահանջը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների և որոշումների, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների իրացումը և նպաստել միասնական իրավակիրառ պրակտիկայի ձևավորմանը, քանզի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հանդիսանում են իրավակիրառ պրակտիկայի և, ընդհանրապես, իրավական համակարգի կայուն դինամիկ զարգացման առանցքային ուղենիշներ:

Այդպիսով, վճռաբեկ բողոք բերողի կողմից վկայակոչվող իրավական դիրքորոշումների և համապատասխան դատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների համեմատական վերլուծության պահանջն իրավաչափ է: Ընդ որում, վերջինս կարող է ապահովվել միայն այն պարագայում, երբ վկայակոչվում է ոչ միայն համապատասխան իրավական դիրքորոշումը, այլև մատնանշվում են այն դատական ակտի նույնականացման, բնութագրական, բնորոշիչ տվյալները, որտեղ տեղ են գտել վկայակոչվող իրավական դիրքորոշումները (մասնավորապես, վկայակոչվող դատական ակտն ընդունած մարմնի անվանումը, դատական ակտի անվանումը, ընդունման ամսաթիվը, գործի համարը):

9. Ակնհայտ է, որ իրավունքի ցանկացած սահմանափակում՝ որպես ժողովրդավարական ինստիտուտների և կոնկրետ անձի շահերի միջև հավասարակշռության ապահովման միջոց, պետք է կիրառվի խիստ բացառիկ դեպքերում: Որպեսզի «բացառիկ դեպքեր» հասկացությունը չմեկնաբանվի շատ լայն կամ կամայականորեն, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան սահմանում է, որ անձի իրավունքները կարող են սահմանափակվել միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, և բխում է պետական անվտանգության, հասարակական կարգի, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ ուրիշ այնպիսի շահերից, որոնք ավելի մեծ հանրային կարևորություն ունեն, քան անձի համար նշված իրավունքների ապահովումն է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա իրավանորմի շրջանակներում վկայակոչվող դատական ակտերը բողոքին կցելու պահանջը ոչ իրավաչափ կերպով ծանրաբեռնում է բողոքաբերին: Ավելին, նման պահանջը ոչ միայն ոչ համարժեք սահմանափակում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացումը, այլև Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրաիրավական գործառույթի արդյունավետ և ամբողջական իրացման առումով խոչընդոտ է հանդիսանում՝ հնարավորություն չտալով Վճռաբեկ դատարանին օրենքով սահմանված այլ հիմքերի բավարարման պարագայում վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և իրականացնել արդարադատություն:

Վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջ նախատեսելն այն պարագայում, երբ դրանք հասանելի են դատավարության կողմերին և ՀՀ վճռաբեկ դատարանին (այդ թվում՝ համացանցի համապատասխան պաշտոնական կայքէջերից օգտվելու միջոցով), հիմնավոր չէ: Պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների, Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների, ինչպես նաև ստորադաս դատարանի դատական ակտերի հասանելիությունը: Ընդ որում, դա պետք է ապահովվի հավաստի և իրավաբանական առումով համարժեք թարգմանված և կոնկրետ պետական մարմնի կողմից հաստատված տեքստերի միջոցով: Օրենքի պահանջը՝ մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը վկայակոչող բոլոր ակտերը բողոքին կցելու վերաբերյալ, երբ, մի կողմից՝ դրանք մի քանի տասնյակ էջեր են կազմում ու համաձայն իրավակիրատ պրակտիկայի՝ պետք է թարգմանաբար ներկայացվեն (նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերենով), մյուս կողմից՝ սահմանափակ է բողոք ներկայացնելու ժամկետը կամ դրա

ձգձգումը կարող է դիմողի համար ունենալ անշրջելի բացասական հետևանքներ, իրական վտանգ է ստեղծում արգելափակելու անձի արդար դատաքննության իրավունքի իրացումը (մասնավորապես, տե ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016թ. ապրիլի 27-ի քաղաքացիական գործով թիվ ԵԱՔԴ/0229/02/16 որոշումը):

Ասվածի համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ, ի տարբերություն վիճարկվող իրավադրույթի, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը բողոք բերած անձի համար համապատասխան դատական ակտերը կցելու առումով որևէ պարտականություն չեն նախատեսում: Դրանցում սահմանվում են՝

- յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ, որպես իրավական փաստարկ, իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները),

- որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ:

Ընթացակարգային, ձևական պահանջներն արդարադատության արդյունավետ իրականացման համար, որպես կանոն, անհրաժեշտություն են: Սակայն Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը՝ տվյալ դեպքում վեճի առարկա պահանջը չպահպանելու հիմնավորմամբ, դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է հանդիսանում: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, պետք է այնպիսի համամասնությամբ դա կատարի, որ ընտրված սահմանափակումը համահունչ լինի ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Ուստի Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավաչափ նպատակին հնարավոր է հասնել նաև առանց վճռաբեկ բողոքին վեճի առարկա դրությամբ վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջի նախատեսման՝ չխաթարելով ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով վեճի առարկա իրավադրույթին համանման իրավակարգավորումներ են առկա նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 2.2-րդ մասի 3-րդ կետում: Դրանց նույնպես ՀՀ Ազգային ժողովն անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնի՝ սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով:

Սահմանադրական դատարանը նաև ՀՀ Ազգային ժողովի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ քննության առարկա և հիշյալ իրավական ակտերում առկա է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «վճիռ» և «որոշում» հասկացությունների ոչ համարժեք կիրառում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝ վճարեկ բողոքին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վկայակոչվող դատական ակտերը կցելու պահանջի մասով, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի, 78-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12 հուլիսի 2016 թվականի
ՄԴՈ-1293



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՄԱՐԵՏԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 249-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Մարետա Առաքելյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դոմբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարետա Առաքելյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Մարետա Առաքելյանի՝ 29.02.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016
221

պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՊԱՐԶԵՑ.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը» վերստառությամբ 249-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝

2) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

2. Գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավատուն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար:

Բռնագանձման ծանուցումը պարտապանին պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար:

Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել: Գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով»:

Օրենսգրքի վիճարկվող 249-րդ հոդվածը գործող խմբագրությամբ ամրագրվել է 04.10.2005 թվականի ՀՕ-188-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողի ամուսնու՝ Գեղամ Առաքելյանի և «Յունիբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ բանկ) միջև 20.07.2007 թվականին կնքված թիվ 068-23 վարկային պայմանագրի համաձայն՝ բանկը բնակելի տուն ձեռք բերելու նպատակով նրան տրամադրել է 36.000.000 ՀՀ դրամ գումար վարկ՝ տարեկան 15 տոկոս տոկոսադրույքով՝ մինչև 20.07.2019 թվականը մարելու պայմանով: Բանկի օգտին գրավադրվել է ձեռք բերվող՝ Երևանի Դավթաշեն 3-րդ թաղամասի թիվ 59/1 հասցեի տունը և հողամասը:

12.10.2009 թվականին կնքված անշարժ գույքի հաջորդող հիփոթեքի թիվ 270-23/ԱՀ պայմանագրի համաձայն՝ բանկը Գեղամ Առաքելյանին տարեկան 24 տոկոս տոկոսադրույքով տրամադրել է 50.000 ԱՄՆ դոլար վարկ՝ մինչև 12.10.2011 թվականը մարելու պայմանով: «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտար Նունե Մարգարյանի կողմից 12.10.2009 թվականին վավերացված համաձայնության համաձայն՝ դիմողը համաձայնել է, որ Գեղամ Առաքելյանը (ամուսինը) գրավադրի իրենց ամուսնության ընթացքում ձեռք բերված՝ Երևանի Դավթաշեն 3-րդ թաղամասի թիվ 59/1 հասցեի տունը, իսկ վարկային պարտավորությունները չկատարելու դեպքում՝ համաձայնել է, որ գրավառուի պահանջները բավարարվեն գրավ դրված գույքի հաշվին՝ առանց դատարան դիմելու:

Բանկի կողմից 15.03.2011 թվականին Գեղամ Առաքելյանին ուղարկված և վերջինիս կողմից ստացված թիվ 269 բռնագանձման ծանուցման համաձայն՝ բանկը նշել է, որ Գեղամ Առաքելյանի կողմից 10-օրյա ժամկետում պարտավորությունները պատշաճ չկատարվելու դեպքում ծանուցումը հանձնելուց 2 ամիս հետո բանկն իրավունք ունի ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելու իր օգտին գրավադրված՝ Երևանի Դավթաշեն 3-րդ թաղամասի թիվ 59/1 հասցեի բնակելի տունը:

Արտադատական բռնագանձման արդյունքում՝ գրավադրված բնակելի տունը 17.10.2012 թվականի թիվ 858/ԱՀ պայմանագրի համաձայն սեփականության իրավունքով հանձնվել է բանկի վարչության նախագահի

տեղակալ Օվսաննա Առաքելյանին:

Դիմողի և նրա ամուսնու կողմից 15.05.2013 թվականին հայց է ներկայացվել Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Յունիբանկ» ՓԲԸ-ի, Օվսաննա Առաքելյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Երևանի ստորաբաժանման, երրորդ անձ՝ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի՝ սեփականության իրավունքը վերականգնելու, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի դրույթները դատարանը թիվ ԵԱԴԴ/0529/02/13 քաղաքացիական գործով 21.10.2014 թվականին կայացրել է վճիռ, որով մերժել է հայցը:

Վճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ հիմնավոր համարելով վերաքննիչ բողոքում նշված այն հանգամանքը, որ բանկի կողմից խախտվել է գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված գրավատուին ծանուցելու իմպերատիվ պահանջը, 29.01.2015 թվականին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելու և գործը նույն դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը 27.11.2015 թվականի որոշմամբ բեկանել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.01.2015 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով ընդհանուր իրավասության դատարանի 21.10.2014 թվականի վճռին:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը՝ իրավակիրառ պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության մասով, հակասում է ՀՀ Սահմանադրության 10-րդ, 60-րդ և 61-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով չի համապատասխանում սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումներին:

Համադրելով ՀՀ Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածներում ամրագրված երաշխիքները և վիճարկվող օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն» դրույթը՝ դիմողն իր վերը նշված եզրահանգումը փաստարկում է հետևյալ կերպ. «ա) ակնհայտ է, որ արտադատական կարգով գրավադրված գույքի իրացման դեպքում նախատեսված է սեփականատիրոջ կամքին հակառակ առանց դատարանի որոշման գրավառուի կողմից սեփականության բռնագանձում, որը

ենթադրում է սեփականատիրոջ կամքին հակառակ սեփականության իրավունքից զրկում, ք) ակնհայտ է, որ վիճելի իրավական նորմում բացակայում են սեփականության իրավունքից զրկման համար անհրաժեշտ օրենքով նախատեսված օբյեկտիվ հիմքերը»:

Դիմողը, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-903 որոշման մեջ ամրագրված՝ սեփականությունից զրկելու հիմնական պարտադիր պայմանները, գտնում է, որ սեփականության իրավունքից զրկումը պետք է իրականացվի դատարանի միջոցով, անհատույց կերպով որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Մինչդեռ անձի սեփականության նկատմամբ գրավառու բանկի հավակնությունը ներկայումս ձևավորված դատաիրավակիրառ պրակտիկայում լուծվում է գրավառու բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող բռնագանձման գործընթացի համար՝ տեքստում, նրանց հայեցողությամբ և հանգեցնում է սեփականությունից զրկելու կամայականությունների և ապօրինությունների:

Իր դատական պաշտպանության իրավունքի ենթադրյալ խախտումը հիմնավորելու համար դիմողը, արձանագրելով, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածի հիման վրա բանկն արտադատական կարգով բռնագանձել է իր գույքը, իրեն չի ծանուցել գրավի առարկայի բռնագանձման մասին, չի ուղարկել բռնագանձման ծանուցագրեր, գտնում է, որ դրա արդյունքում ինքը, որպես տան համասեփականատեր, զրկվել է գույքի բռնագանձման օրինականությունը վիճարկելու հնարավորությունից, հետևաբար՝ սեփականության իրավունքի դատական պաշտպանության իրավունքից: Բացի դրանից, ըստ դիմողի՝ վիճարկվող նորմում բավարար հստակությամբ չի բացահայտվում գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման կամավոր և հարկադիր հիմքերի համադրման մեխանիզմները: Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմի առաջին մասում նախատեսված սեփականության արտադատական իրացումը հանդիսանում է սեփականությունից զրկում սեփականատիրոջ կամքին հակառակ, իսկ երկրորդ մասը նախատեսում է սեփականատիրոջ գույքը պարտքի դիմաց հանձնելու մասին համաձայնության առկայության պարտադիր պայման և սահմանում, որ գույքի արտադատական բռնագանձումը չի կարող իրականացվել, եթե բացակայում է սեփականությունը հանձնելու մասին սեփականատիրոջ կամքով գրավատուի հետ կնքված գրավոր համաձայնությունը: Ըստ դիմողի՝ նման պայմանագիրը՝ տունը պարտքի դիմաց բանկին հանձնելու մասին, պետք է կազմվեր գրավոր ձևով և վավերացվեր նոտարական կարգով: Դիմողը, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2013/02/12 և ԵԱԴԴ/0529/02/13 քաղաքացիական գործերով կայացրած որոշումները, գտնում է, որ Վճռաբեկ դատարանը դատական պրակտիկայում վիճարկվող նորմին տված իր

տարբեր, իրարամերժ և հակասական մեկնաբանություններով սահմանափակել է իր դատական պաշտպանության և սեփականության իրավունքները, հանգեցրել իր իրավունքների և օրինական շահերի ոտնահարման:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը: Անդրադառնալով դիմողի կողմից վկայակոչված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրությանը՝ պատասխանողը նշում է, որ արձանագրության 1-ին հոդվածը չի վերաբերում մասնավոր անձանց միջև գուտ պայմանագրային բնույթ ունեցող հարաբերություններին:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է սեփականությունից զրկելուն, ինչը ենթադրում է անձի կամքին հակառակ սեփականության իրավունքի փոխանցում, մինչդեռ քննարկվող հոդվածի շրջանակներում անձը սեփականությունը կորցնում է գրավի առարկայի նկատմամբ նախապես տրված կամահայտնության պայմաններում: Պատասխանողն արձանագրում է, որ գրավի առարկան արտադատական կարգով իրացնելու դեպքում անհրաժեշտ է, որ անձն իր համաձայնությունը հայտնի կա մ անմիջականորեն գրավի պայմանագրով, կա մ գրավի պայմանագրից առանձին՝ գրավոր համաձայնությամբ: Նման իրավակարգավորմամբ օրենսդիրն անձի կամքի հստակ արտահայտման երաշխիք է սահմանել. կամքի արտահայտումը պետք է իրականացվի բացառապես գրավոր, այն է՝ օբյեկտիվ նյութական կրիչի վրա: Հետևաբար, ըստ պատասխանողի, անձը նախապես համաձայնում է իր պարտավորությունները պատշաճ չկատարելու դեպքում հնարավոր իրավական հետևանքներին, և այս մասով վերջիններս կանխատեսելի են անձի համար: Նշված տրամաբանությունը հատուկ է քաղաքացիաիրավական հարաբերություններում պարտավորությունների էությանը:

Պատասխանողի կարծիքով՝ դիմողն անհիմն է վկայակոչում վիճարկվող դրույթի՝ անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին հնարավոր հակասությունը, քանզի օրենսգրքի 249-րդ հոդվածը գրավատուին իրավունք է վերապահում դատական կարգով վիճարկելու նույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել

գրավի առարկայի բռնագանձման ընթացքը:

Ըստ պատասխանողի՝ դիմողը սույն սահմանադրական վեճի շրջանակներում ակնհայտորեն վիճարկում է խնդրո առարկա դրույթների իր նկատմամբ կիրառման իրավաչափությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված հակասական ակտերին գնահատական տալուն, ապա, ըստ պատասխանողի, ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությանը չի վերաբերում դատական ակտերի իրավաչափության քննությունն ու դրանց իրավական գնահատական տալը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողը վիճարկում է նորմի կիրառման իրավաչափությունը, պատասխանողը միջնորդում է գործի վարույթը կարճել:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը սահմանադրական կոնկրետ վերահսկողության շրջանակներում մատնանշում է երկու խնդիր, այն է՝

1. իր որպես գրավի առարկայի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունք ունեցող անձի սեփականության իրավունքը խախտելը,

2. դատական պաշտպանության իրավունքը չապահովելը՝ գրավ դրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու ընթացքում:

Ուստի սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հիմնախնդիրներին՝

1) արդյո՞ք գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու կարգը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, համահունչ է ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող սեփականության իրավունքի բովանդակությանը,

2) արդյո՞ք օրենսգրքի 249-րդ հոդվածի իրավակարգավորումները չեն սահմանափակում ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ դատարանի մատչելիության իրավունքն այնքանով, երբ անձը կարող է գրկվել դատական պաշտպանության իրավունքից:

6. Համադրելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված դրույթների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ

«սեփականությունից զրկում» ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությանը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.07.2010թ. ՄԴՈ-903 որոշմամբ վերահաստատել է սեփականությունից զրկելու հետևյալ հիմնական տարրերը, այն է՝

«- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին և համաձայնությանը հակառակ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի անհատույց դադարեցում:

- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց:

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունների միաժամանակյա դադարեցում՝ առանց շարունակության երաշխավորման»:

Գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու իրավահարաբերություններում գույքի սեփականատիրոջ կամքի և համաձայնության արտահայտման վերաբերյալ հարկ է արձանագրել հետևյալը.

նախ՝ կնքելով գրավի պայմանագիրը՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում իրեն պատկանող գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հնարավոր դադարման վերաբերյալ,

երկրորդ՝ գրավատուն տալիս է իր համաձայնությունը գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում արտադատական կարգով գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորության վերաբերյալ: Ընդ որում, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի՝ նման համաձայնությունը կարող է տրվել ինչպես գրավի պայմանագրով, այնպես էլ գրավատուի և գրավառուի միջև կնքված առանձին համաձայնությամբ,

երրորդ՝ գրավադրված գույքի վրա գրավառուի կողմից արտադատական կարգով բռնագանձում տարածելուց առաջ գրավատուն հնարավորություն ունի կա՛մ միջոցներ ձեռնարկել գրավով ապահովված պարտավորությունը կատարելու համար և դրանով կանխել գրավադրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորուստը, կա՛մ դատական կարգով վիճարկել արտադատական կարգով բռնագանձման օրինականությունը:

Վերոհիշյալ երեք հնարավոր իրավիճակներից առաջին երկուսում (որոնք կարող են համընկնել գրավի պայմանագրում արտադատական կարգով բռնագանձման պայման նախատեսվելու դեպքում) գրավադրվող գույքի սեփականատիրոջ կամարտահայտությունը դրսևորվում է ակ-

տիվ գործողություններով՝ համապատասխան պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, և այդպիսի ակտիվ գործողությունների կատարումը պարտադիր պայման է: Երրորդում սեփականատիրոջ կամքը կարող է արտահայտվել պասիվ գործողությամբ, երբ տեղեկանալով գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձման մասին՝ նա չի ձեռնարկում արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելուն ուղղված՝ օրենքով սահմանված որևէ գործողություն:

Վերջինիս դեպքում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն սեփականատիրոջ իրավունքների ապահովման և արդյունավետ պաշտպանության իրավակարգավորումները:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող հողվածի համատեքստում սեփականության իրավունքի պաշտպանությունը սերտորեն փոխկապակցված է դատական պաշտպանության իրավունքի հետ: Վերլուծելով վիճարկվող հողվածի դրույթները՝ հարկ է առանձնացնել գրավադրված գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքների ապահովման հետևյալ իրավական երաշխիքները.

1) գրավատուի պատշաճ ծանուցումը գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու մասին (բռնագանձման ծանուցում),

2) արտադատական կարգով բռնագանձման օրինականության դատական վիճարկման հնարավորությունը,

3) գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելը գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո,

4) գրավառուի կողմից գրավի առարկայի իրացումը տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

Մյուս կողմից, օրենսգրքի 249-րդ հոդվածը սահմանում է գրավատուի մի շարք պարտականություններ, մասնավորապես՝ դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար»: Այս դրույթը, դիտարկելով ՀՀ Սահմանադրության 10-րդ (Սեփականության երաշխավորումը), 60-րդ (Սեփականության իրավունքը), ինչպես նաև 61-րդ (Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը) և 78-րդ (Համաչափության սկզբունքը) հոդվածների լույսի ներքո, Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն անհամաչափ ծանրաբեռնում է գրավատուի՝ արտադատական կարգով բռնագանձումը կասեցնելու հնարավորությունը, քանի որ կասեցնելու համար պարտավորեցնում է գրավա-

տուին տրամադրել ապահովում ոչ թե գրավառուի հնարավոր վնասների, այլ գրավ դրված առարկայի արժեքի չափով: Մի շարք դեպքերում գրավադրված գույքի արժեքը մի քանի անգամ կարող է գերազանցել ոչ միայն գրավով ապահովված հիմնական պարտավորության, այլ՝ նաև գրավառուի հնարավոր վնասների չափը: Նման իրավակարգավորման պարագայում գրավատուի համար հիմնականում անիրագործելի է դառնում գրավի առարկայի բռնագանձման ընթացքը կասեցնելու վերաբերյալ օրենքով նախատեսված իրավունքի իրացումը:

7. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ և հետապնդում է գրավատուի նաև այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ: Մասնավորապես, ծանուցման պահանջը կոչված է ապահովելու գրավատուի մեկ այլ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 252-րդ հոդվածով սահմանված իրավունքը, որի համաձայն՝ «պարտապանը կամ երրորդ անձ հանդիսացող գրավատուն իրավունք ունի, մինչև գրավի առարկան վաճառելը, ցանկացած ժամանակ դադարեցնել դրա վրա բռնագանձումը և դրա իրացումը՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է: Այդ իրավունքը սահմանափակող համաձայնությունն առջինն է»:

Բացի դրանից, օրենսդրի կողմից գրավառուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության ամրագրումը նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի դատական պաշտպանության իրավունքը:

Այդ առումով, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է կիրառվի վերոնշյալ նորմերով նախատեսված՝ գրավատուի իրավունքների ապահովման համատեքստում, հակառակ դեպքում՝ օրենսդրությամբ գրավատուին ընձեռված բռնագանձման օրինականությունը վիճարկելու կամ բռնագանձումը դադարեցնելու իրավունքների իրականացումն արդյունավետ չի լինի և չի բխի ՀՀ Սահմանադրության պահանջներից:

Մյուս կողմից, օրենսդիրը վիճարկվող հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում որպես պատշաճ ծանուցման հասցեատեր դիտարկում է ոչ թե գրավատուին, այլ պարտապանին: Մասնավորապես՝ «Բռնագանձման ծանուցումը պարտապանին պատշաճ ձևով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաև խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու և դրա անվտանգությունն ապահովելու համար: Բռնագանձման ծանուցումը

պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել»:

Ըստ վերոհիշյալ կարգավորման գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում կատարելու մասին գրավառուն պատշաճ ձևով ծանուցում է և՛ գրավատուին, և՛ պարտապանին, սակայն միայն պարտապանին ծանուցելուց երկու ամիս հետո նա օրենքի ուժով իրավունք է ստանում իրացնելու գրավի առարկան:

Վիճարկվող հոդվածում տարբեր հասցեատերերի՝ գրավատուի կամ պարտապանի օրենսդրորեն ամրագրումը կարող էր և որևէ խնդիր չառաջացնել, եթե գրավատուն և պարտապանը միշտ հանդիսանար միևնույն անձը: Սակայն այլ է իրավիճակը, երբ պարտապանը և գրավատուն չեն համընկնում: Օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Գրավատու կարող է լինել ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը»:

Վիճարկվող հոդվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ, ի տարբերություն գրավով ապահովված պարտավորության պարտապանին ծանուցելու դեպքի, երրորդ անձ գրավատուին ծանուցելու դեպքում բռնագանձման ծանուցումը վերջինիս հանձնելուց մեկ օր հետո գրավառուն ձեռք է բերում գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելու իրավունք:

Հարկ է նշել նաև, որ թեև գրավի պայմանագրի կողմերը՝ գրավատուն և գրավառուն, որպես քաղաքացիաիրավական պարտավորության կողմեր, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն կոչվում են պարտապան և պարտատեր, այնուամենայնիվ, վիճարկվող հոդվածի տրամաբանությունից բխում է, որ պարտապանը հանդիսանում է գրավով ապահովված հիմնական պարտավորության կողմը:

Այդ առումով, օրենսդիրը հստակորեն և միանշանակ չի կարգավորել այն հարցերը, թե գրավատուին ինչ ժամկետում ծանուցելուց հետո գրավառուն կարող է իրացնել գրավի առարկան: Վիճարկվող հոդվածում որևէ խոսք չկա այն գրավատուի կամ գրավատուների մասին, որոնք պարտապան չեն հանդիսանում: Նման կարգավորումները մի շարք խնդիրներ կարող են առաջացնել մարդու սեփականության հիմնարար իրավունքի երաշխավորման տեսանկյունից: Մասնավորապես՝ այդ անորոշության հետևանքով պարտապան չհանդիսացող գրավատուները պարտապան հանդիսացող գրավատուների համեմատ չեն օգտվում իրենց սեփականության պաշտպանության հավասար պայմաններից: Գրավով ապահովված պարտավորությունը չկատարող կամ ոչ պատշաճ կատա-

րող անբարեխիղճ պարտապան-գրավատուն պարտադիր կերպով ծանուցվում է բռնագանձման մասին, որից միայն երկու ամիս անց կարող է նրա գրավադրված գույքն իրացվել, իսկ պարտապան չհանդիսացող գրավատուին նման հնարավորություն կարող է և չտրվել, քանի որ վիճարկվող դրույթում ամրագրված երկամսյա ժամկետն առնչվում է պարտապանին, այլ ոչ թե գրավատուներին: Բացի դրանից, նման կարգավորումը երբորդ անձ հանդիսացող գրավատուին կարող է զրկել գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը դատական կարգով վիճարկելու հնարավորությունից, ինչպես նաև գործնականում կարող է խոչընդոտ հանդիսանալ նաև օրենսգրքի 252-րդ հոդվածում ամրագրված իրավունքի իրականացման համար: Այդ մասին է վկայում նաև ՀՀ վճարելի դատարանի՝ ինչպես 28.11.2014թ. թիվ ԵԿԴ/2013/02/12 դատական գործով, այնպես էլ 27.11.2015թ. թիվ ԵԱԴԴ/0529/02/13 դատական գործով կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ուսումնասիրումը, երբ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու դեպքում գրավատուներին պատշաճ ծանուցելուն:

8. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրական այս դրույթը ներառում է սեփականության իրավունքի իրացման երկու կարևորագույն երաշխիք՝

- Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է սեփականության բոլոր ձևերը, և՛

- Հայաստանի Հանրապետությունը հավասարապես պաշտպանում է սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև, ինչից բխում է, որ օրենքով ամրագրված երաշխիքներից և ընթացակարգերից պետք է օգտվեն համանման իրավիճակում գտնվող բոլոր սուբյեկտները:

Հավասարության սկզբունքը Հայաստանի Հանրապետությունից պահանջում է, որ տարբերություն չդրվի սեփականության նույն ձևի շրջանակներում տարբեր սուբյեկտներին պատկանող սեփականությունը պաշտպանելիս:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացա-

կարգեր»:

Օրենսգրքի վիճարկվող 249-րդ հոդվածը նվիրված է գրավադրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգին, ինչը հանդիսանում է գրավի պայմանագրի միջոցով սեփականատիրոջ՝ օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգ: Սակայն նման ընթացակարգը պետք է լինի իրավաչափ, ինչպես նաև չխախտի օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Ինչպես վիճարկվող դրույթի, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրական կարգավորման անորոշությունը հնարավորություն չի տալիս հստակ հասկանալու, թե պարտապան չհանդիսացող գրավատուն ինչ ընթացակարգային երաշխիքներից է օգտվում բռնագանձման ծանուցման առնչությամբ, ինչն էլ վիճարկվող կարգավորումները երրորդ անձ հանդիսացող գրավատուի առնչությամբ դարձնում է ոչ արդյունավետ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «գրավատու» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ տվյալ իրավահարաբերություններում «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև այդ հարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում «պարտապան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

Խնդիրն այն է, որ «Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո» ձևակերպման բովանդակային ծավալում այլ գրավատուներին չներառելով՝ օրենսդիրն երրորդ անձ հանդիսացող գրավատուի համար հստակ ու միանշանակ չի երաշխավորում այդ երկամսյա ժամկետը, ինչը խախտում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս ամենի արդյունքում երրորդ անձ հանդիսացող գրավատուն կարող է գրկվել ոչ միայն գրավադրված գույքի բռնագանձումը և դրա իրացումը դադարեցնելու իր իրավունքից՝ կատարելով գրավով ապահովված պարտավորությունը կամ դրա այն մասը, որի կատարումը կետանցվել է, այլ՝ նաև բռնագանձման օրինականությունը վիճարկելու իրավունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հա-

յաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ պարբերությունում «գրավատու» եզրույթի այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «գրավատու» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ տվյալ պարբերություններում «պարտապան» եզրույթի այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունում «եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում» բառակապակցությունը՝ այն մասով, որով գրավատուին կարող է պարտադրվել գրավառուի հնարավոր վնասների չափից ավելի ապահովման տրամադրում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 78-րդ հոդվածին հակասող և անվավեր:

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 հուլիսի 2016 թվականի
ՍԴՈ-1294

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի սահմանադրական դատարանի 20-ամյակին նվիրված միջազգային խորհրդաժողովին մասնակցելու համար **սեպտեմբերի 8-ին** Վրաստան մեկնեց ՀՀ սահմանադրական դատարանի պատվիրակությունը, կազմով՝ ՄԴ նախագահ Գ. Հարությունյանի, ՄԴ անդամ Ա. Գյուլումյանի, ՄԴ նախագահի խորհրդական Ա. Վարդեանյանի:

Խորհրդաժողովում ՀՀ ՄԴ նախագահը հանդես եկավ **«Մահմանադրության գերակայության երաշխավորման անցումագիտական առանձնահատկությունները»** թեմայով զեկույցով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՊԱՆԸ ՀՀ ՍԴ-ՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սազանելիձեին:

Այցը ճանաչողական էր, եւ Գ. Հարությունյանը՝ հյուրին շնորհավորելով նոր պաշտոնում ընտրվելու առիթով, ծանոթացրեց ՄԴ գործունեությանը, միջազգային կապերին, որոնցում նկատելի տեղ ունեն հայվրացական, ի մասնավորի՝ Վրաստանի սահմանադրական դատարանի հետ պահպանվող բարձր մակարդակի հարաբերությունները. վրացի գործընկերների հետ կազմակերպվել են համատեղ խորհրդաժողովներ, կատարվել են փոխադարձ այցելություններ:

Պարոն Հարությունյանը դեսպանին հրավիրեց մասնակցելու հոկտեմբերին Երեւանում կայանալիք միջազգային խորհրդաժողովին: Հրավերը սիրով ընդունվեց:

Երկուստեք բարձր գնահատեցին դրացի ժողովուրդների բարեկամությունը՝ պատրաստակամություն հայտնելով ակտիվ փոխգործակցությամբ նպաստել հարաբերությունների էլ ավելի բարելավմանը:

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀՅՈՒՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին Հայաստանում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների պրոֆեսորներ **Ռոբերտ Էլիսոնը** եւ **Ջեյ Ռակովը** հյուրընկալվեցին ՀՀ սահմանադրական դատարանում: Հանդիպման եւ քննարկումների առանցքը ԱՄՆ անկախության Հռչակագրի 240-ամյակի շրջանակներում ամերիկյան սահմանադրականության հիմնահարցերն էին:



Պարոն Հարությունյանը ողջունեց հյուրերին, փոխադարձաբար ներկայացրեց հանդիպման մասնակիցներին, գոհունակություն հայտնեց հրավերը ընդունելու համար: Նա կարեւորեց այս հանդիպումը, որ հաճելի առիթ է արժեւորելու 1776 թվականին ընդունված Միացյալ Նահանգների անկախության Հռչակագիրը:

Հյուրերը, հարց ու պատասխանի, ակտիվ քննարկման շրջանակներում, ներկայացրեցին իրենց մոտեցումները Հռչակագրին, նրա դերին ու դերակատարությանը, սահմանադրական զարգացումներին, ամերիկյան ժողովրդավարությանը:

ՖԻԼԻՊ ԲՈՒԱՅԻԱՆ ՀՀ ՄԴ-ՈՒՄ

Հոկտեմբերի 19-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն **Ֆիլիպ Բուայիային**, ով Հայաստանում է ՀՀ սահմանադրական դատարանի հրավերով մասնակցելու երեւանյան միջազգային խորհրդա-ժողովին:



Զրուցակիցները քննարկեցին կոնֆերանսի կազմակերպման, «Սահմանադրական Մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հիմնադրման, Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումներից հետո իրականացվող օրենսդրական բարեփոխումների եւ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության հետ կապված մի շարք հարցեր:

Պարոն Բուայիան վերահաստատեց Հայաստանի Հանրապետությունում իրավական ոլորտում ընթացող բարեփոխումներին ակտիվորեն աջակցելու Եվրոպայի խորհրդի պատրաստակամությունը:

Հանդիպմանը մասնակցում էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 21-ին իր աշխատանքը սկսեց ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրախորհրդի Վենետիկի Հանձնաժողովի կազմակերպած Երեւանյան միջազգային խորհրդաժողովը:

Կազմակերպիչներ ՀՀ սահմանադրական դատարան, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Նոր ժողովրդավարության երկրների սահմա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

նադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս, ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն:

Աջակցությամբ՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի:

Թեմաները

1.«Վենետիկի հանձնաժողովի 106-րդ լիազուամար նիստում ընդունված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկի» դերը և նշանակությունը համակարգային սահմանադրական մշտադիտարկման իրականացման գործում»:

2.«Սահմանադրական դատարանի դերն օրենքի բացի և իրավական անորոշության հաղթահարման գործում»:

Համաեվրոպական միջազգային այս խորհրդաժողովը սկզբից նախատեսված էր անցկացնել Ստրասբուրգում, բայց քանի որ նախաձեռնությունը ՀՀ սահմանադրական դատարանին էր, եւ հայեցակարգն էլ ներկայացված էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի կողմից, որոշվեց այն անցկացնել Հայաստանում: Շատ ներկայացուցչական է Խորհրդաժողովի մասնակցությունը՝ երեսուն երկրի պատվիրակություններ, եւ Եվրախորհրդի ամբողջ ղեկավար կազմն է ներգրավված այս խնդրում: Սահմանադրական ճգնաժամի եւ սահմանադրականության առումով բավականին տագնապալի է վիճակը շատ երկրներում, ուր խնդրահարույց շատ պրոբլեմներ կան: Հայեցակարգային մոտեցումներ առաջարկվեցին այդ խնդիրները կանխարգելելու եւ լուծելու համար: Սահմանադրական մշտադիտարկման հայեցակարգերը լուրջ քննության առարկա դարձան Վենետիկի հանձնաժողովի լիազուամար նիստում, ապա եւ գիտական խորհրդում: Եվ ահա հետետությունը՝ միջազգային խորհրդաժողով կազմակերպել Երեւանում՝ լրջորեն քննարկելու հիմնախնդիրը:

Խորհրդաժողովում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը:

Խորհրդաժողովին **տեսաուղերձներ էին** հղել Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թյորբորն Յագլանդը եւ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախագահ Գուիդո Ռայմոնդին:

Ողջունի խոսքերով հանդես եկան՝

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն Ֆ. Բուայիան, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գիտական խորհրդի նախագահ, Օսլոյի համալսարանի պրոֆեսոր Յ. Հելգեսենը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանը:

Առաջին օրվա նիստում քննարկման դրվեց հետեւյալ թեման՝ **«Վենետիկի հանձնաժողովի 106-րդ լիազուամար նիստում ընդունված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկի» դերը և նշանակությունը**

համակարգային սահմանադրական մշտադիտարկման իրականացման գործում»:



Առաջին նիստը նախագահեց Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն **Ֆ. Բուայիան**:

Նախ լսվեց Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ **Գ. Հարությունյանի** հայեցակարգային զեկույցը՝ «Սահմանադրական մշտադիտարկումը որպես սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման երաշխիք»:

Զեկույցումներով հանդես եկան՝

Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գիտական խորհրդի նախագահ, Օսլոյի համալսարանի պրոֆեսոր **Յ. Հելգեսենը**՝ «Իրավունքի գերակայության սկզբունքը և դրա գործնական կիրառումները», Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր (Գերմանիա), 5-րդ սեկցիայի նախագահ **Անգելիկա Նուսբերգերը**՝ «Իշխանությունների տարանջատման մոդելը Հայաստանի նոր սահմանադրությունում և Գերմանիայի Մայր օրենքում. նմանություններ և տարբերություններ», Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի փոխարինող անդամ Ուկրաինայից **Ս. Հոլովատին**՝ «Իրավունքի գերակայության հայեցակարգը և դրա ընկալման բարդությունները հետխորհրդային իրավական մշակույթում»:



Երկրորդ նիստը նախագահում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գ. Հարությունյանը**:

Զեկուցումներով հանդես եկան՝

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն **Ֆ. Բուայիան** «Իրավունքի գերակայության սկզբունքի իրացումը պետության կողմից իր քաղաքականությունն իրականացնելիս», Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր (Հայաստան) **Ա. Հարությունյանը** «Սահմանադրականության ինդիքները Հայաստանի Հանրապետությունում վերջին սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը»: Ֆինլանդիայի գերագույն վարչական դատարանի դատավորներ տիկին **Է. Միտարիի** և պարոն **Պ. Հելանդերի** համատեղ զեկուցումը՝ «Համակարգային սահմանադրական մշտադիտարկման տեղը և դերը սահմանադրական վերահսկողության համակարգի կատարելագործման և սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման գործում» ներկայացրեց Պ. Հելանդերը: Ապա հանդես եկան Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր (Լատվիա) **Մ. Միցը** «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դերը սահմանադրական արդարադատության ամրապնդման գործում. Լատվիայի փորձը» եւ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան **Հ. Սարգսյանը** «Սահմանադրական ախտորոշման գործիքակազմի ու իրականացման մեթոդների մշակման որոշ մոտեցումներ»:

Հարցերով ու քննարկումներով ավարտվեց երկրորդ նիստը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 5-6(83-84)2016

Ընդմիջումից հետո խորհրդաժողովը շարունակեց իր աշխատանքը:



Երրորդ նիստը նախագահում էր Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր (Գերմանիա), 5-րդ սեկցիայի նախագահ **Անգելիկա Նուսբերգերը**:

Զեկույցներով հանդես եկան՝

Ռուսաստանի Դաշնության ՄԴ անդամ **Ն. Բոնդարը**՝ «Իրավական բացերը որպես սահմանադրաիրավական արատաբանության կատեգորիա. հաղթահարման դատական պրակտիկայի ուսումնասիրման մեթոդաբանությունը», Խորվաթիայի ՄԴ դատավոր **Մ. Ելուշիչը**՝ «Սահմանադրական մշտադիտարկման դերը սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման գործում», Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր (Իսլանդիա) **Ռ. Սպանոն**՝ «Սուբսիդիարության սկզբունքը և սահմանադրական ավանդույթները Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում», Ուկրաինայի սահմանադրական դատարանի դատավոր **Մ. Վդովիչենկոն**՝ «Ուկրաինայի սահմանադրական դատարանի գործունեության մեջ նախորդ խմբագրությամբ օրենքների նորմերի գործողության վերականգնման դրկտրինը»:

Հարցերով եւ քննարկումներով խորհրդաժողովն ավարտեց հոկտեմբերի 21-ի նիստերը:

ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ

Հոկտեմբերի 21-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի անունից կառավարության ընդունելությունների տանը կազմակերպվեց ընդունելություն՝ ի պատիվ ՀՀ սահմանադրական դատարանի, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսի, ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի (աջակցությամբ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի) կազմակերպած երեսույան միջազգային խորհրդաժողովի մասնակիցների:

Ընդունելությանը կայացավ «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոն» հիմնադրամի հիմնման հանդիսավոր արարողությունը:



Կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունն ու հիմնական գործառույթները ներկայացրեց նախաձեռնության հեղինակը՝ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը:

Կենտրոնի ստեղծման գաղափարը մեծ արձագանք է գտել եւ համագործակցության առաջարկ ստացել միջազգային մի շարք վերլուծական կենտրոնների ու առանձին փորձագետների կողմից: Վերջիններիս լայն ընդգրկմամբ Կենտրոնը կիրականացնի իր գործառույթները: Մասնավորապես՝

- սահմանադրական մշակույթի հիմնահարցերի վերաբերյալ վերլուծական աշխատանքների

ծավալում, միջազգային խորհրդաժողովների, գիտագործնական քննարկումների կազմակերպում,

- տարբեր երկրներում սահմանադրականության ախտորոշման ու սահմանադրական մշտադիտարկման գործուն համակարգերի ներդրման գործառույթային ու կառուցակարգային կազմակերպում,

- առանձին երկրներում սահմանադրական մշակույթի իրական վիճակի վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստում ու հրապարակում,



- այս ոլորտում միջազգային ու տարածաշրջանային տարբեր կազմակերպությունների հետ ակտիվ գործակցություն,
- սահմանադրական մշակույթի արմատավորման ու արագացման հարցում աջակցություն քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, երիտասարդական փառատոնների եւ օլիմպիադաների անցկացում,
- «Սահմանադրական մշակույթ» բազմալեզու հանդեսի հրատարակում:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ - ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Հոկտեմբերի 22-ին իր աշխատանքը շարունակեց ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրախորհրդի Վենետիկի Հանձնաժողովի կազմակերպած Երևանյան միջազգային խորհրդաժողովը:
Խորհրդաժողովի երկրորդ թեման էր՝ **«Սահմանադրական դատարանի դերն օրենքի բացի և իրավական անորոշության հաղթահարման գործում»:**

Առաջին նիստը նախագահում էր Տաջիկստանի սահմանադրական դատարանի նախագահ **Մ. Մախմուդզոդան**:



Զեկույցներով հանդես եկան՝

Պորտուգալիայի սահմանադրական դատարանի փոխնախագահ **Ժ. Կոպերսը**՝ «Սահմանադրական դատարանի որոշման դերը և կարևորությունը օրենսդրական բացերի և իրավական անորոշության հաղթահարման գործում (տարբեր երկրների փորձը)»:

Ղրղզստանի սահմանադրական պալատի անդամ **Մ. Բորուկենան**՝ «Սահմանադրական պալատի որոշումների դերը և նշանակությունը օրենսդրական բացերի և իրավական անորոշության հաղթահարման գործում»:

Բելառուսի սահմանադրական դատարանի անդամ **Տ. Վորոնովիչը**՝ «Սահմանադրական արդարադատության դերը սահմանադրաիրավական կարգավորման բացերի և իրավական անորոշության վերացման գործում»:

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ **Ֆ. Թոխյանը**՝ «Սահմանադրական դատարանի որոշումների դերը և նշանակությունը օրենսդրական բացերի և իրավական անորոշության հաղթահարման գործում (ՀՀ ՄԴ փորձը)»:

Հարցերով և քննարկումներով ավարտվեց առաջին նիստը:

Երկրորդ նիստը նախագահում էր Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գիտական խորհրդի նախագահ **Յ. Հելգեսեն**:

Ջեկուցումներով հանդես եկան՝

Տաջիկստանի սահմանադրական դատարանի նախագահ Մ. Մախմուդզոդան՝ «Տաջիկստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների դերը և նշանակությունը օրենքի բացերի և իրավական անորոշության հաղթահարման գործում»:

Լատվիայի սահմանադրական դատարանի անդամ **Դ. Ռեզեսկան**՝ «Լատվիայի սահմանադրական դատարանի որոշումների նշանակությունը օրենսդրական բացերի լրացման գործում»:

Սլովենիայի սահմանադրական դատարանի անդամ **Յ. Զոբեկը**՝ «Հակասահմանադրական իրավական բացի հայեցակարգը համաձայն Սլովենիայի սահմանադրական դատարանի իրավական պրակտիկայի»:

Ղազախստանի սահմանադրական խորհրդի անդամ **Վ. Մալինովսկին**՝ «Սահմանադրական խորհրդի դերը Ղազախստանի Հանրապետության հիմնական օրենքի հասկացությային ապարատի ճշգրիտ օգտագործումն ապահովելու գործում՝ որպես իրավական անորոշությունների կանխարգելման հիմնական միջոց»:

Խորհրդաժողովում ներկայացված զեկուցումների շուրջ բաց քննարկումներից հետո կայացավ խորհրդաժողովի աշխատանքների ամփոփում:



...Մշակությային միջոցառումների շրջանակներում, խորհրդաժողովի մասնակիցներն այցելեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, «Զվարթնոց»

պատմամշակութային թանգարան, Մատենադարան, «Մեզերյան կարպետ» ցուցասրահ, Հայոց Ցեղասպանության հուշահամալիր, Հաղարծին վանական համալիր, Գառնի եւ Գեղարդավանք: Գեղարդավանքի վիմափոր եկեղեցում հյուրերի համար տրվեց հոգևոր երաժշտության համերգ:



ՀՅՈՒՐԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ



Նոյեմբերի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան այցելեց Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական Հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) պատվիրակությունը, կազմով՝ Ռիչարդ Բարեթ (Վենետիկի հանձնաժողովի անդամ, Իռլանդիա), Սրդժան Դարմանովիչ (Վենետիկի հանձնաժողովի անդամ, Չեռնոգորիա), Միմոնա Գրանատա-Մենդինի (Վենետիկի հանձնաժողովի քարտուղարի տեղակալ), Ամայա Ուբեդա դե Տորես (Վենետիկի հանձնաժողովի քարտուղարություն), Տիմո Կնաեբե (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ իրավական փորձագետ), Լորետա Վիոու (Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ):

Պատվիրակությունը Վենետիկի հանձնաժողովի լիազումարի նիստին նախապատրաստում է կուսակցությունների մասին ՀՀ օրենքի քննարկումը:

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՀ Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված այն ընթացակարգերը, որոնցով կարող են կասեցվել կուսակցությունների գործունեությունը կամ արգելվել կուսակցությունները, ինչպես նաև կուսակցությունների մասին 2006 թվականին ընդունված օրենքի սահմանադրականության վերաբերյալ ընդունված որոշման հետ կապված մի շարք այլ հարցեր:

ՀԱՄԱԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 23-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց ԵՄԽՎ մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Ալան Միլին եւ Ջուզեպպե Գալատիին:



Հյուրերը հետաքրքրվեցին ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների եւ դատավարական հարցերի հետ կապված հնարավոր փոփոխություններով, հարցրին, թե սահմանադրական բարեփոխումներն ուժի մեջ մտնելուց հետո Սահմանադրական դատարանը, լիազորությունների առավել ընդլայնված օբյեկտների պայմաններում, ինչպե՞ս է նախապատրաստվում սահմանադրական արդյունավետ վերահսկողություն իրականացնել: Նաեւ հետաքրքրվեցին, թե ի՞նչ ընթացքի մեջ են օրենսդրական զարգացումները՝ հայտնելով իրենց պատրաստակամությունը Հայաստանին աջակցելու հետագա բարեփոխումների ընթացքում:



Բոլոր հարցերի վերաբերյալ տրվեցին համապատասխան պարզաբանումներ:

ՄԴ մամուլի ծառայություն

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-588-171
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 28.11.2016թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՄԴ տեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 5-6(83-84)2016
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 5-6(83-84)2016
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 5-6(83-84)2016